Ծրագրի շրջանակներում կազմակերպված երկու գիտաժողովների և չորս աշխատանքային քննարկումների ընթացքում արծարծված կարևոր խնդիրներից էր «զանգվածային լրատվամիջոց» հասկացության հստակեցումը, որն անհրաժեշտ է կարգավորման թեման և առարկան որոշակիացնելու համար: Այս իմաստով, համացանցի՝ ներառյալ սոցիալական ցանցերի միջոցով տարածվող վիդեո և աուդիո արտադրանքի, ինչպես նաև այլ բովանդակության կարգավիճակը սկզբունքորեն կարևոր է լրատվամիջոցների ոլորտում

հարաբերությունների իրական և արդյունավետ կարգավորման համար:

Այդ թվում՝ կարգավորման առարկայի սահմանումը կարևորագույն նշանակություն ունի զանգվածային տեղեկատվական գործունեության սուբյեկտների սեփականության և ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության սկզբունքի իրականացման համար մոտեցումների մշակման գործում: Այստեղ կարևոր է հստակ սահմանազատել նրանց, ում վրա դրվում են համապատասխան պարտավորությունները և նրանց, ում դրանք անմիջականորեն չեն առնչվում: Պակաս կարևոր չէին նաև քննարկումները թափանցիկության սկզբունքի իրագործման այն մեխանիզմների շուրջ, որոնք կիրառելի են հայաստանյան լրատվամիջոցների ինդուստրիայում և շուկայում տիրող առանձնահատուկ իրավիճակում: Շատ օգտակար էին նաև պաշտոնական տեղեկատվության մատչելիության և լրագրողների ու զանգվածային հաղորդակցության այլ սուբյեկտների համապատասխան իրավունքների կարգավորմանը, ինչպես նաև պետական մարմինների հետ նրանց փոխգործակցության ընթացակարգերին առնչվող կարծիքների փոխանակումը և համապատասխան հայեցակարգային դրույթների ձևակերպումը:

Ծրագրի օրակարգում ընդգրկված մի շարք փոխկապակցված թեմաներ նպաստեցին, որ մասնակիցների մոտ ձևավորվի լրատվամիջոցների ոլորտում պահանջված ինստիտուցիոնալ

բարեփոխումների ամբողջական պատկերը: Այս իմաստով, արժե կրկնել, որ ծրագիրը խիստ արդիական էր, և ես շնորհակալություն եմ հայտնում մեր գերմանացի գործընկերներին և փորձագետներին համատեղ հաջողված աշխատանքի համար:

Բորիս Նավասարդյան
Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նախաբան

Հասարակությունների և իրավակարգերի առջև ծառացած այն մարտահրավերները, որոնք առաջ են բերել թվայնացումը և տեխնիկական ու դրան հաջորդած բովանդակային կոնվերգենցիան, բնավ էլ հաղթահարված չեն: Այս եզրակացությունը զարմանալի չէ նրանց համար, ովքեր թեկուզև մակերեսայնորեն զբաղվում են «@Մեդիա հանրույթ. Հայաստան 2019» ծրագրում քննված թեմաներով:

Այնուամենայնիվ, հենց այս փաստն է, իմ կարծիքով, ՁԼՄ-ների կարգավորման հարցը կատարյալ առարկա դարձնում զարգացման միտված ցանկացած համագործակցության համար: Քանի որ տեխնիկական առաջընթացը և մեդիայի հարցերի կարգավորման ոլորտում գերազանցապես այդ առաջընթացով պայմանավորված ժամանակակից երևույթներն ու խնդիրներն ամբողջ աշխարհում հիմնականում գրեթե նույնն են, հենց այստեղ է, որ միջազգային փոխանակումները կարող են էական արդյունքների հանգեցնել: Եթե նույն մարտահրավերին նայենք մշակութային, պատմական ու նաև իրավական տարբեր նախապայմանների տեսանկյունից, ապա, որպես կանոն, բոլոր մասնակիցների համար կբացվի մեկ այլ՝ մինչ այդ անհայտ հեռանկար:

Այդպես այս հրապարակումը վերջին խոսքը չի լինի և ոչ մի հարցում: Բայց այն յուրաքանչյուր ընթերցողի նոր գաղափարներ կտա որոշ հարցերի վերաբերյալ՝ այդպիսով նրան մասնակից դարձնելով այս Ծրագրի շրջանակում ձեռք բերված արդյունքներին:

Ծրագրի հայ մասնակիցներին մաղթում եմ, որ աշխատանքային խմբերի՝ մասամբ արտասովոր կազմի և գերմանացի փորձագետների լրացուցիչ տեսակետների շնորհիվ արված եզրահանգումները և արտահայտված դիրքորոշումները օգտակար լինեն Հայաստանում կատարվող քաղաքական աշխատանքում:

Սրտանց շնորհակալություն եմ հայտնում բոլոր մասնակիցներին կառուցողական համագործակցության համար: Հատուկ շնորհակալություն Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամին՝ի դեմս Ծրագրի պատասխանատու Ամալիա Վուքերտի, Հայաստանում ծրագրերի համակարգող Նելլի Թումասյանի և Ծրագրի ոլորտային ղեկավար Ֆրանկ Հուպֆելդի: Ցանկանում եմ իմ շնորհակալությունը հայտնել նաև Երևանի մամուլի ակումբին՝ի դեմս Արևհատ Գրիգորյանի և Բորիս Նավասարդյանի, ինչպես նաև դոկտոր, պրոֆեսոր Բերնդ Հոլցնագելին և դոկտոր Ֆրեդերիկ Ֆեռոյին:

Թոմաս Վիերնի
Սահմանադրական իրավունքի
և մեդիա փորձագետ, խորհրդատու

Մեկնարկային միջոցառման նյութեր

Շուշան Դոյդոյան
Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ նախագահ
ԵՊՀ դոցենտ, ԲԳԹ

Արդյո՞ք անհրաժեշտ է թափանցիկությունը

(ԶԼՄ-ների հրապարակայնությունն ու ֆինանսական թափանցիկությունը Հայաստանում)

ԶԼՄ-ների ֆինանսական թափանցիկությունն ու հաշվետվողականությունը առաջնային նշանակություն ունեն այսօր: Թափանցիկությունը ժողովրդավարական մեդիա համակարգի առանցքային բաղադրիչն է: Այն ԶԼՄ-ների հանդեպ հանրային վստահության բարձրացման կարևոր նախապայման է: Թափանցիկությունը նաև նպաստում է մամուլի պատասխանատվության բարձրացմանը և պատասխանատու խոսքի տարածմանը: Կարծում եմ, ԶԼՄ-ների թափանցիկության հարցը պետք է անհանգստացնի բոլոր ԶԼՄ-ներին, հաշվի առնելով նրանց հանդեպ վստահության համընդհանուր անկումը և ապատեղեկատվության գրոհը, որից դժգոհում են բոլորը՝ և՛ լրագրողները, և՛ կառավարությունը, և՛ հասարակությունը:

ԵԽ նախարարների խորհուրդը 2018թ. ընդունել է հատուկ հանձնարարական մեդիա թափանցիկության վերաբերյալ, որը կարող է ուղենշային դառնալ այս ոլորտի բարեփոխումների իրականացման համար: Մասնավորապես, ԵԽ հանձնարարականը նշում է, որ պետությունները պետք է խթանեն

ՁԼՄ-ների թափանցիկության ռեժիմը, որն ապահովում է լրատվամիջոցների իրական սեփականատերերի, ինչպես նաև բոլոր այն շահերի մասին ճշգրիտ, արդիական տեղեկություններ ստանալու՝ հասարակության իրավունքի իրացումը, որոնք կարող են ազդել մեդիայում ռազմավարական որոշումների կայացման վրա:

Այս տեղեկատվությունն անհրաժեշտ է նաև լրատվամիջոցները կարգավորող և համապատասխան այլ մարմինների համար, որպեսզի կարողանան կայացնել տեղեկացված և հիմնավոր որոշումներ: Այն նաև հնարավորություն է տալիս հասարակությանը վերլուծել և գնահատել լրատվամիջոցների տարածած տեղեկատվությունը, գաղափարները և կարծիքները: Հասարակությունն իրավունք ունի իմանալու, թե ով է ֆինանսավորում այս կամ այն լրատվամիջոցը:

Հաշվի առնելով, որ ՁԼՄ-ների առանցքային խնդիրը իշխանություններին պատասխանատու դարձնելն է, ուստի քաղաքական կուսակցությունների կամ քաղաքականության մեջ ակտիվ ներգրավված անձանց կողմից լրատվամիջոցների սեփականատեր լինելը նույնպես պետք է ենթարկվի խիստ ստուգումների և հավասարակշռման:

ԵԽ հանձնարարականը հատուկ պարտավորություն է սահմանում ՁԼՄ-ների համար հրապարակելու իրենց իրական սեփականատերերի և ֆինանսական աղբյուրների մասին

տվյալները՝ այսպիսով պատասխանատու լինելով հանրության առջև: Հանձնարարականը նշում է տեղեկությունների այն նվազագույն ծավալը, որը պետք է պարտադիր հրապարակման ենթակա լինի ՁԼՄ-ների կողմից: Ի թիվս այլնի՝ նշելով նաև ուղղակի սեփականատերերի անուններն ու կոնտակտային տվյալները, մասնավորապես այն բաժնետերերի, որոնք տվյալ բիզնեսում ունեն 5 և ավելի տոկոս մասնակցություն: Ինչպես նաև պարտավորություն է սահմանում հրապարակել իրական սեփականատերերի անուններն ու կոնտակտային տվյալները:

Ո՞վ է իրական սեփականատերը. համաձայն ԵԽ հանձնարարականի՝ ցանկացած ֆիզիկական անձ, որն ի վերջո տիրապետում կամ վերահսկում է լրատվամիջոցի բաժնետոմսերը, ինչը հնարավորություն է տալիս նրան անուղղակիորեն վերահսկել կամ ազդեցություն ունենալ ՁԼՄ-ների գործունեության և ռազմավարական որոշումների կայացման վրա:

ՁԼՄ-ների ֆինանսական թափանցիկության ապահովմանն ուղղված լավագույն քայլը դաշտում իրական սեփականատերերի բացահայտման խնդիրը լուծելն է:

Բաց կառավարման գործընկերության շրջանակում 2018թ. նոյեմբերին ընդունված ՀՀ կառավարության գործողությունների 4-րդ ծրագիրը ներառում է հատուկ հանձնառություն, որով կառավարությունը ստանձնել է պարտավորություն՝ ապահովել

բիզնեսի բոլոր ճյուղերի իրական սեփականատերերի հրապարակայնությունը հանրային բաց ռեգիստրի ստեղծման միջոցով: Արդեն իսկ 2019թ. ապրիլի 23-ին ՀՀ Ազգային ժողովը միաձայն ընդունեց իրական սեփականատերերի ռեեստրի ստեղծմանն ուղղված օրենսդրական փաթեթը: Շատ կարևոր է, որ և՛ հանձնառությունը, և՛ օրենսդրական կարգավորումները վերաբերելի են բիզնեսի բոլոր ճյուղերին՝ առանց բացառության: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն այսպիսով լիովին կիրառելի է մեդիա դաշտի նկատմամբ՝ իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման մասով, քանի որ այս օրենքը վերաբերում է բոլոր իրավաբանական անձանց և ըստ գործունեության ոլորտների բացառություն չի նախատեսում:

Որպես պիլոտային ծրագիր՝ իրական սեփականատերերի բացահայտման խնդիրը առաջինը ՀՀ-ում կլուծվի հանքարդյունաբերող ընկերությունների պարագայում, և այն, որպես դրական օրինակ, կարծում եմ, լիովին կիրառելի է մեդիա ոլորտի համար:

Ի՞նչ խնդիրներ է անհրաժեշտ լուծել այս նպատակին հասնելու համար.

- ԶԼՄ օրենսդրական սահմանում. կարևոր առաջնային հարցերից է ԶԼՄ-ի սպառիչ և համընդգրկուն սահմանումը: Սա առանցքային հարց է, քանի որ հենց այդ սահմանումից է կախված, թե որ կազմակերպությունների վրա կտարածվի օրենքի պահանջը: Որոշ օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն ևս կա: Օրինակ, անհրաժեշտ է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում սահմանել ԶԼՄ-ների պարտավորությունը իրական սեփականատերերի տվյալները հայտարարագրելու, ինչպես նաև ապահովելու ֆինանսական աղբյուների թափանցիկությունը:

- Տվյալների իսկություն և ճշրգրտություն. ինչպես համոզվել, որ հայտարարագրած տեղեկությունները ճշգրիտ են և ամբողջական: Հայաստանում անհրաժեշտ է ներդնել ստուգման գործուն մեխանիզմ, որը գտնելը ամենակարևոր և սկզբունքային հարցերից է ոչ միայն Հայաստանում, այլ նաև ողջ աշխարհում: Կարծում եմ, ստուգման լավագույն մեխանիզմը պետք է լինի հանրային վերահսկողությունը. լրագրողները ու քաղաքացիական հասարակության մյուս խմբերը պետք է պարբերաբար մշտադիտարկման ենթարկեն հայտարարագրված կազմակերպություններին և ոչ ճշգրիտ տվյալներ պարզելու դեպքում դրանք հրապարակայնացնեն:

- Առկա մարտահրավերներից է անհանգստությունը, որ իրական սեփականատերերի բացահայտումը կարող է սպառնալ պոտենցիալ ֆինանսավորողներին, նրանք գուցե ձեռնպահ մնան ֆինանսավորումը շարունակելուց հրապարակայնության նման նախաձեռնության արդյունքում: Այս հարցին շաղկապվող մյուս մարտահրավերը որոշ լրատվամիջոցների կողմից դրսևորվող հակազդեցությունն է, որը պայմանավորված է իրենց՝ ֆինանսավորողների աջակցությունից զրկվելու մտավախությամբ: Այս խնդիրները, կարծում եմ, մամուլին կարող են սպառնալ գործընթացի միայն առաջին փուլում, մինչդեռ հետագայում կներգրավվեն առավել վստահելի, կայուն և մեծ ռեսուրսներ տնօրինող միջազգային ներդրողներ, որոնց համար առաջնայինը հենց կազմակերպության ֆինանսական թափանցիկությունն է և արդար մրցակցային պայմաններում գործող բիզնեսը:

- Պատասխանատվության հարցը ևս առանցքային է: Կարծում եմ, կեղծ տվյալներ հայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը պետք է առաջ բերի խիստ պատասխանատվություն՝ ներառյալ քրեական: Լիցենզավորվող հեռուստառադիոընկերությունների պարագայում լավագույն մեխանիզմը կլինի լիցենզիան կասեցնելը, իսկ կրկնելու դեպքում՝ լիցենզիայից զրկելը: Նմանատիպ իրավական կարգավորում անհրաժեշտ է նախատեսել նաև «Հեռուստատեսության և ռադիոյի

մասին» ՀՀ օրենքում՝ լիցենզիայի կասեցման կամ դադարեցման հիմքերում հավելելով նաև իրական սեփականատերերի մասին հայտարարագիր չներկայացնելը կամ կեղծ տվյալներ ներկայացնելը որպես լիցենզիայի գործողության դադարեցման կամ կասեցման հիմք, եթե չի կատարվում հեռուստառադիոընկերությունների իրական սեփականատերերի և դրանց փոփոխման վերաբերյալ համապատասխան տեղեկատվության՝ լիազոր մարմին ներկայացնելու պարտավորությունը: Սակայն ցանցային կամ տպագիր ԶԼՄ-ներն ընդհանրապես չեն լիցենզավորվում և գրանցման ենթակա չեն, ինչը շատ լավ է, սակայն անհրաժեշտություն կա մեխանիզմ ներդնելու այս ԶԼՄ-ների կեղծ հայտարարագրման դեպքում առաջ եկող պատասխանատվության համար:

- Վերահսկողություն. սա ամենացավոտ հարցն է մեդիայի պարագայում, քանի որ պետական վերահսկողության ցանկացած փորձ ի վերջո կարող է պարունակել միջամտության վտանգ, հնարավորություն: Կարծում եմ, այստեղ ևս վերահսկողական մեծ դեր կարող է ստանձնել քաղաքացիական հասարակությունը, քանի որ վերահսկողության բացակայությունն այս ոլորտում կարող է հանգեցնել ձևականության, ի վերջո, գործընթացի ձախողման:

Նշեմ նաև, որ ներկայումս մշակվում է «Իրական սեփականատերերի էլեկտրոնային ծրագրի» տեխնիկական նկարագիրը, և աշխատանքներ են իրականացվում հարթակի ներդրման ուղղությամբ: Ուստի, համապատասխան օրենսդրական փոփոխությունները կատարելուց հետո ՁԼՄ-ները կարող են արդեն սկսել իրենց իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հայտարարագրման ***կամավոր*** գործընթացը:

Ես համոզված եմ, որ ՁԼՄ-ների իրական սեփականատերերի հրապարակայնության և թափանցիկության հարցում մենք երկու տարի հետո ունենալու ենք ամենալավ և օրինակելի փորձը, քանի որ և՛ կառավարության, և՛ քաղհասարակության կողմից կա հանձնառություն և շահագրգռվածություն:

Հայաստանը կարող է և կդառնա ոլորտում փորձ արտահանող երկիր, քանի որ արդեն իսկ դրա նախադրյալները կան:

Ֆրեդերիկ Ֆեռո
Դոկտոր, Քյոլնի համալսարան

Արդյո՞ք հնարավոր է կարծիքի ազատ ձևավորում ԶԼՄ-ների թափանցիկության միջոցով

Թափանցիկություն նշանակում է հստակություն, հասկանալիություն և ճանաչելիություն: Դրա տակ պետք է նկատի ունենալ տեղեկությունների մատչելիություն՝ որոշակի գործընթացներ ավելի լավ հասկանալու համար: Այս իմաստով (ավելի շատ) թափանցիկության պահանջն առաջին հերթին ուղղված է քաղաքական գործիչներին: Քաղաքացիների համար բավական չէ մեկ անգամ ընտրել իրենց ներկայացուցիչներին և դրանից հետո նրանց թողնել պետությունը ղեկավարելու գործը: Նրանք ցանկանում են մշտապես հասկանալ քաղաքական գործիչների որոշումների շարժառիթները: Արդյո՞ք վերջիններս ղեկավարվել են հասկանալի ենթադրություններով և փաստերով: Կամ գո՞ւցե որոշման կայացումը հիմնավորվել է գործի էությանը չվերաբերող փաստարկներով: Խոսքն ամենից առաջ այն դեպքերի մասին է, երբ որոշումների կայացման գործընթացի վրա ազդեցություն են ունեցել ընդհանուր շահեր ունեցող անձանց որոշակի խմբեր, ասենք, այն պատճառով, որ որոշումներ կայացնողներն անձամբ կամ տնտեսական առումով այդ խմբերից կախվածության մեջ են: Որքան ավելի թափանցիկ է լինում քաղաքական որոշումների կայացման գործընթացը, այնքան ավելի դժվար է լինում քաղաքական գործիչների համար քողարկել իրենց՝ հարցի էությանը չառնչվող ազդեցությունը:

Որևէ քաղաքական գործիչ չի կարող իրեն թույլ տալ համարվել լոբբիստների կողմից «գնված խամաճիկ»: Այդ իսկ պատճառով նա ամեն ձևով կփորձի խուսափել հասարակայնության վրա նման տպավորություն թողնելուց: Հետևաբար, քաղաքական գործընթացների թափանցիկությունը քաղաքական գործիչներին կարգապահ դարձնելու միջոց է: Եվ այս կերպ թափանցիկությունն ապահովում է քաղաքացիների վստահությունն իրենց պետության հանդեպ:

Բայց ժողովրդավարական հասարակությունում թափանցիկությունն իր այս գործառույթը կարող է կատարել միայն այն դեպքում, եթե գործի էությանը չառնչվող ազդեցություններից զերծ լինեն նրանք, ովքեր պետք է վերահսկեն քաղաքական գործիչների գործողությունները, այն է՝ լրատվամիջոցները: «Ժողովրդավարության պահապան շան» իրենց հանրային գործառույթը նրանք կարող են կատարել սոսկ այն դեպքում, եթե մնան պետությունից բավարար հեռավորություն վրա: Միայն այդ դեպքում է, որ քաղաքացիները վստահում են այս կամ այն լրատվամիջոցին: Վստահությունը ՁԼՄ-ների համար կարևորագույն արժեքներից է: Քաղաքացիների վստահությանն արժանանալու համար դրանց պետք է ներկայացվեն թափանցիկության բարձր պահանջներ՝ համեմատելի այն պահանջների հետ, որոնք ներկայացվում են այն անձանց, ում մասին լրատվամիջոցները հաղորդում են:

Ստորև ես կներկայացնեմ Եվրոպայում ընդունված՝ թափանցիկության մի շարք կանոններ և միաժամանակ կանդրադառնամ այն հարցին, թե դրանք իրականում որքանով են պիտանի լրատվամիջոցների թափանցիկությունն ապահովելու համար: Իմ ելույթի վերնագրում ես այն հարցն եմ բարձրացրել, թե արդյո՞ք լրատվամիջոցների թափանցիկությունը հնարավոր է դարձնում կարծիքի ազատ ձևավորում: Իհարկե, այն էապես նպաստում է կարծիքի ազատ ձևավորմանը: Սակայն ես ամենավերջում կբարձրացնեմ այն հարցը, որ կարծիքի իրապես ազատ ձևավորման համար անհրաժեշտ են նաև այլ պայմաններ:

Լրատվամիջոցներին վերաբերող թափանցիկության կանոնները կարելի է երկու խմբի բաժանել: Առաջին խումբն ընդգրկում է ՁԼՄ-ներում բաժնեմաս ունենալու փաստը հայտնի դարձնելու կանոնները: Իսկ թափանցիկության կանոնների երկրորդ խումբը պետք է ապահովի ՁԼՄ-ների և դրանց արտադրած տեղեկությունների վրա այլ եղանակով ազդեցություն գործելու փաստերի բացահայտումը: Այստեղ նախևառաջ նկատի ունեմ երրորդ կողմից, օրինակ, գովազդատուների կամ պետական մարմինների կողմից լրագրողներին կամ ՁԼՄ-ներին տրամադրվող ֆինանսական միջոցները:

<u>I. Թափանցիկություն՝ ՁԼՄ-ներում բաժնեմաս ունենալու փաստը հրապարակելու միջոցով</u>

Բաժնեմասերի թափանցիկության անհրաժեշտությունը լայնորեն ընդունվում է: Այդուհանդերձ, Եվրոպայի տարբեր իրավական

մակարդակներում այն չափազանց տարբեր եղանակներով է ապահովվում:

1. Կարգավորումներ Եվրախորհրդում և Եվրոպական Միության իրավունքում

Միջազգային իրավունքի մակարդակում Եվրախորհրդի «Անդրսահմանային հեռուստատեսության մասին համաձայնագիրը» պարտավորեցնում է անդամ պետությունների այն մարմիններին, որոնք վերահսկողություն են իրականացնում ՁԼՄ-ների նկատմամբ, հրապարակել տեղեկություններ հեռուստատեսությամբ և ռադիոյով տեղեկատվություն իրականացնող այն լրատվական ձեռնարկությունների մասին, որոնց վրա տարածվում է այդ մարմինների իրավասությունը: Ի թիվս այլ փաստերի, հրապարակման են ենթակա նաև տեղեկություններ այդ ՁԼՄ-ների կապիտալի կառուցվածքի մասին:

Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) տեսանկյունից, թափանցիկության մասին այդ դրույթները բավարար չեն: Այդ իսկ պատճառով ԵԽԽՎ-ն 2015-ին բանաձև ընդունեց ՁԼՄ-ների մասնաբաժինների թափանցիկությունը բարձրացնելու մասին: Այդ բանաձևը հորդորում էր Եվրախորհրդի անդամ պետություններին կա՛մ ընդունել թափանցիկության վերաբերյալ կարգավորումներ, եթե դրանք դեռ չկան, կա՛մ էլ այնպիսի փոփոխությունների ենթարկել արդեն

առկա կարգավորումները, որ դրանց միջոցով հնարավոր լինի բացահայտել նաև թաքնված բաժնետերերին: Այդուհանդերձ, Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձևերը պարտադիր բնույթ չունեն, այլ սոսկ առաջարկություններ են անդամ պետություններին: Այդ իսկ պատճառով Խորհրդարանական վեհաժողովի պահանջներն ավելի շուտ «բութ դանակ» են:

Ավելի «սուր դանակ», թերևս, կարող է լինել Եվրոպական Միության իրավունքը: Այն սկզբունքորեն կարող է հարկադրել ԵՄ անդամ պետություններին ընդունելու թափանցիկության պարտադիր կանոններ: Սակայն նման պահանջ առկա չէ: ԶԼՄ-ների կողմից մատուցվող ծառայություններին վերաբերող ԵՄ դիրեկտիվները պարունակում են զուտ տեղեկություններ հրապարակելու պարտավորություններ, որոնք չեն պահանջում բաժնեմասային հարաբերությունների հրապարակում: Հետևաբար պետություններն իրենք են որոշում, թե արդյոք թափանցիկ ձևավորեն ԶԼՄ-ների նկատմամբ սեփականության հարաբերությունները և որքանով:

2. Թափանցիկության կանոնները եվրոպական պետություններում՝ չափված Media Pluralism Monitor-ի միջոցով

Ու սա է պատճառն այն բանի, թե ինչու է անդամ պետություններում թափանցիկության աստիճանը այդքան տարբեր: Դա է վկայում նաև Եվրոպայում ԶԼՄ-ների

ազատության և բազմազանության իրավիճակի մասին Media Pluralism Monitor անունով պարբերաբար լույս տեսնող զեկույցը: Մոնիտորի հրատարակիչը Centre for Media Pluralism and Media Freedom (CMPF) կազմակերպությունն է: Իր վերջին՝ 2017թ. համարում CMPF-ն չափել է ԶԼՄ-ների սեկտորի թափանցիկության աստիճանն ընդհանուր թվով 31 պետություններում. ԵՄ անդամ պետությունների կողքին այստեղ նաև անդամ չհանդիսացող պետություններ են ընդգրկված: Այս կամ այն երկրում ԶԼՄ-ների սեկտորի բացարձակապես ոչ թափանցիկ լինելու ռիսկի չափը թափանցիկության ցուցիչը արտացոլում է տոկոսային արժեքով: Որքան փոքր է այդ տոկոսային արժեքը, այնքան ավելի ցածր է հիշյալ ռիսկը ու հետևաբար պետությունում թափանցիկության վիճակը ավելի լավ է:

2017-ի վերաբերյալ բոլոր ուսումնասիրված պետությունների ԶԼՄ-ների սեկտորի անթափանցիկության միջին ռիսկը գնահատվել է 46%-ով: Սա նշանակում է ոչ թափանցիկության արդեն աճած ռիսկ: Եթե մանրամասնորեն անդրադառնանք իրադրությանն առանձին երկրներում, ապա կտեսնենք, թե որտեղ է՝ որ գործ ունենք լավագույն կամ վատթարագույն փորձի օրինակների հետ:

Նախ անդրադառնանք վատագույն օրինակներին: Ոչ թափանցիկության ռիսկը բարձր է գնահատվում յոթ պետություններում: Դրանցից հինգում՝ Ֆինլանդիայում,

Հունաստանում, Նիդեռլանդներում, Ռումինիայում և Չեխիայի Հանրապետությունում, նշված թիվը կազմում է 75%: Թափանցիկության այս վատ գնահատականի ակնհայտ պատճառն այն է, որ լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների համար բացարձակապես գոյություն չունեն թափանցիկության առանձնահատուկ պարտավորություններ: Դրա կողքին բազմաթիվ պետություններում թեև լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններն ունեն պետական մարմինների առջև համապատասխան տեղեկություններ հրապարակելու պարտավորություններ, բայց համապատասխան կարգավորումները հաճախ հնարավորություն չեն տալիս պարզել, թե ով է ձեռնարկության իսկական տնտեսական սեփականատերը: Այստեղ Monitor-ի եզրակացությունը համընկնում է Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի կարծիքի հետ, ըստ որի մասնակցության անհստակ, աղոտ կառուցվածքների շնորհիվ իսկական սեփականատերերն ի վիճակի են քողարկելու ԶԼՄ-ներում իրենց մասնաբաժին ունենալը:

Իսկ հիմա նայենք լավագույն փորձի օրինակներին: Լավագույն ցուցանիշը Ֆրանսիայում է, որտեղ ոչ թափանցիկության ռիսկը գնահատվել է ընդամենը 3%: Հաջորդ տեղերում են Բելգիան ու Գերմանիան՝ յուրաքանչյուրը 10%-ով:

Եկեք ավելի ուշադիր նայենք այս հարցում առաջատար Ֆրանսիայի իրադրությանը: 2016-ին Ֆրանսիայում ընդունվել է օրենք ԶԼՄ-ների ազատության, անկախության և բազմազանության ուժեղացման մասին: Ի թիվս այլ բաների, այդ օրենքը թափանցիկության ավելի խիստ պահանջներ է ներկայացնում մամուլի հրատարակիչներին և աուդիովիզուալ մեդիայի արդյունաբերությանը: Այդ օրենքի ուժի մեջ մտնելու պահից համապատասխան ձեռնարկությունները պարտավոր են ամեն տարի տեղեկացնել իրենց կապիտալի կառուցվածքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունների մասին, եթե դրանց արդյունքում որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ 5%-ի կամ ավելի մեծ բաժին է ձեռք բերում: Բացի դրանից, ձեռնարկությունները տեղեկացնում են յուրաքանչյուր բաժնետիրոջ ինքնության մասին, անկախ այն բանից՝ վերջինս ֆիզիկակա՞ն անձ է, թե՞ իրավաբանական: Եթե որևէ ԶԼՄ չի կատարում թափանցիկության իր պարտավորությունները, ապա նրան կարող են ամբողջությամբ կամ մասնակի զրկել պետական ուղղակի կամ անուղղակի սուբվենցիաներից: Նման սանկցիան երբեմն կարող է մեծ հարված հասցնել լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններին, քանի որ ֆրանսիական ԶԼՄ-ներն օգտվում են պետական օժանդակության տարբեր տեսակներից, ինչպիսիք են, օրինակ, մամուլի արտադրանքի համար ավելացված արժեքի հարկի արտոնյալ դրույքաչափերը:

Ի՞նչ կարելի է եզրակացնել այս օրինակներից: Սեփականության հարաբերությունների լիակատար թափանցիկությունը նախ պահանջում է, որ վերահսկողություն իրականացնող մարմիններն ստանան համապարփակ պատկերացում սեփականության կառուցվածքի մասին: Մասնավորապես հրատարակիչը պարտավոր է ապահովել այն սեփականատերերի ինքնության բացահայտումը, որոնք կարող են որոշիչ ազդեցություն գործել լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկության քաղաքականության և դրա միջոցով՝ նաև ԶԼՄ-ների առաջարկների ձևավորման վրա: Բայց սա նաև Media Pluralism Monitor-ի մեթոդիկայի թույլ կողմն է. բանն այն է, որ պահանջվում են թափանցիկության միայն այնպիսի կանոններ, որոնք թույլ են տալիս պարզել, թե ով է լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկության տնտեսական սեփականատերը: Ճիշտ է, որպես կանոն, հենց տնտեսական սեփականատերն է ի վիճակի իր բաժինների շնորհիվ վճռորոշ ձայն ունենալ ձեռնարկության քաղաքականության որոշման հարցում: Բայց հնարավոր է նաև, որ որոշումների ընդունմանը մասնակցելու այնպիսի հատուկ իրավունքներ ընձեռվեն փոքր բաժին ունեցող մասնակցին, որ վերջինս ավելի մեծ ազդեցություն ձեռք բերի, քան նրան ըստ էության կհասներ ձեռնարկությունում ունեցած իր բաժիններին համապատասխան: Գերմանիայում այդ երևույթը մեզ հայտնի է «Ֆոլկսվագեն» (VW) ավտոմոբիլային կոնցեռնի օրինակով: Այդ կոնցեռնի բաժնետերերից է Գերմանիայի Ստորին Սաքսոնիա հողը (երկրամասը), որի բաժինը կազմում է 20%: VW-ի մասին կա հատուկ օրենք, որը Ստորին Սաքսոնիային

հնարավորություն է տալիս խոչընդոտել ընկերության ընդհանուր ժողովի կարևոր որոշումների ընդունումը, մինչդեռ ըստ գերմանական բաժնետիրական իրավունքի, բաժնետերն այդ հնարավորությունը ունի միայն սովորական դեպքերում, եթե նրան է պատկանում բաժնեմասերի առնվազն 25%-ը: Ճիշտ է, մեդիայի ոլորտում ես մինչև հիմա չեմ լսել նման իրավիճակի մասին, բայց չի բացառվում, որ քիչ բաժնեմասեր ունեցող բաժնետերը ստանա որոշումների կայացմանը մասնակցելու հատուկ իրավունք հենց ձեռնարկության լրատվական առաջարկների ձևավորման հարցում: Միաժամանակ ես կանդրադառնամ լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հատուկ բաժնետերերի մի խմբի, որն ամեն դեպքում պետք է որ շահագրգռված լինի ունենալ նման իրավունքներ: Ըստ այդմ, թափանցիկության կանոնները մեդիա սեկտորում պետք է ոչ միայն հնարավոր դարձնեն լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկության փաստական տնտեսական սեփականատիրոջ բացահայտումը, այլ նաև պետք է հնարավորություն տան պարզելու, թե ովքեր են այն բաժնետերերը, որոնք առաջարկի ձևավորման առնչությամբ որոշումների կայացմանը մասնակցելու հատուկ իրավունքներ ունեն:

Բայց սա դեռ ամենը չէ: Բավական չէ, որ վերահսկողություն իրականացնող մարմինները իմանան լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների վրա իրական ազդեցություն ունեցողներին: Քաղաքացիները նույնպես

պետք է իմանան, թե ով է իրականում կանգնած այս կամ այն լրատվամիջոցի հետևում: Չէ՞ որ միայն այդ դեպքում կկարողանան ճիշտ որոշել, թե որ կողմից է գալիս տեղեկատվությունը: Այդ իսկ պատճառով բաժնետերերի մասին տեղեկությունները պետք է լինեն հրապարակային և ամենից առաջ՝ հեշտ հասանելի: Դրա համար ամենապիտանի միջոցը, թերևս, այդ լրատվամիջոցի հրատարակման տվյալներում համապատասխան տեղեկության հրապարակումն է:

3. ԶԼՄ-ներում պետական մարմինների բաժնետեր լինելու հարցը

ԶԼՄ-ներում բաժնետեր լինելու հարցի կապակցությամբ չի կարելի չհիշատակել մի հատուկ դեպք: *Մասնավոր* բաժնետերերի դեպքում թափանցիկության պահանջով պետք է բացահայտվի, թե որ անհատներն ու հասարակական ուժերն են ազդեցություն գործում հանրային կարծիքի ձևավորման վրա: Սակայն մասնավոր բաժնետերերը կարող են վկայակոչել իրենց պետության սահմանադրությամբ ամրագրված ԶԼՄ-ների հիմնական իրավունքները, այն է՝ ԶԼՄ-ներում իրենց մասնաբաժին ունենալը օրինական է և արդարացված: Այլ է իրադրությունը, երբ *պետությունն* է լրատվամիջոցի բաժնետեր: Պետությունը պետք է գտնվի անկախ լրագրողական մարմինների հսկողության ներքո և ոչ թե ԶԼՄ-ների միջոցով ամրապնդի իր իշխանությունը:

Չնայած պետությանն ուղղված ԶԼՄ-ներից հեռու մնալու այս պահանջին, կան բազմաթիվ իրավակարգեր, որոնք թույլատրում են պետական մարմիններին մասնակցություն ունենալ լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններում կամ այլ եղանակով ազդեցություն գործել ԶԼՄ-ների քաղաքականության վրա: Բայց այդ դեպքում թափանցիկության կանոնները պետք է տեսանելի դարձնեն պետության ազդեցությունը ձեռնարկության վրա: Թույլ տվեք երկու օրինակ բերել գերմանական իրավակարգից: Առաջին օրինակը վերաբերում է լրատվամիջոցում՝ քաղաքական կուսակցությունների մասնաբաժին ունենալուն, իսկ երկրորդը՝ պետության ազդեցությանը հանրային հեռուստատեսության և ռադիոյի վրա:

ա) ԶԼՄ-ներում քաղաքական կուսակցությունների մասնաբաժին ունենալը

Նախ անդրադառնամ քաղաքական կուսակցություններին: Նրանց գործունեությունն ուղղված է պետական իշխանություն ձեռք բերելուն, և այդ պատճառով նրանք հատկապես մոտ են կանգնած պետությանը: Բայց նրանց արմատները հասարակության մեջ են, և գերմանական օրենսդիրը նրանց վրա ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանը մասնակցելու խնդիր է դրել: Այս իսկ պատճառով կուսակցություններին սկզբունքորեն թույլատրվում է բաժնեմասեր ունենալ լրատվական գործունեություն իրականացնող

ձեռնարկություններում: Բաժնեմասեր ունենալու՝ կուսակցությունների իրավունքը ամենից լայն է մամուլի ոլորտում: Այստեղ չկա որևէ վերին սահման, այնպես որ կուսակցությունները նույնիսկ իրավունք ունեն սեփական թերթեր լույս ընծայող հրատարակչություններ ունենալ: Կանոններն ավելի խիստ են հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում: Այստեղ կուսակցությունները լավագույն դեպքում կարող են լինել համապատասխան ձեռնարկությունների փոքրաթիվ բաժնեմասերով սեփականատեր:

Այդուհանդերձ Գերմանիայի դաշնային Սահմանադրական դատարանը վտանգ է տեսել, որ կուսակցությունները նաև փոքր չափերով մասնակցության միջոցով կարող են զգալի ազդեցություն ունենալ հեռուստատեսությունում և ռադիոյում: Կուսակցությունները, և հատկապես կառավարություն կազմած կուսակցությունները, սովորական բաժնետերեր չեն: Նրանց համար մատչելի են պետական ռեսուրսները, ու դրանով լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկության մյուս բաժնետերերի համեմատությամբ նրանք ազդեցության հատուկ պոտենցիալ միջոցներ ունեն: Վատագույն դեպքում կուսակցությունները կարող են de facto դառնալ ձեռնարկության իսկական տերը: Սահմանադրական դատարանն այդ վտանգին հակազդելու միջոց է համարում հեռուստատեսությունում և ռադիոյում քաղաքական կուսակցությունների մասնաբաժին ունենալու հնարավորինս մեծ թափանցիկությունը: Դատավորների կարծիքով, «կարող է անհրաժեշտ լինել

հրապարակման վերաբերյալ կարգավորումներում ներառել նույնսիկ ամենաչնչին չափի մասնակցությունը: Դա օգտատիրոջը հնարավորություն կտա ինքնուրույն գնահատելու ազդեցություն ունենալու հնարավորությունները կոնկրետ դեպքերում»:

Այստեղ ևս դեր է խաղում արդեն հիշատակված մի միտք. բավական չէ իմանալ, թե ով է լրատվական գործունեություն իրականացնող տվյալ ձեռնարկության տնտեսական սեփականատերը: Հակառակը, դրա ծառայություններից օգտվողներին պարտադիր պետք է հայտնի լինեն բոլոր բաժնետերերը և հատկապես նրանք, ովքեր լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկության տեղեկատվության վրա ազդելու հատուկ շահագրգռություն ունեն: Միայն այդ դեպքում նրանք իսկապես ի վիճակի կլինեն գնահատելու տվյալ առաջարկի անկախությունը, արժանահավատությունը և լրջությունը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ Գերմանիայում հեռուստատեսությունում և ռադիոյում կուսակցությունների՝ մասնաբաժին ունենալուն առնչվող թափանցիկության հատուկ պարտավորություններ չկան, այսինքն, այս առումով Գերմանիայում դեռևս կա թափանցիկության դեֆիցիտ:

բ) Պետության ազդեցությունը հանրային հեռուստատեսության և ռադիոյի վրա

Երկրորդ օրինակը վերաբերում է հանրային հեռուստատեսությանը և ռադիոյին, որոնք կարևոր դեր են

խաղում գերմանական մեդիա համակարգում: Այնուամենայնիվ, հանրային հեռուստատեսությունը և ռադիոն Գերմանիայում ամբողջովին *ազատ չեն պետությունից*, այլ *պետությունից հեռացված է* միայն նրանց կազմակերպումը: Դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններում տարբեր հասարակական խմբերի ներկայացուցիչների կողքին նստած են նաև (երկրամասային) կառավարութունների, պառլամենտների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Սակայն այդպիսի մարմնում պետությունը ներկայացնող անդամների թիվը չի կարող գերազանցել անդամների ընդհանուր թվի մեկ երրորդը: Այդ վերին սահմանի միջոցով Գերմանիայի դաշնային Սահմանադրական դատարանը ուզում է թույլ չտալ, որ պետությունն իշխող դիրք ունենա հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի դատավորները լավ գիտակցում էին, որ պետության ներկայացուցիչների թվի վերացական սահմանափակումը բավական չէ պետության ազդեցությունը հիշյալ մարմինների վրա զսպելու համար, քանի որ պետության ներկայացուցիչների համար բնավ էլ դժվար չէ ազդեցություն գործել մարմնի անդամ հանդիսացող՝ հասարակության ներկայացուցիչների վրա: Այդ իսկ պատճառով այդ մարմինների աշխատանքը պետք է իրականացվի հնարավորինս թափանցիկ: Նշված մարմինների աշխատանքի թափանցիկությունը նվազագույն չափով ապահովելու համար Դատարանը պահանջում է հրապարակել այդ մարմինների ու

դրանց հանձնաժողովների կազմը, օրակարգերը, ինչպես նաև նիստերի արձանագրությունները:

Ինչպես տեսնում ենք, թափանցիկության պահանջն այս կապակցությամբ չի նշանակում միայն հեռուստատեսությունում և ռադիոյում պատասխանատու բաժնետերերի մասին տեղեկությունների հրապարակում: Սահմանադրական դատարանը մի քայլ առաջ է գնացել և թափանցիկությունը դիտել որպես միջոց, որով որոշումների կայացման ընթացակարգը հեռուստատեսությունում և ռադիոյում ձևավորվում է քաղաքացիների համար հասկանալի եղանակով:

II. Թափանցիկություն՝ ՁԼՄ-ների վրա այլ ազդեցությունների հրապարակայնացման միջոցով

Սեփականության հարաբերությունների թափանցիկությամբ ՁԼՄ-ների անկախությունը կարելի է գնահատել բացառապես շատ վերացական կերպով: Բանն այն է, որ սեփականության հարաբերություններն առանձին վերցված դեռ ոչինչ չեն ասում որևէ լրատվամիջոցի հաղորդած կոնկրետ տեղեկության անկախության մասին: Այսպես, օրինակ, պետության հսկողության ներքո գտնվող լրատվամիջոցը ևս կարող է օբյեկտիվ ու հավասարակշռված տեղեկություն հրապարակել և հակառակը, իր սեփականության կառուցվածքով անկախ լրատվական միջոցն առանձին դեպքերում կարող է գործել ոչ հավասարակշռված և կողմնակալ:

Եթե լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններն ուզում են զերծ մնալ իրենց անկախության նկատմամբ որևէ կասկածից, ապա պարտավոր են դառնալ «ապակե ձեռնարկություն», որը հրապարակում է իր բոլոր ներքին գործընթացները՝ ֆինանսավորումից մինչև լրագրողական հետաքննություն և խմբագրական աշխատանք: Բայց դա զգալիորեն կդժվարացնի կամ նույնիսկ անհնարին կդարձնի լրագրողների աշխատանքը, մասնավորապես նման դեպքում դժվար թե հնարավոր լինի վստահության վրա հիմնված համագործակցություն լրագրողական աղբյուրների հետ: Այստեղ երևում է լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների ոլորտում թափանցիկության կանոնների մի ընդհանուր սահման. թափանցիկության պարտավորությունները պետք է վերջանան այնտեղ, որտեղ ԶԼՄ-ների լրագրողական ու խմբագրական աշխատանքը գաղտնիություն է պահանջում:

Դրան համապատասխան՝ եվրոպական պետությունները ԶԼՄ-ների լրագրողական ու խմբագրական աշխատանքի առնչությամբ թափանցիկության խիստ պահանջներ չեն ներկայացնում: Դրա փոխարեն գործում են ոլորտի էթիկական չափորոշիչները: Դրանք կարգավորված են վարքագծի կանոնագրերով, սակայն դրանց կարգավորումները իրավական առումով պարտադիր չեն կատարման համար: Բայց դրա կողքին ուրվագծվում է մի նոր միտում՝ պետական մարմիններն ընդունում են թափանցիկության վերաբերյալ նոր դրույթներ, ֆինանսական ազդեցությունները

դասական ու նոր մեդիայի վրա տեսանելի դարձնելու համար: Այդ կանոններն այսպիսով անմիջականորեն չեն վերաբերում լրագրողական-խմբագրական աշխատանքին, դրանք միջնորդավորված եղանակով վերաբերում են լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների ֆինանսական շրջանակային պայմաններին:

1. Լրագրողական գործունեության պահանջները մամուլի կանոնակարգերում

Որպես օրինակ, ես կանդրադառնամ գերմանական մամուլի կոդեքսներում թափանցիկության մասին կանոններին: Մամուլի կոդեքսը պարունակում է նյութական պահանջներ, որոնցով պետք է պաշտպանվի մամուլի արժանահավատությունը: Այդ պահանջներից մեկը հետևյալն է. «Լրագրողներն ու հրատարակիչները չեն իրականացնում այնպիսի գործունեություն, որը կարող է հարցականի տակ դնել մամուլի արժանահավատությունը»: Եվ ապա նաև. «Եթե լրագրողը կամ հրատարակիչը, իրենց հրապարակախոսական գործունեությանը զուգահեռ, գործառույթ ունեն, օրինակ, կառավարությունում, որևէ վարչական մարմնում կամ տնտեսական ձեռնարկությունում, ապա մասնակիցները պարտավոր են խստորեն հետևել այդ գործառույթների տարանջատմանը»: Այդուհանդերձ, Մամուլի կոդեքսը չի պարունակում լրագրողների այդպիսի երկակի գործառույթների մասին ընթերցողներին տեղեկացնելու պարտավորություն: Մամուլի կոդեքսն ավելի

խիստ պահանջներ է ներկայացնում այն դեպքում, երբ լրագրողի անձնական օգուտը սպառնում է ազդել նրա գործունեության վրա: Եթե, օրինակ, լրագրողները տեղեկություն են հաղորդում ֆինանսական շուկաների մասին, ապա իրավունք չունեն դա անելու հարստանալու կամ իրենց մերձավորներին հարստացնելու համար: Բացի դրանից, ֆինանսական վերլուծություններ կատարելիս կամ դրանց մասին հաղորդելիս, շահերի հնարավոր բախումները պարտադիր պետք է հրապարակվեն պատշաճ եղանակով:

Դրանից բացի, Մամուլի կոդեքսը պարունակում է նաև թափանցիկությանն առնչվող մեկ այլ կարևոր պարտավորություն: Մամուլի կոդեքսի կարգավորումների խախտումների մասին Գերմանիայում որոշում է կայացնում Մամուլի խորհուրդը՝ մամուլի ոլորտի սեփական «դատարանը», որը կազմված է մամուլի հրատարակչությունների ներկայացուցիչներից: Եթե Մամուլի խորհուրդը պարզում է, որ Մամուլի կոդեքսը խախտվել է, ապա համապատասխան հրատարակչությանը զգուշացում է անում: Իսկ հրատարակչությունը պարտավոր է այդ զգուշացումը հրապարակել դրան արժանացած իր արտադրանքում: Մամուլի կոդեքսում այս մասին ասված է. «Ընթերցողը պարտադիր պետք է իմանա զգուշացման արժանացած հրապարակման բովանդակությունը և տեղեկացվի այն մասին, թե որ հրապարակախոսական սկզբունքն է խախտվել տվյալ հրապարակմամբ»: Այստեղ նույնպես հրապարակման

պարտավորության միջոցով ընթերցողը պետք է տեղեկություններ ստանա, որպեսզի կարողանա որևէ հաղորդման արժանահավատության և լրջության մասին սեփական կարծիքը կազմել: Բացի դրանից, զգուշացումները հրապարակելու պարտավորությունը կարգապահական ներգործություն ունի հրատարակչությունների վրա: Ոչ մի լրատվամիջոց չի կարող իրեն թույլ տալ մշտապես զգուշացումներ ստանալ, եթե ցանկանում է իր ընթերցողների կողմից լուրջ աղբյուր համարվել:

2. Թափանցիկության պետական կանոնները՝ ֆինանսական հատկացումները բացահայտելու համար

Այժմ թափանցիկության պետական կանոնների մասին, որոնց միջոցով պետք է բացահայտվի լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկության վրա երրորդ կողմից իրականացվող ֆինանսական ազդեցությունը:

ա) Թափանցիկությունը՝ որպես պետության ազդեցությունից պաշտպանվելու միջոց

Նախ անդրադառնանք հենց պետության կողմից ԶԼՄ-ների վրա ազդեցություն գործելու հնարավորություններին: Անընդհատ լսվում են քննադատական կարծիքներ այն մասին, թե պետությունը ազդեցություն է գործում ԶԼՄ-ների վրա՝ դրանցում գովազդ տեղադրելով կամ էլ սպառնալով, որ կզրկի նրանց գովազդի պատվերներից: Պետական մարմինները, գովազդի

շահավետ պատվերներով, ի վիճակի են նպատակաուղղված ձևով առավելություն տալ որոշ լրատվամիջոցների: Եվ հակառակը, նրանք կարող են, զրկելով գովազդ տեղադրելու պատվերներից, «պատժել» անհաճո ԶԼՄ-ներին: Թափանցիկության վերաբերյալ կարգավորումներն այստեղ կարող են ունենալ զսպող ներգործություն: Եթե պետական մարմինները պարտավորված լինեն հրապարակել տեղեկություններ գովազդ տեղադրելու պատվերների և ԶԼՄ-ներին տրամադրվող այլ աջակցության վերաբերյալ, ապա հասարակությունը կկարողանա սեփական կարծիքը կազմել այն մասին, թե արդյո՞ք պետությունը փորձ է անում մանիպուլացնելու ԶԼՄ-ներին:

Սակայն բազմաթիվ եվրոպական իրավակարգերում թափանցիկության նման կանոններ փնտրելու փորձերն ապարդյուն են: Այստեղ դրական բացառություն է կազմում Ավստրիան: 2011-ից սկսած՝ այնտեղ գործում է Համագործակցության, գովազդ տեղադրելու պատվերների և լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների աջակցության մասին օրենքը: Իրավունքի պետական կրողներն այդ օրենքով պարտավորվում են ԶԼՄ-ների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մամիններին տեղեկացնել լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններին գովազդի համար արվող վճարումների, վճարովի հրապարակումների կամ նաև աջակցության նպատակով հանրային միջոցների տրամադրման մասին:

Տեղեկատվությունն ստանալով՝ այդ մարմինները այն հրապարակում են իրենց կենտրոնական կայքում: Հրապարակման ենթակա է նախ մեկ եռամսյակի ընթացքում որևէ լրատվամիջոցին կատարված բոլոր վճարումների ընդհանուր գումարը, ապա նաև այդ վճարումները կատարելու հիմքը:

2019-ի առաջին եռամսյակի թվերը թույլ են տալիս հետաքրքիր եզրահանգումներ կատարել. օրինակ, իմանում ենք, որ հենց միայն Ավստրիայի ֆինանսների նախարարությունը գովազդի համար պատկառելի գումար՝ 370.000 եվրո է վճարել Ավստրիայում ամենախոշոր բուլվարային լրատվամիջոցին՝ «Կրոնեն ցայթունգին»: Այս օրինակով կարելի է նաև ցույց տալ թափանցիկության նման պարտավորությունների օգտակարությունը լրագրողների աշխատանքի համար: Այդպիսի աչքի զարնող երևույթները առիթ են դառնում լրագրողական հետաքննության համար: Մեր օրինակում ցանկացած լրագրող կարող էր դիմել ֆինանսների նախարարությանը՝ «Կրոնեն ցայթունգին» արված վճարումների պատճառը պարզաբանելու խնդրանքով:

բ) Սոցիալական ցանցերում վճարովի բովանդակության թափանցիկությունը

Դասական լրագրողական-խմբագրական ԶԼՄ-ների կողքին կարծիքի ձևավորման գործընթացի վրա այժմ մեծ ազդեցություն

է գործում սոցիալական մեդիան իր user-generated content-ով («օգտատերերի կողմից գեներացված բովանդակություն»): Սոցիալական ցանցերը գործում են բոլորովին այլ կանոններով, քան ավանդական մեդիան: Դա միաժամանակ նրանց և՛ թուլությունն է, և՛ առավելությունը: Առավելություն է, որովհետև բազմաթիվ քաղաքացիների համար ստեղծում է հանրային կարծիքի ձևավորման գործընթացին մասնակցելու հնարավորություն. այս ձևով սոցիալական ցանցերը կարծիքի ձևավորման ոլորտում կոտրում են սակավաթիվ մեդիա կոնցեռնների գերիշխող դիրքը և հանգեցնում այդ գործընթացի ժողովրդայնացմանը: Իսկ դրանց թուլությունն այն է, որ բնականաբար օգտատերերից յուրաքանչյուրը չէ, որ պահպանում է լրագրողական չափորոշիչները: Այդ իսկ պատճառով կարծիքի ձևավորման գործընթացը սոցիալական ցանցերում երբեմն թվում է անսանձ, քաոսային և անարխիստական:

Հատկապես նախընտրական պայքարում քաղաքական կուսակցությունները կամ նաև արտասահմանյան պետությունները կարող են փորձել կարծիքի ձևավորման գործընթացը տանել իրենց ցանկացած ուղղությամբ. ԱՄՆ-ը ստիպված էր բախվել դրան արդեն վերջին նախագահական ընտրություններին նախորդած ընտրապայքարում: Արձագանքելով ամերիկյան փորձին՝ Ֆրանսիան 2018-ի վերջին ընունեց օրենք տեղեկատվական մանիպուլյացիաների դեմ պայքարի մասին, որը կարող է սոցիալական մեդիայում թափանցիկության օրինակ ծառայել: Ըստ այդ օրենքի,

ընտրություններին նախորդող վերջին երեք ամիսների ընթացքում սոցիալական ցանցերի պրովայդերները պարտավոր են իրենց օգտատերերին արդար, հստակ և թափանցիկ եղանակով տեղեկացնել այն մասին, թե ով է նրանց փող տվել ցանցում տեղեկատվություն տարածելու համար: Այդպիսով օգտատերերը պետք է ի վիճակի լինեն հասկանալ, թե որ կողմից է գալիս սոցիալական ցանցերում տեղադրվող քաղաքական բովանդակությունը: Նրանք պետք է կարողանան հասկանալ, թե արդյո՞ք տվյալ բովանդակության հեղինակը ֆիզիկական անձ է, որն ազատ ժամանակ հայտնում է իր քաղաքական կարծիքը, թե՞ դրա հետևում կանգնած է ինչ-որ կուսակցություն կամ արտասահմանյան պետություն:

Այդուհանդերձ, այս նոր կանոններն այնքան էլ պիտանի չեն թվում ֆինանսավորված քաղաքական բովանդակությունը քողազերծելու համար: Բանն այն է, որ ցանցերի պրովայդերները պարտավոր չեն նշել, որ այս կամ այն բովանդակության տարածման համար ֆինանսավորվել են ինչ-որ հովանավորի կողմից՝ ի տարբերություն, ասենք, գովազդատուին նշելու՝ հեռուստատեսությունում ընդունված կարգի: Այստեղ բովանդակության հովանավորների մասին տեղեկություն կարող եք ստանալ բացառապես հանրային ռեգիստրներից: Սա չի հեշտացնում օգտատերերի գործը, քանի որ վերջիններն ստիպված են նախ դիմել ռեգիստր, իսկ հետո էլ անցնել հովանավոր ունեցող բովանդակության ողջ ցանկով:

Համարձակվում եմ պնդել, որ բավականին սահմանափակ է այդքան ջանք թափելու համաձայն օգտատերերի քանակը:

III. ՁԼՄ-ների թափանցիկության վերաբերյալ յոթ թեզ

Ավարտելով՝ կուզենայի ձևակերպել ՁԼՄ-ների թափանցիկության վերաբերյալ յոթ թեզ, որոնք կարող են հիմք լինել հետագա քննարկումների համար.

1. ՁԼՄ-ների թափանցիկությունը եվրոպական պետությունների մեծ մասում հեռու է բավարար լինելուց: Ընդ որում, ՁԼՄ-ների թափանցիկությունը անհրաժեշտ պայման է կարծիքի ազատ ձևավորման գործընթացի համար: Միայն դա է հնարավորություն տալիս հասկանալու, թե որ կողմից է գալիս լրատվամիջոցի հաղորդումը, և գնահատելու այն: Այս իսկ պատճառով պետությունները պարտավոր են ապահովել լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հնարավորինս մեծ թափանցիկությունը:

2. Թափանցիկության վերաբերյալ կարգավորումներ մշակելիս կամ դրանք խստացնելիս, պետությունը պարտավոր է պահպանել ՁԼՄ-ների հիմնական իրավունքները և այդ պատճառով պարտավոր է անձեռնմխելի թողնել վստահության վրա հիմնված լրագրողական-խմբագրական աշխատանքի հիմունքները: Սակայն ՁԼՄ-ների

գործունեության այս կենտրոնական ոլորտից դուրս թափանցիկության պարտավորությունների միջոցով իրականացվող միջամտությունները, որպես կանոն, կարելի է արդարացնել կարծիքի ազատ ձևավորմանը դրանց տված օգուտով: Ընդհանրապես չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ թափանցիկության կանոնները կարող են պաշտպանել ԶԼՄ-ներին նաև արտաքին ազդեցություններից, քանի որ դրանց շնորհիվ ավելի հավանական է դառնում, որ նա, ով ուզում է ազդեցություն գործել ԶԼՄ-ների վրա, կբռնվի: Շատերը չէ, որ կցանկանան վնասել իրենց իմիջին՝ փորձելով մանիպուլյացիայի ենթարկել ԶԼՄ-ներին:

3. Թափանցիկության վերաբերյալ կարգավորումների հիման վրա պետք է հրապարակվի, թե ովքեր են լրատվամիջոցի այն բաժնետերերը, որոնք կարող են որոշիչ ազդեցություն ունենալ տեղեկատվության և առաջարկի ձևավորման վրա: Սրանք, որպես կանոն, տնտեսական սեփականատերերն են: Բայց նրանց կողքին որոշումների կայացմանը մասնակցելու հատուկ իրավունքներ կարող են ընձեռվել նաև այլ բաժնետերերի: Սա ևս պետք է հայտնի դառնա:

4. Եթե լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկության բաժնետեր են պետությունը կամ քաղաքական կուսակցությունները, ապա նրանց մասնակցությունը պետք է առանձին հրապարակվի: Չէ՞ որ

պետությունը և կուսակցությունները սովորական բաժնետերեր չեն: Նրանց մասնակցությունը լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններին մշտապես ուղղված է տեղեկատվության ու դրանով քաղաքական կարծիքի ձևավորման գործընթացի վրա ազդեցություն գործելուն: Իսկ նրանք ունեն հատուկ միջոցներ մյուս բաժնետերերի վրա իրենց ցանկություններին համապատասխան ազդելու համար:

5. Պետությունը, կուսակցությունները և հասարակական դերակատարները կարող են ազդել լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների վրա, նաև առանց դրանցում մասնաբաժին ունենալու: Նրանք դա անում են, մասնավորապես, տալով գովազդ տեղադրելու շահավետ պատվերներ և կամ էլ սպառնալով զրկել այդպիսի պատվերներից: Ավստրիայի օրինակով ցանկալի կլիներ, որ պետական մարմինները պարբերաբար հրապարակեին տեղեկություններ այն մասին, թե որ ԶԼՄ-ներին որքան փող են տվել, ինչ նպատակներով: Բացի դրանից, արժե մտածել այն մասին, թե արդյո՞ք հրապարակման այդպիսի պարտավորություն չպետք է ունենան նաև տնտեսական ձեռնարկությունները և ոչ կառավարական կազմակերպությունները: Սակայն հրապարակման նման պարտավորությունն իհարկե կնշանակեր միջամտություն այս դերակատարների հիմնական իրավունքներին: Այդ միջամտության

ինտենսիվությունը մեղմելու համար կարելի է նախատեսել, որ լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններին տրամադրվող ֆինանսական հատկացումները պետք է հրապարակվեն միայն որոշակի չափից սկսած:

6. Սեփականության հարաբերությունների և ֆինանսական հատկացումների հրապարակումը պետք է մշտապես իրականացվի հասարակության համար: Այդ տեղեկությունները պետք է այնքան մատչելի լինեն քաղաքացիների համար, որ իսկապես ընկալվեն և նշանակություն ունենան առաջարկի գնահատման համար: Օրինակ, բավական չէ հովանավորների կողմից ֆինանսավորված նախընտրական գովազդը սոցիալական ցանցերում ներառել առանձին ռեգիստրում: Ինչպես և դասական հեռուստատեսային գովազդի դեպքում, սոցիալական ցանցերում նույնպես պետք է հենց առաջին հայացքից պարզ դառնա, թե որ բովանդակությունն է փողով տարածվում:

7. Իսկ այս եզրափակիչ կետը դուրս է գալիս իրավունքի կողմից տրամադրվող հնարավորությունների սահմաններից: ՁԼՄ-ների թափանցիկությունը, ինչպես ասվեց, *անհրաժեշտ* պայման է կարծիքի ազատ ձևավորման համար: Այդ իսկ պատճառով իմ ելույթի վերնագրում բարձրացված հարցին կարելի է տալ «այո»

պատասխանը: Սակայն թափանցիկությունը բնավ էլ *բավարար* պայման չէ կարծիքի ազատ ձևավորման գործընթացի համար: Չէ՞ որ դրա համար անհրաժեշտ է նաև, որ քաղաքացիները քննադատաբար վերաբերվեն ՁԼՄ-ներին: Նրանք պետք է իրոք նաև օգտագործեն իրենց տրամադրվող տեղեկությունները՝ այս կամ այն լրատվամիջոցի արժանահավատությունը և լրջությունը գնահատելու համար: Իսկ սա ոչ թե իրավունքի հարց է, այլ քաղաքացիների կրթվածության և մեդիայի ոլորտում ձեռնահասության հարց է: Իրավունքը դրա համար կարող է անհրաժեշտ տեղեկություններ տալ: Ոչ ավելին, բայց նաև՝ ոչ պակաս:

Բերնդ Հոլցնագել
Դոկտոր պրոֆեսոր, Մյունսթերի համալսարան

Լավ առցանց կառավարում. իրավական բարիքների պաշտպանությունն առցանց ոլորտում

Ի. ԶԼՄ-ների ազատությունը Գերմանիայում և Եվրոպայում

ԶԼՄ-ները հասարակության մեջ ակնառու դիրք ունեն: Ժողովրդավարական հասարակությունները հիմված են այն կանխավարկածի վրա, որ իրենց քաղաքացիները տեղեկացված են: Մամուլը, հեռուստատեսությունը և ռադիոն, ինչպես նաև առցանց ԶԼՄ-ները վճռորոշ գործոն են քաղաքական կամքի ձևավորման համար: Դրա կողքին լրատվամիջոցներն ունեն նաև *public watchdog-ի (հանրային պահապան շան)* գործառույթը: Դրանով նրանք պետք է բացահայտեն քաղաքական ու տնտեսական իշխանության չարաշահումները: ԶԼՄ-ները հասարակության գործունեության համար այս հիմնարար գործառույթը կարող են ստանձնել միայն այն դեպքում, եթե տնտեսապես անկախ լինեն պետական մարմիններից: Ժողովրդավարության գոյության համար այս կարևոր գործառույթների կողքին ԶԼՄ-ներն ունեն նաև այլ գործառույթներ: Դրանք են՝ տնտեսական, մշակութային, տեղեկատվական, ինչպես նաև՝ մարդկանց զբաղեցնելու և զվարճացնելու գործառույթներ: Այս նշանակությունն արտացոլված է Գերմանիայի հիմնական օրենքում՝

Սահմանադրությունում: 1949-ին ընդունված Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասում ասված է.

> *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր կարծիքը բառով, գրով և պատկերով ազատորեն արտահայտելու և տարածելու և առանց խոչընդոտների տեղեկանալու բոլորին մատչելի աղբյուրներից: Մամուլի ազատությունը և հեռուստատեսության և ռադիոյի ու կինոնկարի միջոցով տեղեկատվության ազատությունը երաշխավորվում են: Գրաքննություն տեղի չի ունենում»:*

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ԶԼՄ-ների ազատության համար իրավական տեսանկյունից ելակետը սա է: Հիմնական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասն առանձին-առանձին երաշխավորում է կարծիքի արտահայտման ազատությունը, տեղեկություններ ստանալու և տարածելու ազատությունը, մամուլի ազատությունը և հեռուստատեսության և ռադիոյի ու կինոնկարի միջոցով տեղեկատվության ազատությունը: Մամուլի ու հեռուստատեսության և ռադիոյի ազատությամբ ԶԼՄ-ները պաշտպանված են՝ սկսած տեղեկություն ձեռք բերելուց մինչև լուրեր և կարծիքներ տարածելը: Բացի այդ, դրանք էապես նպաստում են ազատ մամուլի և ազատ հեռուստատեսության ու ռադիոյի ստեղծմանը:

Եվրոպական մակարդակում ևս ապահովված է ԶԼՄ-ների ազատությունը: Մարդու իրավունքների եվրոպական

կոնվենցիան (ՄԻԵԿ) 47 պետությունների կողմից կնքված միջազգային իրավունքի պայմանագիր է: ՄԻԵԿ-ը երաշխավորում է Եվրախորհրդի անդամ պետություններում բոլոր մարդկանց անհատական իրավունքները: Հայաստանն էլ է դրանց թվում: ՄԻԵԿ-ի պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ): Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասում ասված է.

> *«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:*

Ըստ այդմ, յուրաքանչյուր ոք իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք ունի: Այդ իրավունքը, ի թիվս այլ բաների, բովանդակում է տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից:

Ազատությունը և բազմակարծությունը բարձր արժեքներ են Եվրոպական Միությունում: Սա հստակեցնում է նաև Հիմնական իրավունքների եվրոպական խարտիայի 11–րդ հոդվածի 2-րդ մասը: Դրանում ասված է.

> *«Մեդիայի ազատությունը և բազմազանությունը հարգվում են»:*

Ի տարբերություն Գերմանիայի Հիմնական օրենքի և ՄԻԵԿ-ի, Հիմնական իրավունքների մասին եվրոպական խարտիան մեդիայի տարածման ձևերի (մամուլ, հեռուստատեսություն և ռադիո) միջև տարբերակում չի կատարում: «Մամուլ» և «հեռուստատեսություն և ռադիո» ընդունված կատեգորիաները չօգտագործելը Հիմնական իրավունքների խարտիան կիրառելիս հնարավորություն է տալիս առանց մեծ խնդիրների ընդգրկել հաղորդակցության նոր ձևերը:

<u>II. ԶԼՄ-ների ազատության սահմանները</u>

Ո՛չ գերմանական սահմանադրական իրավունքում և ո՛չ էլ եվրոպական իրավունքում ԶԼՄ-ների ազատությունն անսահման չի գործում: Ըստ Գերմանիայի Հիմնական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, մամուլի և հեռուստատեսության ու ռադիոյի ազատությունը կարող է սահմանափակվել, օրինակ, անվտանգությունը և հասարակական կարգ ու կանոնը կարգավորող իրավական նորմերով կամ ընդհանուր անհատական իրավունքի պաշտպանությամբ: Ընդ որում,

կարևորը միշտ կոնկրետ փաստական հանգամանքներն են: Նման դեպքերում իրավունքը պետք է հավասարակշռի տարբեր շահեր: Օրինակ, անձանց մասին տեղեկություններ հաղորդելիս պետք է հարգվի ընդհանուր անհատական իրավունքը: Ինչ-որ անձանց մասին տեղեկություններ ստանալու հանրության հետաքրքրվածությունը պետք է ծանրութեթև արվի համապատասխան անձանց՝ ասենք, մասնավոր կյանքի մասին տեղեկություններ չտարածելու շահի հետ:

ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, մեդիայի ազատությունից օգտվելը կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ: Այդ իսկ պատճառով այն կարող է կապվել ձևին ներկայացվող պահանջների, որոշակի պայմանների հետ, ենթարկվել սահմանափակումների կամ դրվել պատժի սպառնալիքի տակ: Սակայն համապատասխան կարգավորումները կարող են սահմանափակել ՁԼՄ-ների ազատությունը միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, հասարակական կարգ ու կանոնի պահպանման կամ հանցագործությունների կանխման համար:

III. ՁԼՄ-ների իրավունքները Գերմանիայում

Գերմանական Սահմանադրությամբ մամուլին և հեռուստատեսությանն ու ռադիոյին ընձեռված հատուկ

պաշտպանության պատճառով ՁԼՄ-ներն ունեն լայն ազատություններ: Տրված իրավունքները պետք է ընդհանուր առմամբ ապահովեն և պետության ազդեցությունից պաշտպանեն ՁԼՄ-ների աշխատանքը:

Կարևորագույն իրավական գործիքների թվին են պատկանում տեղեկություններ ստանալու, դրանց մատչելիության՝ մամուլի պահանջի իրավունքները: Օրենքներով պետք է ապահովված լինի իրենց աշխատանքը կատարելու ՁԼՄ-ների հնարավորությունը: ՁԼՄ-ների աշխատանքի համար առանձնահատուկ նշանակություն ունի ամենից առաջ պետական մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքը: Ըստ Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա հողի երկրամասային «Մամուլի մասին օրենքի» §4, մաս 1-ինի, պետական մարմիններն սկզբունքորեն պարտավոր են տեղեկություններ հաղորդել մամուլի ներկայացուցիչներին, եթե դա ծառայում է նրանց հանրային խնդիրների կատարմանը: Տեղեկություններ ստանալու այս պահանջի իրավունքն ունեն միայն մամուլի ներկայացուցիչները, և այն վերաբերում է միայն պետական մարմիններից տեղեկություններ ստանալուն: Դրան հակառակ՝ մամուլի ներկայացուցիչները չեն կարող տեղեկություններ պահանջել մասնավոր անձանցից: Տեղեկություններ ստանալու պահանջի իրավունքի նպատակը պետության գործունեության ոլորտից, մասնավորապես վարչական մարմիններից, լուրեր և տեղեկություններ ձեռք բերելն է: Նշված երկրամասային օրենքի §4, մաս1-ինը այսպիսով ծառայում է գործադիր իշխանության

մարմինների և հատկապես կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացմանը: Բայց պետական մարմինները միշտ չէ, որ պարտավոր են տեղեկություն տալ: Եթե համապատասխան տեղեկությունները շոշափում են պաշտպանության ենթակա մասնավոր շահեր կամ գաղտնիության վերաբերյալ դրույթներ, ապա տեղեկություն ստանալու պահանջի իրավունքը կարող է և չբավարարվել:

Մամուլի գործունեությունը կարգավորող իրավունքով նախատեսված՝ տեղեկություններ ստանալու պահանջի իրավունքը կարող են ունենալ նաև բլոգերները: Այն դեպքերում, երբ բլոգերները ապահովում են լուրերի հրապարակախոսական տարածումը հասարակայնության համար և մասնակցում են հասարակական կարծիքի ձևավորմանը: Այդ իսկ պատճառով արդյունքում այդ իրավունքից օգտվելու համար կարևոր են դառնում բլոգերի, առցանց բլոգի ձևակերպումը և բովանդակությունը, ինչպես նաև ընթերցողների քանակը: Ցանկացած բլոգեր չի համարվում մամուլի օրգան ու դրանով տեղեկություններ ստանալու իրավունք ունեցող:

Երրորդ անձանց և ՁԼՄ-ներում աշխատող անձանց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման դեպքում գերմանական Քրեական դատավարության օրենսգիրքը տարբեր եղանակներով պաշտպանում է ՁԼՄ-ներին: Օրինակ, հեռուստատեսությունում, ռադիոյում և մամուլում աշխատող անձինք իրավունք ունեն քրեական դատավարության շրջանակում դատարանի առաջ,

ոստիկանությանը և դատախազությանը ցուցմունք չտալ: Ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը չի կարելի որևէ ձևով շրջանցել: Համապատասխան անձանցից նաև չեն կարող բռնագրավվել գրավոր փաստաթղթեր, ձայնի, պատկերի և տվյալների կրիչներ, նկարներ և այլն: Համապատասխան անձինք պաշտպանված են նաև ոստիկանների կողմից իրականացվող խուզարկություններից:

Քանի դեռ բլոգերներն իրենց գործունեությունն իրականացնում են որպես մասնագիտություն և անձանց իրազեկելու կամ կարծիքի ձևավորման համար հրապարակում են խմբագրական մշակման ենթարկված տեղեկություններ, նրանք օգտվում են նշված արտոնություններից:

IV. ՁԼՄ-ների պարտականությունները Գերմանիայում

Նշված իրավունքների կողքին ՁԼՄ-ների համար կարող են գոյություն ունենալ նաև առանձնահատուկ, սպեցիֆիկ պարտականություններ: Այդպիսի առանձնահատուկ պարտականություններ սահմանելը բխում է հասարակական կարգում ՁԼՄ-ների ակնառու դիրքից: ՁԼՄ-ները հանրային խնդիր են իրականացնում: Իրենց մեծ հեռահարության հետևանքով նրանք գերիշխող դիրք են ձեռք բերում: Այդ ազդեցության չարաշահումը կանխելու համար, օրինակ, հատուկ պահանջներ են ներկայացվում լրագրողական բարեխղճությանը: Դրա կողքին գործում է գովազդի և խմբագրական մասերի

տարանջատման սկզբունքը: Լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունները պարտավոր են հրապարակել, թե դրանցում ովքեր ունեն բաժնեմասեր: Նրանք պարտավոր են նաև հրապարակել հրատարակման տվյալներ: Սա ծառայում է լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների նկատմամբ երրորդ անձանց իրավունքների իրացմանը:

Օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կողքին մամուլը պարտավոր է կատարել նաև մամուլի աշխատողների համքարության պարտականությունները: Այս պարտականություններն առաջացել են ինքնակարգավորման շրջանակում: Մամուլի համար կենտրոնական փաստաթուղթը, որում կարգավորված են այդ պարտականությունները, Մամուլի կոդեքսն է: Դրանում ձևակերպված են լրագրողական գործունեության սկզբունքները և մամուլի ներկայացուցիչների վարքագծի ուղենշային կանոնները: Մամուլի կոդեքսը կամավոր ինքնապարտավորեցում է: Այդ իսկ պատճառով հրատարակիչներն ու լրագրողները, նաև նրանք, ովքեր գործում են առցանց, կաշկանդված են Կոդեքսի կանոններով միայն այն դեպքում, եթե համաձայնել են դրանց: Մամուլի կոդեքսի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Գերմանական Մամուլի խորհուրդը: Սա մամուլի ինքնավերահսկողության մարմին է: Մամուլի խորհրդի խնդիրներն են, ի թիվս այլ բաների.

- պաշտպանել մամուլի ազատությունը,
- կատարել բարեխղճության պարտականությունը հարցումների արդյունքներ և հարցազրույցներ հրապարակելիս,
- պահպանել հետաքննական գործունեության որոշակի սկզբունքներ,
- հարգել մարդու մասնավոր կյանքը և նրա տեղեկատվական ինքնորոշումը,
- վերացնել մամուլի ոլորտի թերությունները,
- խստորեն տարանջատել հրապարակախոսական գործունեությունը որևէ այլ գործառույթից, օրինակ կառավարությունում:

Երբ դատարաններն ստիպված են լինում որոշել, թե արդյո՞ք կատարված է «լրագրողական բարեխղճության պարտականությունը», ապա դիմում են Մամուլի կոդեքսին: Մամուլի կոդեքսի խախտումն անպատիժ չի մնում: Մամուլի խորհուրդը, որպես համքարության պարտականությունների կատարումը հսկող մարմին, կարող է նշանակել տարբեր պատժամիջոցներ: Ամենախիստ սանկցիան նկատողությունն է: Համապատասխան խմբագրությունն այն պարտադիր պետք է հրապարակի իր արտադրանքի հաջորդ համարում: Մամուլի կոդեքսի 16-րդ կետում սահմանված է.

«Արդար տեղեկատվությունը պահանջում է Գերմանական Մամուլի խորհրդի կողմից հրապարակայնորեն արված

նկատողությունների հրապարակում, մասնավորապես նկատողություն ստացած տպագիր օրգաններում և հեռարձակող ՁԼՄ-ներում»:

V. Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենք

Թվային դարաշրջանի սկզբից ի վեր, կարծիքի ձևավորումը գնալով ավելի ու ավելի հաճախ է տեղի ունենում սոցիալական ցանցերում: Սոցիալական ցանցերի համար չեն գործում IV բաժնում նկարագրված պարտականությունները, քանի որ սրանք մամուլի օրգան չեն: Հետևաբար պետք է մտածել այն մասին, թե ինչպես կարելի է ժողովրդավարական սկզբունքների վրա հենվող դիսկուրսն ապահովել համացանցում: Այստեղ տպավորիչ օրինակ է Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին գերմանական օրենքը:

1. Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի նախապատմությունը

Հիշյալ օրենքի համար առիթ հանդիսացավ ատելության հրահրման հետ կապված հանցագործությունների և քրեորեն պատժելի այլ բովանդակության մեծացող տարածումը Ֆեյսբուքի, Յություբի և Թվիթերի նման սոցիալական ցանցերում: Նախապես արդեն եվրոպական մակարդակում քննարկվել էին այդ զարգացումներին հակազդելու հնարավորությունները: Եվրոպական շուկաներում գերիշխող Ֆեյսբուք, Յություբ և

Թվիթեր ամերիկյան սոցիալական ցանցերի ու Մայքրոսոֆթի հետ համատեղ Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց Code of Conduct on Countering Illegal Hate Speech Online («Համացանցում ապօրինի ատելության խոսքի դեմ պայքարի վարքագծի կոդեքս») փաստաթուղթը: Սա ոչ թե օրենք (կարգադրություն կամ դիրեկտիվ) է, այլ ոչ պարտադիր, այսպես կոչված Soft Law *(փափուկ օրենք)*: Վարքագծի այդ կոդեքսում կարևորագույն կետն այն է, որ որևէ գրառման հեռացումը սոցիալական ցանցում պետք է կատարվի բողոք ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում:

Եվրոպական հանձնաժողովին հաջողվեց համոզել սոցիալական ցանցերին համաձայնելու վարքագծի այս կոդեքսին միայն այն բանի շնորհիվ, որ սպառնաց, թե հակառակ պարագայում կընդունի կատարման համար պարտադիր օրենքներ: Նշված ձեռնարկությունների համար Վարքագծի կոդեքսը չարիքներից փոքրագույնն էր: Գերմանայի այն ժամանակվա արդարադատության նախարար Հայկո Մասը հրավիրեց Task Force կոչված կլոր սեղան, որին մասնակցում էին սոցիալական ցանցերի ներկայացուցիչներ և կառավարությունների անդամներ: 2016-ի աշնանը Task Force-ը պայմանավորվածություն ձեռք բերեց բողոքների թափանցիկ քննարկման, հակահիրավական բովանդակության ավելի արագ հեռացման և ընդհանուր առմամբ սոցիալական ցանցերի ու պետական մարմինների միջև ավելի լավ համագործակցության վերաբերյալ: Սակայն եվրոպական Վարքագծի կոդեքսի պահանջներն ու ազգային Task

Force-ի պայմանավորվածությունները չկատարվեցին. Ֆեյսբուքը հեռացրեց բողոքարկված բովանդակության ընդամենը 39%-ը, իսկ Թվիթերն՝ ընդամենը 1%-ը: Այս երկու սոցիալական ցանցերին բողոքների մշակման համար դեպքերի կեսում անհրաժեշտ եղավ 24 ժամից ավելի ժամանակ:

2016-ի դեկտեմբերին ՁԼՄ-ների մեծ ուշադրությանն արժանացավ այն, թե ինչպիսի վերաբերմունք ստացավ Գերմանական Բունդեսթագի իրավական հանձնաժողովի նախագահ Ռենաթե Քյունասթի բողոքը Ֆեյսբուքի կողմից: Ֆեյսբուքում տարածվել էր մի լուսանկար Կանաչների կուսակցության այս ներկայացուցչին վերագրված մեջբերումով՝ մի մարդու մասին, որը Ֆրայբուրգ քաղաքում ենթադրաբար կատարել էր գերմանական հասարակությունում մեծ ուշադրության արժանացած սպանություն: Ըստ ֆեյսբուքյան գրառման, տիկին Քյունասթն իբրև թե ասել էր.

> *«Տրավմա տարած երիտասարդ փախստականը, ճիշտ է, սպանություն է կատարել, բայց չնայած դրան, հիմա անհրաժեշտ է օգնել նրան»:*

Որպես մեջբերման աղբյուր մատնաշվել էր «Զյուդդոյչե ցայթունգ» հեղինակավոր թերթը: Ե՛վ մեջբերումը, և՛ աղբյուրը հորինված էին: Ֆեյք նյուզի տիպիկ օրինակ էր, ինչը հաճախակի օգտագործվել էր ամերկյան նախընտրական պայքարում Հիլարի Քլինթընի դեմ: Թեև համեմատաբար հեշտ էր պարզել, որ հիշյալ գրառումը հորինված լուր էր, Ֆեյսբուքն սկզբում չարձագանքեց

սպառողների շահերի պաշտպանության նախկին նախարարի բողոքին: Միայն այն բանից հետո, երբ Բունդեսթագի բազմաթիվ բարձրաստիճան պատգամավորներ արտահայտեցին իրենց զարմանքն այդ գործելակերպի առիթով, Ֆեյսբուքը կատարեց հեռացնելու իր պարտավորությունը:

Այս իրողությունը լայն քննարկումների արժանացավ գերմանական հասարակությունում: Դա արագացրեց համացանցում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենք ընդունելու՝ Գերմանիայում կառավարող կոալիցիայի նախաձեռնության իրականացումը: Հիշյալ օրենքն այդ ժամանակվանից ի վեր գերմանական հասարակությունում անվանվում է նաև *Ֆեյսբուքի օրենք*: Օրենքն ընդունվել է Գերմանական Բունդեսթագի կողմից 2017թ. հունիսի 30-ին:

2. Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի կարգավորման մոդելը

Հիշյալ օրենքի նպատակն է հասնել այն բանին, որ սոցիալական ցանցերն ավելի լավ կատարեն հակահիրավական բովանդակությունը հեռացնելու իրենց պարտավորությունը: Օրենքը ինքնին հեռացման նոր պարտավորություններ չի նախատեսում: Այն պարզապես նպաստում է դրանց կատարմանը: Այս օրենքի մասին մեր երկրի ներսում և արտասահմանում ընթացող քննարկումներում հաճախ սա չի հասկացվում:

Երրորդ անձանց հեղինակած քրեորեն պատժելի բովանդակությունը չտարածելու պարտականությունը բխում է բազմաթիվ քրեական օրենքներից և Գերմանիայի Քաղաքացիական օրենսգրքի §1004-ից: Ըստ այս կարգավորումների, յուրաքանչյուր ոք պարտավոր է ձեռնպահ մնալ, օրինակ, անձնական պատվի կամ սեփական պատկերի նկատմամբ իրավունքի խախտումներից և վերացնել համապատասխան շարունակական խախտումները: Տիկին Քյունասթը կարողացավ իր բողոքը հիմնավորել հենց այս կետերով: Այդ հիմնական սկզբունքից կա մի բացառություն, որը կարևոր է այս համատեքստում. այն ծառայություններ մատուցողները, որոնք ուրիշից ստացվող տեղեկությունները կուտակում են ինչ-որ օգտատիրոջ համար (այսպես կոչված Host Provider), նյութական պատասխանատվություն են կրում այլ անձանց կողմից կատարված հանցագործություններին օժանդակելու համար, եթե տեղեկացված են լինում գործընթացի մասին: Այդ դեպքում նրանք պարտավոր են հեռացնել համապատասխան գրառումը և այն էլ՝ անհապաղ: Notice-and-Take-Down *(նկատիր և հեռացրու)* կոչված այս սկզբունքն ամրագրվել է E-Commerce 2000 դիրեկտիվում (հոդվ. 14) և գերմանական իրավունք է ներմուծվել հեռարձակող ԶԼՄ-ների մասին օրենքի §10-ով:

Մատակարարների այս արտոնությունը բնական իրավունք չէ, այլ օրենսդրի որոշում՝ ցանցում որոշակի գործարարական մոդելներ խթանելու համար: Այստեղ քննարկվող օրենքը պարզապես

պետք է ավելի մանրամասնորեն ձևակերպի արդեն գործող եվրոպական իրավական շրջանակը: Ընդ որում, այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել հիմնական իրավունքների ներգործությունը: Ըստ Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի, հիմնական իրավունքներն իրենց օբյեկտիվ իրավական գործառույթի պատճառով գործում են իրավունքի բոլոր ոլորտներում: Սա վերաբերում է նաև մասնավոր անձանց միջև իրավահարաբերություններին (նման դեպքերում խոսում են երրորդ անձանց վրա հիմնական իրավունքների ազդեցության մասին): Այս սկզբունքը առանցքային նշանակություն է ձեռք բերում այստեղ քննարկվող հարցերի կապակցությամբ:

Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքը կիրառում է մի մոտեցում, որն արդեն հաջողությամբ օգտագործվում է իրավական չափորոշիչների (ստանդարտների) իրագործման համար տնտեսական ձեռնարկություններում և ֆինանսական շուկայում: Հենց իրենք ձեռնարկությունները պարտավորված են վերահսկել մասնագիտական չափորոշիչների պահպանումը, կիրառել դրա համար արդյունավետ ընթացակարգեր և հաղորդել այդ մասին (*Compliance*): Compliance-ի պարտականությունների դեմ խախտումների դեպքում սպառնում են պատժամիջոցներ: Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքով Compliance-ի վերաբերյալ կարգավորումներ պետք է ներմուծվեն սոցիալական ցանցերի համար:

3. Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի բովանդակությունը

ա) Սոցիալական ցանցերը որպես պարտավորվածներ

Սոցիալական ցանցերում իրավունքի իրացման բարելավման մասին օրենքի §1, մաս 1-ի համաձայն, օրենքի կարգավորումները գործում են բոլոր նրանց համար, ովքեր մատուցում են հեռարձակման ծառայություններ, շահույթ ստանալու նպատակով գործարկում են սոցիալական ցանցեր: Սոցիալական ցանցերը նման դեպքում սահմանված են որպես հարթակներ համացանցում, «որոնք նախատեսված են այն բանի համար, որ օգտատերերը ցանկացած բովանդակություն ուրիշ օգտատերերի հետ կիսեն կամ հասարակայնությանը մատչելի դարձնեն»: *Ցանկացած* բովանդակության փոխանակման վերաբերյալ դրույթը հանգեցնում է այն բանին, որ *սպեցիֆիկ* բովանդակության փոխանակման համար գործող ցանցերը, օրինակ, մասնագիտական ցանցերը, առցանց խաղերը կամ առքուվաճառքի հարթակները, սրա կիրառման ոլորտի մեջ չեն մտնում: «Հարթակ» հասկացությունը մատնանշում է հաղորդակցության այնպիսի մի տարածք, որում ընդգրկված են բազմաթիվ մասնակիցներ: Ամիատական հաղորդակցության ծառայությունները, ինչպես օրինակ, էլէկտրոնային փոստը կամ սուրհանդակային ծառայությունները, չեն մտնում կիրառման ոլորտի մեջ: Լրագրողական խմբագրական բովանդակություն

ունեցող հարթակները, այստեղ քննարկվող օրենքի §1, մաս 1-ի 2-րդ նախադասության համաձայն, սոցիալական ցանցեր չեն այդ օրենքի իմաստով: Բացի դրանից, օրենքի §1, մաս 2-ով, դրա կիրառելիությունը տարածվում է միայն այնպիսի սոցիալական ցանցերի վրա, որոնք Գերմանիայում ունեն 2 միլիոնից ավելի գրանցված օգտատերեր:

բ) Հակաիրավական բովանդակության հեռացում

Հակաիրավական բովանդակության հեռացման վերաբերյալ կարգավորումները Սոցիալական ցանցերում իրավունքի իրացման կենսագործման մասին օրենքի միջուկն են:

Սոցիալական ցանց գործարկողը պարտավոր է *ակնհայտորեն* հակաիրավական բովանդակությունը հեռացնել կամ անմատչելի դարձնել բողոքն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Հակաիրավական բովանդակությունը, ըստ այստեղ քննարկվող օրենքի §1, մաս 3-ի, այն բովանդակությունն է, որը համապատասխանում է որոշակի հանցակազմերի հատկանիշների: Օրենքում նշվող 22 հանցակազմերը կարելի է մի քանի խմբի բաժանել. դրանք դրույթներ են պետական անվտանգության (օրինակ, ահաբեկչական միավորումների ստեղծում, Քրեական օրենսգրքի §129a, պետությունը վտանգող ծանր բռնություն կատարելու հրահրում, Քրեական օրենսգրքի §91), հասարակական կարգ ու կանոնի նկատմամբ հարձակումների (օրինակ, ժողովրդի մի հատվածին ուրիշ

հատվածի դեմ հրահրելը, Քրեական օրենսգրքի §130 StGB) և անձնական պատվի պաշտպանության (օրինակ, վիրավորանք, Քրեական օրենսգրքի §185 StGB) վերաբերյալ: *Ակնհայտ* հակահիրավականություն առկա է այն դեպքում, երբ համապատասխան պատրաստվածություն ունեցող աշխատակազմը, որպես կանոն, կարողանում է առանց անհամաչափ ջանքեր գործադրելու այն անմիջապես, բայց ամեն դեպքում 24 ժամվա ընթացքում նկատել: Եթե դրանից հետո փաստական կամ իրավական առումով կասկածներ են մնում, ապա ակնհայտ իրավախախտում առկա չէ:

Հակահիրավական բովանդակության մյուս բոլոր դրսևորումները, որպես կանոն, բողոքն ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում պարտադիր պետք է հեռացվեն կան անմատչելի դարձվեն: Այս՝ համեմատաբար երկար ժամկետը պետք է հնարավորություն տա պահանջելու և ստանալու հեղինակի դիրքորոշումը կամ արտաքին փորձագիտական եզրակացություն: Յոթ օրվա ժամկետը կարող է որոշ դեպքերում երկարաձգվել, օրինակ, եթե հակահիրավականության մասին որոշման կայացումը կախված է բողոքում բերվող փաստերի ճշմարտացիությունը ստուգելուց: Ժամկետը երկարաձգվում է նաև այն դեպքում, երբ սոցիալական ցանցը բողոքն ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում որոշման կայացումը փոխանցում է ինքնակարգավորման այն մարմնին, որն զբաղվում է հաշտարարությամբ (Clearing):

գ) Վարույթը բողոքի հիման վրա և մասնագիտական պարտականությունը

Սոցիալական ցանց գործարկողը բողոքի հիման վրա պետք է արդյունավետ և թափանցիկ վարույթ իրականացնի: Ըստ Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի §3, մաս 2-ի 1-ին կետի, այդ վարույթը պետք է ապահովի սոցիալական ցանց գործարկողի անհապաղ տեղեկացումն այն բանի մասին, որ բողոք է ներկայացվել: Ապա նա պետք է քննի, թե արդյո՞ք բովանդակությունը հակահիրավական է և պե՞տք է արդյոք հեռացվի: Բողոքը պետք է այնքան հիմնավոր լինի, որ միայն դրա հիման վրա հնարավոր լինի քննել հակահիրավականության հարցը: Այն բողոքը, որը նման որակյալ քննության հնարավորություն չի տալիս, սկզբունքորեն մնում է առանց քննության: Դրանից բացի, սոցիալական ցանց գործարկողը պարտավոր է յուրաքանչյուր միջոցառման մասին անմիջապես տեղեկացնել ինչպես բողոք բերողին, այնպես էլ օգտատիրոջը, և իր համապատասխան որոշումները նաև հիմնավորել (Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի §3 մաս, 2-ի 5-րդ կետ): Այս կարգավորումը պետք է հնարավորություն տա նրան, ով ենթարկվում է այս կարգավորմամբ նախատեսված միջոցառմանը, նպատակաուղղված գործել կարծիքի արտահայտման իր ազատությունն իրացնելու համար:

Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի §2-ը կարգավորում է սոցիալական ցանցը գործարկողների հաշվետվողականությունը: Նրանք պարտավոր են կիսամյակը մեկ իրավասու մարմիններին գերմաներեն լեզվով հաշվետվություն ներկայացնել այն մասին, թե ինչպես են կատարում Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի պահանջները: Նրանք առաջին հերթին պետք է տեղեկություն հաղորդեն բողոք բերելու և քննելու համակարգի ձևավորման մասին, բողոքների քանակի և ձեռնարկված լուծումների վերաբերյալ:

դ) Ինքնակարգավորման հաստատության ներգրավման հնարավորություն

Սոցիալական ցանցը գործարկողը կարող է հակահիրավական բովանդակության հեռացման որոշման կայացումը պատվիրակել կարգավորված ինքնակարգավորմանը: Կարգավորված ինքնակարգավորման մասին խոսում են այն դեպքերում, երբ պետական շրջանակում խնդիրների կատարմանը ներգրավվում են ոչ պետական հաստատություններ: Սովորաբար ինքնակարգավորման հաստատություններ ստեղծում են հենց կարգավորման ենթարկվող ընկերությունները: Պետությունը վերահսկողություն է իրականացնում ինքնակարգավորման հաստատությունների նկատմամբ դրանք ճանաչելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այդ ճանաչումը չեղարկելու միջոցով: Գերմանիայում այս մոդելը հայտնի է ամենից առաջ

մեդիայի վնասակար ազդեցությունից անչափահասների պաշտպանության ոլորտից, ինչը նաև օրինակ է ծառայել օրենսդրի համար: Այս բնագավառում ամենահայտնի հաստատությունը «Կինոտնտեսության կամավոր ինքնավերահսկողություն» կազմակերպությունն է *(գերմաներեն հապավումը՝* FSK*)*, որն իրավասու է հետևելու կինոյի ոլորտում անչափահասների պաշտպանության մասին դրույթների պահպանմանը:

ե) Հանձնման համար ներպետական լիազորված անձինք

Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի §5, մաս 1-ի համաձայն, սոցիալական ցանցեր գործարկողները պարտավոր են հանձնման համար ներպետական լիազորված անձ նշանակել: Բացի դրանից, նրանք պետք է իրենց հարթակում հեշտ ճանաչելի և անմիջականորեն հասանելի եղանակով օգտատերերի ուշադրությունը հրավիրեն այդ անձի վրա: Այդ դրույթի նպատակն է հիշյալ օրենքի §4-ի հիման վրա իրականացվող տուգանքի վարույթներում կամ հակահիրավական բովանդակության տարածման պատճառով գերմանական դատարաններում տեղի ունեցող դատավարություններում հնարավոր դարձնել քրեական հետապնդում իրականացնող մարմնի գրությունների հանձնումը հասցեատերերին: Անցյալում ցանցերի արտասահմանյան գործարկողներին ուղարկված այդպիսի գրությունները հաճախակի մնում էին անպատասխան: Այժմ այդ ոչ գոհացուցիչ վիճակը փոխվում է դեպի դրականը:

զ) Պատժամիջոցներ

Օրենքը որպես պատժամիջոց նախատեսում է մինչև 50 միլիոն եվրոյի տուգանք դիտավորությամբ կամ անզգուշությամբ պարտականությունները խախտելու համար: Բայց տուգանք չի նշանակվում խնդրո առարկա օրենքի դրույթներն առաջին անգամ խախտելու դեպքում: Պետք է առկա լինեն «սիստեմատիկ թերություններ»: Խոսքն, օրինակ, հակահիրավական բովանդակությունը կրկին չհեռացնելու կամ բողոքը քննելու և դրա մասին որոշում կայացնելու վարույթի անթափանցիկության դեպքերի մասին է: Այս տարվա հուլիսին Գերմանիայի Արդարադատության հարցերով դաշնային գերատեսչությունն առաջին անգամ օգտվել է պատժամիջոցներ նշանակելու հնարավորությունից: Գերատեսչությունը Ֆեյսբուքի հանդեպ երկու միլիոն եվրոյի տուգանք է նշանակել: Դաշնային գերատեսչության կարծիքով, Ֆեյսբուքը բավարար չափով չէր կատարել Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի §2-ով նախատեսված հաշվետվության պարտականությունը:

4. Գնահատում

Աչքի առաջ ունենալով բարձր տուգանքներ վճարելու ռիսկը՝ ցանցերը կասկածի դեպքում հակված կլինեն ավելի շուտ հրահանգել իրենց աշխատակիցներին հեռացնելու այս կամ այն

բովանդակությունը, քան այն թողնելու հարթակում: Այսպիսով, Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքն իր մեջ կրում է այսպես կոչված overblocking-ի վտանգ. երբ ցանցեր գործարկողները կասկածի դեպքում, համապատասխան մարմիններից առաջ ընկնելով, որոշում են ավելի շուտ հեռացնել կամ անմատչելի դարձնել գրառումները: Այսպես, Համբուրգ և Շլեզվիգ-Հոլշթայն երկրամասերի ՁԼՄ-ների հարցերով համատեղ գերատեսչությունը 2018-ին գրանցել է հեռացման արագության աճ: Այդ ժամանակահատվածում բերված բողոքների մոտավորապես 30%-ը հանգեցրել է հեռացման: Ընդ որում, հեռացումների մեծ մասը կատարվել է վիրավորական կամ ժողովրդի մեկ հատվածին ուրիշ հատվածների դեմ հրահրող բովանդակության պատճառով: Սրանով վերացված չէ այն մտահոգությունը, որ Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքը կհանգեցնի overblocking-ի: Դրական է այն, որ հիշյալ օրենքը հանգեցրել է հեռացման պրակտիկայի փոփոխության: Օգտատերերի բողոքներն այժմ ավելի հաճախ են հանգեցնում հեռացման: Թերությունն այն է, որ օրենքը չի նախատեսում Put-Back-ի *(վերադարձնելու)* ընթացակարգ: Ցանկալի է նման ընթացակարգ ունենալ այն դեպքերի համար, երբ սոցիալական ցանցը անիրավացիորեն է հեռացնում իրավաչափ բովանդակությունը:

Հեկտոր Հարքյոթեր
Հաղորդակցության դոկտոր, պրոֆեսոր,
Բոնն-Ռայն-Զիգ համալսարան

Լրագրողական էթիկա, մեդիա էթիկա, տեղեկատվական էթիկա Նորմատիվ հիմունքները և դրանց իրականացման հնարավորությունը (անհնարինությունը)

Ի. Դերակատարները «մեդիա խաղում»

Նա, ով այսօր, մեդիա դարաշրջանում, գործում է որպես մեդիա օգտատեր և կամ էլ արտադրող (մրցանակաբաշխության հարց՝ «Արդյո՞ք սրանց միջև կա տարբերություն մեդիա դարաշրջանում»), բարդ ընտրություն կատարելու ամենատարբեր առիթներն ունի: Որպես արտադրող՝ նա ինքն իրեն կհարցնի, թե ընդհանրապես ինչի՞ մասին գրի, ի՞նչ ձևով, ի՞նչ տոնայնությամբ, որքանո՞վ ընդգծի իր սեփական կարծիքը, արդյո՞ք հրապարակի գրածը ու եթե այո, ապա որտե՞ղ, ո՞ւմ հետ կամ ո՞ւմ դեմ փաստարկներ բերի և դա անելիս տեքստային, լրագրողական կամ հասարակական ո՞ր կանոնները պահպանի: Որպես օգտատեր՝ նա ինքն իրեն կհարցնի, թե ո՞ր ԶԼՄ-ներից և ալիքներից օգտվի, ի՞նչ ծավալով դրանցից օգտվի, դա մենա՞կ անի, թե՞ այլոց հետ, արդյո՞ք sharing economy-ի (այսպես կոչված՝ համատեղ սպառման -*խմբ.*) և սոցիալական մեդիայի դարաշրջանում իմացածը կիսի ուրիշների հետ, արդյո՞ք ծանոթանա դրանց հետ, արդյո՞ք դրա համար փող ծախսի: Գուցե

այդ խաղում կա նաև դերակատարների մի երրո՞րդ խումբ, խոսքը տարածողների մասին է: Սրանք մարդիկ են կամ հաստատություններ, որոնք մեդիա բովանդակություն չեն արտադրում, այլ միայն հրապարակում, շուկա են հանում, տարածում այլոց բովանդակությունը կամ խոչընդոտում այս ամենին: Եվ ո՞վ գիտի, գուցե այս խաղում չենք կարող հաշվի չառնել նաև մի չորրոդ խումբ. նկատի ունեմ այն պաշտոնական մարմիններին, որոնք ղեկավարում, կարգավորում են մեդիայի այս ամբողջ խաղը և սահմանում են խաղի կանոնները: Գործելակերպի այս բոլոր տարբեր հնարավորությունները կամ այն, ինչը ես այստեղ մի քիչ առանց կաշկանդվելու անվանեցի «մեդիա խաղ», հենվելով ԶԼՄ-ների էթիկայի մասնագետ Ռյուդիգեր Ֆունիոկի վրա, կարելի է ամփոփել «մեդիային առնչվող գործողություններ» հասկացության ներքո: Դրանով համապատասխան գործելակերպի տեսության տակ կընկնեն ԶԼՄ-ների արտադրությունը, ընկալումը, բաշխումը և կարգավորումը: Եվ ինչպես ցանկացած հանրային գործողություն, որին մասնակցում են մի քանի խաղակիցներ, և որի դեպքում տարբեր գործողությունների միջև ընտրելու հնարավորություն կա, մեդիային առնչվող գործողությունների կապակցությամբ նույնպես չափազանց կարևոր էթիկական հարցադրումներ են առաջանում, այսինքն՝ այնպիսի հարցեր, որոնք շոշափում են մեր սկզբունքային կարծիքները, գնահատականները և նախապատվությունները:

ԶԼՄ-ների էթիկայի դաշտի նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու համար, թերևս, կարելի է կարգավորման դաշտն առաջին քայլով բաժանել ըստ դերակատարների տարբեր խմբերի: Այդ դեպքում որպես լրագրողական էթիկա մենք կսահմանեինք այն կարգավորումների և էթիկական կշռադատումների դաշտը, որոնք ամենից առաջ վերաբերում են մեդիա արտադրողներին: Որպես օգտատերերի էթիկա կսահմանեինք այն դաշտը, որում առաջին հերթին դեր են խաղում ընկալման և ընկալողական վարքագծի հարցերը: Իսկ որպես տեղեկատվական էթիկա կսահմանեինք այն բնագավառը, որը վերաբերում է ԶԼՄ-ների բովանդակության բաշխմանը: Ստորև ես ավելի մանրամասն կլուսաբանեմ ԶԼՄ-ների էթիկայի այս առանձին բնագավառները կամ բաժինները: Ընդ որում, մասնավորապես կխոսեմ այն կարգավորումների և կառուցակարգերի (մեխանիզմների) մասին, որոնք ստեղծվել են Գերմանիայում՝ ԶԼՄ-ների էթիկային վերաբերող նորմերի պահպանումը հսկելու համար: Վերևում նշված չորրորդ սեկտորին՝ մեդիա կարգավորողներին, ես սկզբում չեմ անդրադառնա: Բանն այն է, որ մի կողմից հիմքեր կան այս դաշտի (քաղաքական) դերակատարներին ևս ԶԼՄ-ների էթիկայում ընդգրկելու և դրան առնչվող նորմատիվ դատողությունները և հարցադրումները նրանց որոշումների հիմքում դնելու համար, իսկ մյուս կողմից ԶԼՄ-ների կարգավորման հարցն ընդգրկում է մեդիա խաղն ամբողջությամբ, այնպես որ կարգավորողներին ուղղված հատուկ

էթիկան կլիներ ոչ այլ ինչ, եթե ոչ ակնարկային անդրադարձ մյուս սեկտորներին:

II. Լրագրողական էթիկա

ԶԼՄ-ներով զբաղվողներն այսօր կանգնած են էթիկային առնչվող բազմաթիվ հարցերի առջև: Բայց Գերմանիայում շատ դեպքերում նրանց մենակ չեն թողնում: Բանն այն է, որ այդ էթիկական հարցադրումներին պատասխաններ տալու համար կա ինստիտուցիոնալ օգնություն:

1. Ինքնակարգավորում

Ինչ վերաբերում է թերթերին և ամսագրերին, այսինքն՝ հին «տպագիր աշխարհի» դասական լրագրությանը, ապա Գերմանիայում գոյություն ունի ինքնակարգավորման օրգան՝ Գերմանական Մամուլի խորհուրդը: Սա գերմանացի լրագրողների և հրատարակիչների խոշոր միությունների կազմակերպություն է. խոսքը Գերմանական լրագիրների հրատարակիչների դաշնային միավորման (գերմաներեն հապավումը՝ BDZV), Գերմանական ամսագրերի հրատարակիչների միավորման (գերմաներեն հապավումը՝ VDZ), Գերմանացի լրագրողների միավորման (գերմաներեն հապավումը՝ DJV), ինչպես նաև last not least՝ Գերմանացի լրագրողների *(գերմաներենում՝ կին և տղամարդ լրագրողների)* միության մասին է: Մամուլի խորհուրդը հիմնվել է 1956թ.

նոյեմբերի 20-ին՝ բրիտանական Press Council-ի (ներկայումս՝ Press Complaints Commission) օրինակով: Դրա ստեղծմամբ նպատակ էր դրվել խոչընդոտելու մամուլի մասին դաշնային օրենքի ընդունումը, որը նախատեսելու էր հրապարակված լրագրողական կարծիքի նկատմամբ բավականին խիստ պետական վերահսկողություն:

Գերմանական Մամուլի խորհուրդը մշակել է հրապարակախոսական սկզբունքներ, որոնք անվանում են Մամուլի կոդեքս: Այն ընկալվում է որպես (տպագիր ԶԼՄ-ների) լրագրողների պատվո կոդեքս: Առաջին անգամ հրապարակվել է 1972-ին և վերջին անգամ փոփոխությունների ենթարկվել 2017-ին:

Մամուլի կոդեքսը պարտադիր ուժ ունի բոլոր լրագրողների համար, անպես որ դրա ենթադրյալ խախտումների դեպքում յուրաքանչյուր ոք կարող է բողոք ներկայացնել Մամուլի խորհրդին: Իր հերթական նիստերին Խորհուրդը որոշում է կայացնում բողոքի հիմնավորվածության մասին և կարող է անհրաժեշտության դեպքում «մատնանշել» սխալ վարքագիծը, արտահայտել իր «անհավանությունը» կամ նույնիսկ «նկատողություն» անել: Նկատողությունը Մամուլի խորհրդի ամենասուր գործիքն է, քանի որ նկատողություններ արվում են հարապարակայնորեն, իսկ հասցեատեր ԶԼՄ-ները պարտավոր են դրանց մասին հաղորդել իրենց հրապարակումներում:

2017-ին Գեմանական Մամուլի խորհուրդը 21 հրապարակային նկատողություն է արել, 58 անգամ անհավանություն հայտնել և 153 մատնանշում արել: Մինչ այժմ ամենաշատ բողոքները Խորհուրդն ստացել է 2015-ին Germanwings ավիաընկերության թիվ 9525 չվերթ կատարող ինքնաթիռի անկման մասին հաղորդագրությունների կապակցությամբ (430 բողոք):

2. Օրենքով սահմանված նորմերի վերահսկողություն

Բայց անշուշտ կա նաև օրենքով սահմանված ԶԼՄ-ների կարգավորում: Սա վերաբերում է ռադիո և հեռուստատեսային ծրագրեր արտադրող հաստատություններին: Հանրային հեռուստատեսության և ռադիոյի դեպքում, որը Գերմանիայում հենց լրագրության մեջ հատկապես մեծ կշիռ ունի, կարգավորումն իրականացնում են առանձին կայանների ռադիոյի և հեռուստատեսության խորհուրդները: Այդ մարմինների անդամ են տարբեր հասարակական կարգավիճակ ունեցող խմբերի միավորումներ: Քաղաքական շրջանակների ներկայացուցիչների կողքին դրանց թվին են պատկանում նաև խոշոր քրիստոնեական եկեղեցիների, արհմիությունների և գործատուների միավորումների, սպորտային միությունների և այլ կազմակերպությունների պատվիրակները: Գերմանիայում հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը կարգավորվում է ոչ թե ազգային, այլ դրան ստորադասված՝ երկրամասային (հողերի) մակարդակում, երկրամասային օրենքներով:

Մասնավոր հեռուստա- և ռադիո կայանների, օրինակ RTL, ProSieben, Sat1 խոշոր մասնավոր հեռուստակայանների կամ նաև բազմաթիվ տեղական մասնավոր ռադիոկայանների գործունեությունը Գերմանիայում կարգավորվում է օրենքներով: Դրա համար Գերմանիայի երկրամասերն ունեն երկրամասային լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններ՝ ՁԼՄ-ների հարցերով հանձնաժողովներով, որոնց անդամ են, ինչպես և հանրային կայանների խորհուրդներում, հասարակական կարգավիճակ ունեցող խմբերի ներկայացուցիչներ: Մեդիա ծառայություններից օգտվողները կարող են հաղորդումների սկզբունքների կամ ընդհանուր էթիկական կանոնների ենթադրյալ խախտումների դեպքում դիմել ինչպես հիշյալ խորհուրդներին, այնպես էլ ՁԼՄ-ների հարցերով հանձնաժողովներին:

3. Նորմերի վերահսկողություն քաղաքացիական հասարակության կողմից

ՁԼՄ-ների նկատմամբ պաշտոնական կամ կիսապաշտոնական վերահսկողության կողքին կա նաև ՁԼՄ-ների էթիկայի կանոնների պահպանումը հսկելու ոչ պաշտոնական ձև, որը կամավոր իրականացնում են քաղաքացիական հասարակության դերակատարները: Դրանց թվին են պատկանում, օրինակ, ոչ կառավարական կազմակերպությունները (NGOs), որոնք զբաղվում են հրապարակված կարծիքներով և լրագրողական

աշխատանքով: Այդպիսի՝ Initiative Nachrichtenaufklärung (Լուրերի պարզաբանում նախաձեռնություն, գերմաներեն հապավումը՝ INA) կոչված կազմակերպությունն, օրինակ, ամեն տարի «Մոռացված լուրերի կարևորագույն տասնյակ» ցուցակ է կազմում: Բնակչությունից ստացվող առաջարկությունների հիման վրա ուսանողական հետազոտող թիմերը Գերմանիայի տարբեր համալսարանական քաղաքներում կոմունիկացիոն գիտություններով և հասարակագիտությամբ զբաղվող ինստիտուտներում մի ամբողջ տարի հետազոտություն են կատարում պոտենցիալ թեմաների շուրջ, որոնցից այնուհետև անվանի գիտնականներից ու լրագրողներից բաղկացած ժյուրին ընտրություն է կատարում «Կարևորագույն տասնյակ» ցուցակի համար: Գերմանիայի ազգային մակարդակում գործող Deutschlandfunk կոչված միակ հանրային ռադիոկայանի լուրերի խմբագրության հետ INA-ի համագործակցության շնորհիվ «Մոռացված լուրերի» ցուցակը մեծ հրապարակայնություն ստացավ:

Սակայն քաղաքացիական հասարակության վերահսկողությունը նորմերի նկատմամբ վերջերս սկսել է իրականացվել նաև համացանցում watchblog-ների միջոցով, որոնք իրենց խնդիրն են համարում քննադատական անդրադարձ կատարել պրոֆեսիոնալ խմբագրությունների աշխատանքին: Այս տեսակի ամենահայտնի ծառայությունը Գերմանիայում Bildblog-ն է: Սկզբում նրա քննադատության թիրախը բացառապես Գերմանիայի խոշորագույն բուլվարային Bild թերթի աշխատանքն էր,

այստեղից էլ բլոգի անվանումը: Բայց արդեն տարիներ շարունակ Bildblog-ը մատնանշում է նաև ուրիշ ԶԼՄ-ների սխալ տեղեկատվությունը:

4. Մասնագիտական էթիկային առնչվող այլ ինքնակարգավորման մարմիններ և բացեր

Հաղորդակցության ոլորտում պրոֆեսիոնալ գործունեություն են ծավալում ոչ միայն լրագրողները: Մեդիա խաղում կան նաև ուրիշ դերակատարներ, որոնք առճակատվում են ԶԼՄ-ների էթիկային առնչվող հարցադրումների և համապատասխան կարգավորման անհրաժեշտության հետ:

Առաջին տեղում այստեղ պետք է հիշատակվի Public Relations ոլորտը: Գերմանիայում դրա դերակատարները համախմբվել են Public Relations-ի գերմանական խորհրդում (գերմաներեն հապավումը՝ DRPR) և հայտարարել են, որ ենթարկվում են PR ոլորտի վարքագծի Code de Lisbon կոդեքսին: Գովազդային տնտեսությունը ևս Գերմանիայում ունի իր սեփական օրգանը՝ Գերմանական գովազդային խորհուրդը, որն ինքն իր համար հիմնական կանոններ է սահմանել:

Այլ դերակատարներ, որոնք հանրությանը կարծիքներ են փոխանցում, հենց այնպես չէ, որ ենթարկվում են ԶԼՄ-ների էթիկային առնչվող վերահսկողությանը: Ասածը վերաբերում է մասնավորապես նոր կոմունիկացիոն մասնագիտություններին և հաղորդակցության հետ կապված գործունեության այն

ոլորտներին, որոնք առաջացել են թվայնացմանը զուգընթաց: Օրինակ, առցանց աշխատող լրագրողները միայն այն դեպքում են ենթարկվում Մամուլի կոդեքսի պահանջներին, եթե դրանք տպագիր հրապարակումների առցանց ճյուղավորում են: Գերմանիայում գնալով ավելի հաճախ ենք գործ ունենում այնպիսի հրապարակախոսության հետ, որը գործում է միայն առցանց ու այլևս չունի իր զուգահեռը տպագիր ոլորտում: Այդ դերակատարները Գերմանիայում դեռ որևէ կորպորացիայում համախմբված չեն և համապատասխանաբար չունեն նաև ինքնակարգավորման մարմիններ: Այդպիսին է, օրինակ, բլոգների լայն ոլորտը: Բայց թույլ են կազմակերպված նաև տնտեսական առումով արդյունավետ գործող Յուտյուբի մասնակիցները, որոնց քիչ են մտահոգում ԶԼՄ-ների էթիկայի հարցերը: Եթե այդ մեդիա դերակատարներին տրվի լրագրողի կարգավիճակ, և նրանց գործունեությունը որակվի որպես ռադիոյի և հեռուստատեսության գործունեությանը նման, ապա նրանք, թերևս, կենթարկվեն երկրամասային լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների և վերևում հիշատակված՝ դրանց հանձնաժողովների վերահսկողությանը: Սակայն Յուտյուբի մասնակիցներից շատերը լրագրող համարվելու հավակնություն չունեն և որպես influencer (հանրային կարծիքի վրա ազդեցություն ունեցող դերակատարներ), որոնք առաջին հերթին իրենց դիտում են որպես գովազդ տարածող, ավելի շուտ ձգտում են հրապարակախոսական դաշտը ազատել սահմանափակումներից: Այստեղ դեռ նոր պետք է նախաձեռնվի

ԶԼՄ-ների էթիկայի մասին քննարկում, կամ էլ, թերևս, անհրաժեշտ է մտածել կարգավորման արտաքին միջոցառումների մասին:

III. ԶԼՄ-ների էթիկային առնչվող քննարկումների և բանավեճերի օրինակներ

Մի քանի արդիական օրինակներով ցույց տանք կարգավորման անհրաժեշտությունը, բայց նաև՝ թե ինչ երկընտրանքի առաջ կարող են կանգնեցնել ԶԼՄ-ների էթիկայի հետ կապված հարցադրումների պատասխանները:

Գերմանական Մամուլի կոդեքսի 4-րդ կետում խոսքը «հետազոտության սահմանների» մասին է: Դրա մասին այնտեղ ասվում է հետևյալը.

> *«Անձանց վերաբերող տվյալներ, լուրեր, տեղեկատվական նյութեր և նկարներ ձեռք բերելիս չի կարելի կիրառել անազնիվ մեթոդներ»:*

Այս ձևակերպման հետ կարծես թե դժվար է չհամաձայնել, սակայն լրագրողական առօրյայում այն հարցեր է առաջ բերում: Բանն այն է, որ անազնիվ մեթոդների թվին են դասում, ասենք, նաև գաղտնի հետաքննությունը: Հանրային տեսանկյունից բազմաթիվ կարևոր թեմաներ, որոնք առանց լրագրողական հետաքննության երբեք հրապարակային չեն դառնա, կարող են լինել միայն գաղտնի հետաքննության առարկա: Այդպիսին են,

օրինակ, հետաքննությունները կազմակերպված հանցավորության ոլորտում, բայց նաև բազմաթիվ տնտեսական թեմաներ, որոնք գերմանական ձեռնարկությունների՝ գնալով ավելի սահմանափակ տեղեկատվական քաղաքականության պատճառով հաճախակի կարող են հետաքննության առարկա դառնալ միայն այն դեպքում, եթե լրագրողին չճանաչեն որպես այդպիսին: Մամուլի կոդեքսն ընդունում է, որ կա այդպիսի խնդիր, բայց դրան վերաբերող ձևակերպումները, ինչպես ստորև մեջբերվածը, շատ «փափուկ» են և կարող են տարբեր ձևով մեկնաբանվել.

> *«Գաղտնի հետաքննությունն արդարացված է առանձին դեպքերում, եթե դրանով ձեռք կբերվեն հատուկ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ, որոնք մատչելի չեն այլ եղանակով»:*

Այստեղ, օրինակ, կարող է հարց ծագել, թե արդյո՞ք եվրոպացի ազնվականների ծովափնյա արձակուրդից պապարացիների լուսանկարները «հատուկ հանրային հետաքրքրություն» են ներկայացնում: Հասարակության որոշ հատվածներ անկասկած դրան դրական պատասխան կտան, ինչը ցույց է տալիս, որ ԶԼՄ-ների էթիկային առնչվող նորմը կարող է խնդրահարույց լինել:

Մեկ ուրիշ արդիական օրինակ է պաշտպանությունը խտրականությունից: Մամուլի կոդեքսի 12-րդ կետում դրա մասին ասված է հետևյալը.

«Պատկանելությունը (որևէ էթնիկ խմբի), որպես կանոն, չպետք է հիշատակվի, բացի այն դեպքերից, երբ կա հիմնավորված հանրային հետաքրքրություն»:

Հանցագործների էթնիկ ծագման հարցը գերմանական հասարակայնությունում առաջացրել է զգալի պոռթկումներ և քաղաքական ամբարտակներ ճեղքել: Հատկապես 2015-ի այսպես կոչված փախստականների ճգնաժամին զուգընթաց, երբ ընդամենը մեկ տարում Գերմանիա ներգաղթեց ավելի քան 800.000 միգրանտ այն երկրներից, որտեղ քաղաքացիական պատերազմներ էին բռնկվել, աջ պոպուլիստական ու աջ ծայրահեղական կուսակցությունները ոչ գերմանացի հանցագործների հարցը սկսեցին օգտագործել որպես քաղաքական բանավեճերի զինամթերք: Այդ իսկ պատճառով Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա երկրամասի ներքին գործերի նախարարը 2019թ. օգոստոսին կարգադրեց հանցագործությունների մասին ոստիկանության հաղորդագրություններում սկզբունքորեն հիշատակել հանցագործների ազգությունը: Սակայն սա համատեղելի չէ Մամուլի կոդեքսի հիշյալ նորմի հետ:

Լրագրողական էթիկայի ոլորտում ՁԼՄ-ների էթիկային առնչվող այլընտրանքային պատկերացումների մի վերջին օրինակ է այն «արտոնությունների» հարցը, որոնք կարող են առաջանալ

լրագրողների համար նրանց աշխատանքի ընթացքում: Դրա մասին Մամուլի կոդեքսի 15-րդ կետում կարդում ենք.

> *«Հետաքննությունը և տեղեկատվությունը չեն կարող նվերներ, հրավերներ կամ զեղչեր ընդունելու արդյունքում ենթարկվել ինչ-որ ազդեցության, խոչընդոտվել կամ նույնիսկ խափանվել»:*

Միանգամայն ընդունված պրակտիկա է, որ լրագրողներն ստանում են, օրինակ, ինչ-ինչ թեմաներ մամուլում լուսաբանելու համար կազմակերպվող ճանապարհորդությունների, թանկ ընթրիքների կամ մշակութային միջոցառումների հրավերներ: Լրագրողներին տրամադրվում են զեղչեր, օրինակ, նոր ավտոմեքենա կան էլէկտրոնային սարքավորումներ գնելու համար: Այդ իսկ պատճառով դժվար է պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք լրագրողների հաղորդած տեղեկատվությունը ենթարկվել է ինչ-որ ազդեցության: Նրանք, ովքեր տրամադրում են նման առավելություններ, դա անում են, ինչպես կարելի է խելամտորեն ենթադրել, ոչ անշահախնդիր: Մյուս կողմից, այն տնտեսական ճնշման պարագաներում, որին այսօր ենթարկվում է աշխատանքը մամուլում, որոշակի լրատվություն այլևս հնարավոր չէ ֆինանսավորել առանց այդպիսի օժանդակության: Հասարակ լուծում այստեղ չի նշմարվում: Օրենսդրությանը համապատասխանելու՝ բազմաթիվ ձեռնարկությունների ջանքերին զուգընթաց ՁԼՄ-ների ներկայացուցիչներին համեմատաբար զգալի արտոնություններ

ընձեռելու պատրաստակամությունն ավելի շուտ նվազում է: Բայց այստեղ տարբերություններ կան՝ կախված տնտեսության ճյուղից: Օրինակ, ճանապարհորդությունների հետ կապված և ավտոմեքենաշինության ճյուղերը (սրանք Գերմանիայում ահռելի շրջանառություն ունեցող տնտեսական ոլորտներ են) լրագրողներին տնտեսապես ընդառաջողների «վատ համբավ» ունեն:

IV. Օգտատերերի էթիկան

Մեդիա ուղերձների հասցեատերերին նույնպես վերաբերում են ԶԼՄ-ների էթիկային առնչվող հարցադրումները: Դա երևում է ամենաստորին մակարդակում արդեն այն բանից, որ ընթերցողը/օգտատերը/դիտողը, որպես կանոն, ունի որոշակի ակնկալիք մեդիա ուղերձների կարևորության կապակցությամբ: Բայց վերաբերելիությունը ինքն արդեն «խիտ էթիկական հասկացություն» է, ինչպես կձևակերպեր բրիտանացի բարոյախոս փիլիսոփա Բեռնարդ Ուիլյամսը: Բանն այն է, որ վերաբերելիությունը նորից ամենաստորին և ամենահեշտ սահմանելի մակարդակում կարող է հասկացվել որպես վերաբերելիություն՝ գործողությունների՛ առումով: Մենք, ըստ այդմ, նախապատվությունը տալիս ենք այն մեդիա ուղերձներին, որոնք ուղղակիորեն կամ միջնորդված ազդեցություն ունեն մեր կյանքի, մեր սեփական առօրյա գործողությունների վրա: Բայց եթե մենք մեր առօրյա կյանքը և դրանում կայացվելիք որոշումները համաձայնեցնենք ԶԼՄ-ների մեր ընկալման հետ,

ապա ակնհայտ է, որ այն հարցը, թե մենք ինչպես ենք օգտվում ԶԼՄ-ներից, թե ինչպես ենք ընտրում կայանները և բովանդակությունը, գործողությունների առումով չափազանց մեծ կարևորություն ունի:

Օգտատերերի որոշումները և կայանների, ծրագրերի և բովանդակության ընտրությունը դրանից դուրս զգալի ազդեցություն ունեն մեդիա արտադրողների լրագրողական և լրատվական որոշումների վրա: Այնքան էլ պատահական չէ այն, որ օգտատերերի վերաբերյալ գերմանական մեդիա տնտեսության կատարած հետազոտությունները, ինչպես օրինակ, հեռուստատեսային կայանների դիտման քվոտաների պարզումը, շուկայի ամենածավալուն և միաժամանակ ամենածախսատար հետազոտություններից են: Այսինքն՝ թե օգտատերը ո՞ր ԶԼՄ-ներին է դիմում, ե՞րբ, ի՞նչ չափով և ի՞նչ ինտենսիվությամբ, բոլորովին էլ հասարակ հարցեր չեն և չափազանց կարևոր են ԶԼՄ-ների էթիկայի տեսանկյունից:

Դրան ավելանում է այն, որ գնալով փոքրանում է դերերի բաշխումը մեդիա արտադրողների և օգտատերերի միջև: Էլվին Տոֆլերն (Alvin Toffler) արդեն 1980-ին քննարկման է դրել prosumer հասկացությունը: Նա այդպես էր կոչում այն դերակատարներին, որոնք միաժամանակ և արտադրող են *(producer)* և սպառող *(consumer)* մեդիա դաշտում, որտեղ յուրաքանչյուր սմարտֆոնի տեր այսօր իր գրպանում կրում է արտադրության սարք, որի շնորհիվ ունակ է գրեթե

պրոֆեսիոնալ մեդիա արտադրող կամ տարածող դառնալու, ինչի արդյունքում գուցե և այլևս հնարավոր չէ լրագրողական և պրոֆեսինալ ԶԼՄ-ների էթիկան հստակորեն անջատել օգտատերերի և սիրողների էթիկայից: Հաղորդակցության մասնագետ, ավստրալացի գիտնական Աքսել Բրունը (Axel Bruns) այդ պատճառով մեդիա խաղի առանձնահատուկ հարաբերությունների համար ստեղծել է *produser* հասկացությունը, իսկ գործընթացն անվանել *produsage*: Նա դրանով հենվում է համացանցում user-generated content-ի *(օգտագիրոջ կողմից ստեղծած բովանդակություն)* լայն ոլորտի վրա՝ ակնարկելով, օրինակ «Վիկիպեդիա» առցանց հանրագիտարանը, Open Source Software-ը կամ նաև բլոգների ոլորտը:

Իսկ ի՞նչ կանոններ են և ի՞նչ կարգավորումներ են գործում այդ produser-ների կամ prosumer-ների համար: Արդյո՞ք նրանք պարտավոր են ենթարկվել մասնագիտական չափորոշիչներին: Անհրաժե՞շտ է արդյոք այստեղ պետության կամ գլոբալ մեդիում ինտերնետի դեպքում՝ վերպետական միջամտություն: Սրանք բարդ հարցեր են, որոնց քննարկումն անհրաժեշտ է շարունակել:

V. Մարտահրավերներ տեղեկատվական էթիկայի համար

Հատկապես ԶԼՄ-ների բաշխման դաշտը, որին ես սկզբում անդրադարձել եմ «տեղեկատվական էթիկա» հասկացության ներքո, այսօր առճակատվում է բոլորովին նոր

մարտահրավերների հետ: Դրանց թվում է առաջին հերթին այն, որ դասական ԶԼՄ-ների համար բոլորովին նոր մրցակիցներ են երևան եկել, այն է՝ հարթակներ գործարկողները, որոնց միջնորդ են անվանում: Նրանց գործառույթը մինչև հիմա իրականացրել է մեդիա տնտեսությունը՝ տարածելով բովանդակություն արտադրողների (այսինքն, օրինակ, լրագրողների կամ կինոարտադրողների) մեդիայով հաղորդվող ուղերձները: Մինչդեռ թվայնացման դարաշրջանում այդ գործառույթը իրականացնում են նաև որոնող մեքենաները, սոցիալական մեդիա գործարկողները կամ էլ առցանց տեսահարթակները: Բայց հարթակներ գործարկողները, ամենից առաջ՝ ամերիկյան ծագում ունեցող, այսօր մեծ մասամբ դեռևս հերքում են, որ ընդհանրապես կապված են հաղորդված բովանդակության հետ և հաճախակի իրենք իրենց անվանում են զուտ տեխնոլոգիական ծառայություններ մատուցող: Սակայն այս ինքնաբնութագիրը շատ արագ բախվում է ԶԼՄ-ների էթիկայով պայմանավորված սահմանների հետ, երբ, օրինակ, որպես օգտագործման պայման, սեռական բարոյականության հարցերում Գերմանիայում բովանդակության հրապարակման վրա ազդեցություն են գործում ԱՄՆ-ին հատուկ ու եվրոպական տեսանկյունից մի քիչ պուրիտանական պատկերացումները: Սոցիալական մեդիա հարթակները դրանից դուրս բարձրացնում են նաև էթիկային առնչվող բոլորովին այլ կարգի հարցեր, եթե նայենք օգտատերերի միջև տեղի ունեցող փոխշփմանը: Cyberbullying, shitstorm, fake news կամ commentariat և նման գլխաբառերն արդեն ցույց են տալիս, որ հիմնարար էթիկական և

հասարակական արժեքների մասին մեր պատկերացումները facebook & co. մեկնաբանությունների սյունակներում նոր գնահատականներ են ստանում: Մեդիա էթիկայի առնչությամբ գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որը շատ արագ կարող է վերածվել քաղաքական գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտության, նկատվում է, երբ, օրինակ, մեդիա մասնագետ Բեռնարդ Փյորքզենը (Bernard Pörksen) խոսում է «խմբագրող հասարակության» մասին: Փյորքզենը պահանջում է լրագրողական չափորոշիչներ բոլորի համար, որովհետև այսօր հրապարակումներ անում են բոլորը, թեև միշտ չէ, որ դա գիտակցում են: Այստեղ գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը, թերևս, կարող է կայանալ նաև մեդիա դերակատարներին հենց իրենցից պաշտպանելու համար:

Դերերի փոփոխություններ մեդիա խաղում տեղի են ունենում ոչ միայն պրոֆեսիոնալ արտադրողների և սիրողական մոտեցում ունեցող սպառողների, այլ նաև հրապարակում անողների և այն անձանց միջև, ում մասին սովորաբար հրապարակումներ են արվում: Այս գործընթացը կոմունիկացիայի մասնագետները կոչում են դեզինտերմեդիացիա (desintermediation): Դրա տակ հասկանում են այն, որ մեդիա դերակատարներին բնորոշ միջնորդելու ծառայությունը շրջանցվում է, որովհետև ձեռնարկությունները կամ կազմակերպություններն անմիջապես դիմում են սպառողներին և քաղաքացիներին: Եթե, ասենք, պետական մարմինները կամ կուսակցությունները ստեղծում են սեփական newsroom-ն ու խմբագրական կառույցները, ապա ձև է

արվում, թե առկա է լրագրողական որակ, մինչդեռ իրականում գործ ունենք որոշակի շահերով ուղղորդված հաղորդակցության ձևի հետ: Եթե խիստ լինենք, ապա, թերևս, կարող ենք նման տեսակի հրապարակումը fake news անվանել:

ԶԼՄ-ների էթիկային առնչվող մարտահրավերները շատ ավելին են պահանջում, քան զուտ netiquette (համացանցից ճիշտ օգտվելու կանոններ՝ ինտերնետային էթիկետ) ստեղծելը կամ անչափահասների պաշտպանությունը, կամ անչափահասների մեդիա հմտություններին զգոնությամբ հսկելը (ընդ որում վերջին երկու հասկացությունները որոշակի հետաքրքիր պարադոքսային հարաբերակցության մեջ են, քանի որ ինչքան ավելի հմուտ է անչափահասը մեդիա ոլորտում, այնքան ավելի հեշտ կարող է շրջանցել անչափահասների պաշտպանության կառուցակարգերը): Գլոբալացված ԶԼՄ-ների ժամանակներում գլոբալացված պատասխանատվության էթիկան դառնում է անհրաժեշտություն: Զուտ ազգային, ներպետական մակարդակում մեդիա էթիկային առնչվող ծանրակշիռ խնդիրները հնարավոր չի լինի լուծել:

Գրականության ցանկ

Bruns, Axel (2007). "Produsage: Towards a Broader Framework for User-Led Content Creation". In: Proceedings Creativity & Cognition. Washington, DC. 6.

Deutscher Presserat (2019): Pressekodex. Online: https://www.presserat.de/pressekodex/pressekodex/#panel-undefined [zuletzt abgerufen: 30.08.2019].

Funiok, Rüdiger (2011): Medienethik. Verantwortung in der Mediengesellschaft. 2. Aufl., Stuttgart (Kohlhammer).

Haarkötter, Hektor (2015): „Wie kommt die Nachricht (nicht) in die Medien?“ In: Ronald Thoden (Hg.): ARD & Co. Wie Medien manipulieren. Bd. 1. Frankfurt/Main 2015 (Selbrund Verlag), S.172-185.

Haarkötter, Hektor (2016): "Kein Thema!? Informationsfreiheit und Nachrichtenvernachlässigung". Communicatio Socialis, H.4, S.367-376.

Haarkötter, Hektor und Jörg-Uwe Nieland (2017): Nachrichten und Aufklärung. 20 Jahre Initiative Nachrichtenaufklärung. Wiesbaden (Springer VS).

Pörksen, Bernhard (2018): Die große Gereiztheit: Wege aus der kollektiven Erregung. München (Hanser).

Toffler, Alvin (1983): Die dritte Welle, Zukunftschance. Perspektiven für die Gesellschaft des 21. Jahrhunderts. (Übers., The third wave 1980), München 1983 (Goldmann).

Williams, Bernard (1985): Ethics and the Limits of Philosophy, Harvard (University Press).

Եզրափակիչ միջոցառման նյութեր

Թոբիաս Բրինգս Վիզեն
Քյոլնի համալսարան

Կարգավորումից խուսափելու սոցիալական ցանցերի ռազմավարությունները

«Անթույլատրելի բովանդակության» հետ Ֆեյսբուքի վարվելակերպի օրինակով

Իմ զեկույցի թեման խիստ բազմակողմ է: Ես կարող էի այս առավոտ խոսել միանգամայն տարբեր սոցիալական ցանցերի մասին: Ընդ որում, կարող էի անդրադառնալ նաև բազմաթիվ տարբեր թեմատիկ ոլորտների՝ հարկեր վճարելու պարտավորությունից խուսափելու նպատակով այլ վայր տեղափոխվելը, մրցակցությունը խաթարող գործողությունները, բացերը տվյալների պաշտպանության և տվյալների օգտագործման ոլորտում, նպատակաուղղված՝ հատկապես քաղաքական գովազդը, ալգորիթմների միջոցով տարբեր բովանդակություն ունեցող տեքստերի անհատականացված նկարագրությունը և դրանց ներգործությունը մարդկանց վարքագծի վրա: Բայց քանի որ ժամանակը սահմանափակ է, կուզենայի կենտրոնանալ այն սոցիալական ցանցի վրա, որի վարքագիծը դրա ներկայության և հեռահարության պատճառով ամենամեծ ազդեցությունն է ծավալում: Ու ցանկանում եմ խոսել այն թեմատիկ ոլորտի մասին, որի կոնֆլիկտային ներուժը, չնայած տարբեր ծառայությունների համալիր բնույթին, ամենից հեշտն է բացահայտել: Կարճ ասած, ցանկանում են խոսել այն

մասին, թե ինչպես է Ֆեյսբուքը վարվում այսպես կոչված «անթույլատրելի բովանդակության» հետ: Եթե ավելի պարզ ասենք, ապա դա այն բովանդակությունն է, որը տարբեր ձևերով տարածվում է օգտատերերի կողմից Ֆեյսբուքի միջոցով՝ խախտելով հենց Ֆեյսբուքի սեփական «ընկերության չափորոշիչները» և/կամ պետական իրավունքը:

Ընդ որում, պետական այդ թեմատիկ ոլորտում կարգավորման նկատմամբ Ֆեյսբուքի վերաբերմունքն ընդհանուր կերպով կարելի է բաժանել երեք փուլերի: Հաջորդիվ ցանկանում եմ ներկայացնել այդ փուլերը՝ մի քանի ակնառու օրինակներ բերելով եվրոպական տարածքից:

<u>1-ին փուլ՝ ոնդամենը մասնավոր ձեռնարկություն, որն առաջարկում է կամավոր ծառայություն</u>

Իր սկզբնական փուլում Ֆեյսբուքն առանձնապես վախենալու առիթ չուներ:

Ձեռնարկությունն աճել է այն ժամանակահատվածում, երբ համացանցի կարգավորումը ոչ միայն դիտվում էր որպես թույն՝ տեխնիկական ու տնտեսական նորարարությունների համար, այլ նաև պետական միջամտությունները համաշխարհային ոստայնին համարվում էին վտանգավոր: Համացանցը համարվում էր տեղեկատվության և հաղորդակցության արմատապես նոր միջոց (մեդիում): Այն մարդկանց առաջարկում էր այնպիսի ազատություններ և հնարավորություններ, որոնք նրանց չէին

կարող տալ այլ լրատվամիջոցներ: Ֆեյսբուքի համար ցանկալի էր, որ այս իրավիճակը չփոխվի: Դրան ավելանում էր այն, որ Ֆեյսբուքը տարիներ շարունակ դիտվում էր որպես այն, ինչն ինքն սկզբում էր ու դեռ երկար ժամանակ էլ ուզում էր մնալ: Ընդամենը մասնավոր ձեռնարկություն, որը շուկայում կամավոր ծառայություն է առաջարկում, ձեռնարկություն, որը ցանկալի է, որ կարգավորման ենթարկվի ցանկացած ուրիշ նորմալ ձեռնարկության նման:

Սակայն Ֆեյսբուքի օգտատերերի թվի ուշագրավ աճը զգայուն դարձրեց նաև առաջին ծանրակշիռ խնդիրների ընկալման համար: Դրանք սկզբում հատկապես պարզորոշ երևացին տվյալների պաշտպանության ոլորտում: 2012թ. հունվարին Եվրոպական հանձնաժողովի առաջին առաջարկը այսօր ամբողջ աշխարհում հայտնի «Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի» վերաբերյալ ուղիղ արձագանքն էր այն բանի, թե ինչպես էր Ֆեյսբուքը վարվում իր օգտատերերի անձնական տեղեկությունների հետ: Տարիներ տևած վեճը տվյալների անվտանգության շուրջ ամբողջությամբ փոխեց Ֆեյսբուքի մասին պատկերացումը: Ձեռնարկության հեռահարությունը և դրա հետ կապված հզորությունը հայտնվեցին համեմատաբար լայն հասարակայնության ուշադրության կիզակետում: Այդ վեճը նաև առաջին անգամ առիթ դարձավ՝ լայնորեն քննարկելու այն հարցը, թե արդյո՞ք Ֆեյսբուքի նման ձեռնարկությունների համար հատուկ կանոններ պետք է գործեն:

2-րդ փուլ՝ ոչ կամավոր համագործակցություն

Այդ իսկ պատճառով ժամանակի հետ ավելի մեծ քննադատության արժանացավ այն, թե ինչպես էր Ֆեյսբուքը վարվում իր հարթակում տեղադրված բովանդակության հետ: Ճիշտ է, ձեռնարկությունն արդեն այն ժամանակ պարտավորեցնում էր պահպանել իր սեփական «ընկերության չափորոշիչները», բայց այդ չափորոշիչները վաղուց գտնվում էին կարծիքներ արտահայտելու ազատության ամերիկյան ավանդույթի՝ հեռու տանող հորձանուտում: Կասկածի դեպքում գործում էր Free Speech! (ազատ խոսք) սկզբունքը: Ֆեյսբուքը նաև հստակեցրեց, որ օգտատերերին չպետք է խրտնեցնել գրաքննությամբ:

Սակայն տրամադրությունը փոխվեց: Հատկապես քաղաքացիական հասարակության խմբերը ակտիվացան և սկսեցին հետևել այն բանին, թե ով և ինչ է տարածում Ֆեյսբուքում ու թե ինչպես է դրան արձագանքում ձեռնարկությունը՝ Ֆեյսբուքը: Քանի որ գնալով Ֆեյսբուքն ավելի ու ավելի շատ երկրներում էր օգտատերեր ձեռք բերում, աստիճանաբար սկսեց նաև բախվել կարծիքի արտահայտման ազատության սահմանների մասին տարբեր պատկերացումների հետ: Բացի դրանից, երևաց, որ կեղծ տեղեկությունները և ատելության խոսքը Ֆեյսբուքում հասարակական համակեցության համար կարող են ծանրակշիռ հետևանքներ ունենալ: Թվային ու անալոգային տարածքների միջև ինտենսիվ փոխազդեցությունը հատկապես ակնառու կերպով էր

դրսևորվում 2012-ից սկսած Մյանմարում: Ռոհինգյաների մահմեդական փոքրամասնության հետ կապված հասարակական հակամարտությունը, որը տարիների ընթացքում բազմաթիվ զոհերի պատճառ դարձավ և փախստականների հոսք առաջացրեց, անընդհատ շատ մեծ չափով թեժացել է Ֆեյսբուքի միջոցով տարածված գրառումներով: Կարճ ասած, մարդիկ սկսեցին Ֆեյսբուքում «անթույլատրելի բովանդակությունը» ավելի ու ավելի ընկալել որպես խնդիր: Խնդիր, որի համար պատասխանատվությունը դնում էին ընկերության վրա:

Սակայն պետությունները չէին շտապում այդ զարգացմանը արձագանքել հատուկ միջոցառումներով: Ճիշտ է, ասվում էր, թե իրավունքը գործում է նաև համացանցում, բայց խնդիրն այսօր էլ կա. միշտ չէ, որ հնարավոր է իրավունքն այնտեղ արդյունավետ կերպով իրացնել: Պետությունների ջանքերը ձախողվում էին օգտատերերի անանունության կամ արտասահմանում անհասանելիության պատճառով: Մինչ պետությունները բախվում են իրենց ինքնիշխանության սահմանների հետ, առաջարկողները աշխարհով մեկ բացարձակ կերպով վերահսկում են իրենց հարթակները: Իրավունքի կենսագործման տեսանկյունից նրանք վճռորոշ դիրք են զբաղեցնում: Միայն թե նրանց բիզնես մոդելում ցավոք չկա խթան, որ նրանք կատարեն հարյուրավոր տարբեր իրավակարգերի պահանջները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ են արտաքին խթաններ պետությունների համագործակցությունն ապահովելու համար: Բայց այստեղ երևում է սրանից բխող մի խնդիր, որը մինչև այսօր

էլ դեռ ամբողջությամբ բացահայտված չէ: Ինչպիսի՞ն պետք է իրականում լինեն այդ արտաքին խթանները: Այսօր էլ դեռ պետությունները չունեն սոցիալական ցանցերի կարգավորման վերաբերյալ հստակ դիրքորոշումներ և հայեցակարգեր:

Այս ֆոնին զարմանալի չէ, որ ճնշումը Ֆեյսբուքի և համանման ընկերությունների վրա սկզբում չափավոր է մեծացվել: Պետությունները սոցիալական ցանցերից ակնկալում էին պարզապես համագործակցություն՝ բովանդակության հետ վարվելու համատեղ հայեցակարգ մշակելու գործում: Այդպես սկսվեց երկրորդ փուլը՝ «ոչ կամավոր համագործակցության» փուլը, որում Ֆեյսբուքն առաջին անգամ իսկապես հարկադրված եղավ պաշտպանվել այս թեմատիկ ոլորտում կարգավորման փորձերից:

Եվրոպայում այն խթանեց Գերմանիայի արդարադատության նախարար Հայկո Մասը: Երբ Գերմանիայում ևս զգալի դարձավ ատելության խոսքի տարածումը, նա 2015թ. սեպտեմբերին նախաձեռնեց այսպես կոչված Task Force *(օպերատիվ խումբ)*: Այդ Task Force-ում սկզբում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողքին ներկայացված էին նաև Գուգլը, Ֆեյսբուքը և Թվիթերը: Նրանց նպատակն էր միասին մշակել համացանցում ապօրինի բովանդակության հետ վարվելու գաղափարներ: 2015թ. դեկտեմբերին Task Force-ը հրապարակեց իր հայեցակարգը: Այդ հրապարակմամբ խմբի մաս կազմող առաջարկողները մասնավորապես պարտավորվում էին անմիջապես քննել օգտատերերից ստացած բողոքները և

գերմանական քրեական իրավունքը խախտող բովանդակությունը հեռացնել 24 ժամվա ընթացքում:

Համեմատելի զարգացում տեղի ունեցավ Եվրոպական Միության մակարդակում: Եվրոպական հանձնաժողովը համաձայնության եկավ Ֆեյսբուքի, Մայքրոսոֆթի, Թվիթերի և Յուություբի հետ «Համացանցում ապօրինի ատելության խոսքի դեմ պայքարի վարքագծի կոդեքս» մշակելու վերաբերյալ, որը հրապարակվեց 2016-ի մայիսին, և որի պահանջները առաջարկողները պարտավորվեցին պահպանել:

Առաջացավ շարունակական փոխանակում՝ Ֆեյսբուքը մյուսների հետ միասին զբաղվեց կառավարությունների պատկերացումներին համապատասխան սեփական կարգավորումներ մշակելով, իսկ կառավարությունները սկսեցին ստուգել այս կարգավորման արդյունքները: Այստեղ սոցիալական ցանցերի համար Եվրոպայում կարգավորումից խուսափելու հրաշալի հնարավորություն էր առաջացել: Բայց նրանք բաց թողեցին այդ շանսը: Նրանց աշխատանքը սկզբնական փուլում պարզապես արդունավետ չէր: Հետաքրքիր է նայել, թե դա ինչ դինամիկա առաջացրեց Եվրոպական Միության մակարդակով և Գերմանիայում:

2016թ. հոկտեմբերին ու նոյեմբերին փորձագետների մի խումբ առաջին անգամ Եվրոպական հանձնաժողովի համար քննեց, թե ինչպես են պահպանվում հիշյալ Վարքագծի կոդեքսի պահանջները: Այդ առաջին ստուգման արդյունքներն սթափեցնող

էին: Թեև Ֆեյսբուքը արագ էր արձագանքում բողոքներին, բայց միանշանակ հակահիրավական բովանդակության ընդամենը 28,3%-ն էր հեռացնում: Ընդհանուր առմամբ, սոցիալական ցանցերի հեռացման քվոտան կազմում էր ընդամենը 28,2%:

Նման վատ արդյունքներ ցույց տվեց Task Force-ի կողմից Գերմանիայում կատարած համեմատելի ստուգումը: Առաջին ստուգումը 2016-ի հուլիսին և օգոստոսին բացահայտեց հիշյալ բովանդակությունը հեռացնելու՝ Ֆեյսբուքի անբավարար պրակտիկան: Միանշանակ հակահիրավական բովանդակությունն օգտատերերի բողոքներից հետո հեռացվում էր ընդամենը դեպքերի 45%-ում: Միայն անչափահասների պաշտպանությանն ուղղված jugendschutz.net պետական կենտրոնի մատնանշումից հետո էր, որ այդ քվոտան աճեց՝ հասնելով 89%-ի: Երկրորդ ստուգումը կատարվեց 2017-ի սկզբին, պարզվեց, որ օգտատերերի բողոքների դեպքում Ֆեյսբուքի հեռացման քվոտան և արձագանքման արագությունը նույնսիկ ավելի անբավարար էին դարձել: Ընդհանուր առմամբ, Ֆեյսբուքը հեռացնում էր անկասկած հակահիրավական բովանդակության ընդամենը 37%-ը, անհրաժեշտ եղավ jugendschutz.net-ի մատնանշումը, որպեսզի այդ թիվը հասնի 93%-ի: Թվիթերի արդյունքներն ավելի հիասթափեցնող էին: Միայն Յություբի արդյունքներն էին հուսադրող:

Դրանով սոցիալական ցանցերի «հսկողության ներքո իրականացվող սեփական կարգավորման» ծրագիրը ձախողվեց գերմանական պետության համար: Անկախ սեփական

կարգավորման և ինքնակարգավորման ուրիշ հնարավոր խնդիրներից՝ պարզվեց, որ Ֆեյսբուքի և մյուսների հեռացման պրակտիկան, ըստ գերմանական իրավունքի չափանիշների, պարզապես բավարար չափով արդյունավետ չէր: Այդ իսկ պատճառով 2017թ. մարտին ներկայացվեց Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի առաջին նախագիծը, 2017-ի հունիսին օրենքն ընդունվեց և 2017թ. հոկտեմբերի1-ին մտավ ուժի մեջ: Որքանով տեղեկացված եմ, դուք այս օրենքի մասին արդեն խոսել եք աշխատանքային քննարկումների շրջանակում, այնպես որ մանրամասներին չեմ անդրադառնա: Կարևորը միայն այն է, որ գերմանական պետությունն այժմ օրենքով պարտավորեցրել է Ֆեյսբուքին և մյուսներին կիրառել բողոքների առնչությամբ սահմանված կառուցակարգը՝ մեխանիզմը, և սպառնացել այդ օրենքի խախտումների դեպքում սահմանել մի քանի միլիոն եվրոյի տուգանքներ: Ցավոք, դրանից կարճ ժամանակ անց գերմանական Task Force-ն ավարտեց իր աշխատանքը, այնպես որ այսօր առկա չեն Գերմանիայում հիշյալ օրենքի ներգործության վերաբերյալ իրապես հուսալի թվեր:

Բայց դրա փոխարեն շատ հետաքրքիր զարգացում արձանագրվեց Եվրոպական Միության մակարդակով: Արդեն նրա երկրորդ ստուգման ժամանակ 2017-ի մայիսին, այսինքն՝ Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքի նախագծի հայտնի դառնալուց ընդամենը մի քանի շաբաթ անց, անկասկած հակահիրավական

բովանդակության հետ կապված իրավիճակը զգալիորեն բարելավվեց: Հեռացման քվոտան ընդհանուր առմամբ 28,2%-ից աճեց 59,1%-ի: Ֆեյսբուքն այժմ հեռացնում էր նույնիսկ դեպքերի 66,5%-ում անկասկած հակաիրավական բովանդակությունը: Չորրորդ և մինչև հիմա վերջին ստուգման ժամանակ 2018թ. նոյեմբերին ու դեկտեմբերին հեռացման քվոտան արդեն ընդհանուր առմամբ կազմել էր 71,7%: Ֆեյսբուքը 82,4%-ով նույնիսկ ավելի լավ արդյունքի էր հասել:

Գուցե և ուրիշ գործոններ նույնպես նպաստել են դրան, բայց ակնառու է, որ սոցիալական ցանցերն իրենց մոդերացիայի պրակտիկան ԵՄ տարածքում հենց այն ժամանակ մեծ չափով բարելավեցին, երբ Գերմանիան՝ Եվրոպայում առաջինը, Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքով զգալիորեն խստացրեց իր կարգավորումը: Համենայնդեպս, Եվրոպական հանձնաժողովը 2019-ի փետրվարին արձանագրեց. «Չորրորդ ստուգումը հաստատեց, որ սեփական կարգավորումն աշխատում է»:

Ուրեմն հեփի-էՆդ Ֆեյսբուքի և մյուսների համար:
Դուք արդեն գիտեք, որ պատասխանն է՝ «Ո՛չ»: Բայց ինչո՞ւ:

Անշուշտ կան բազմաթիվ առանձին պատճառներ, որոնք կարելի կլիներ այստեղ նշել: Բայց կարծում եմ, որ ամենամեծ խնդիրն այն է, որ անգամ արդյունավետ սեփական կարգավորումն ի վիճակի չէ լուծելու Ֆեյսբուքի և կառավարությունների միջև առկա հետևյալ հիմնական կոնֆլիկտը՝ Ֆեյսբուքը հիմա

աշխարհով մեկ ունի շուրջ 2,45 միլիարդ ակտիվ օգտատեր: Որոշ երկրներում Ֆեյսբուքը նույնիսկ նույնացվում է համացանցի հետ: Դա զարմանալի չէ, քանի որ հենց դա է Ֆեյսբուքի հավակնությունը. այն ուզում է լինել այնպիսի հարթակ, որը լքել իր օգտատերերն ընդհանրապես չուզենան, որովհետև այնտեղ գտնում են այն ամենը, ինչի կարիք ունեն համացանցում: Այսինքն, Ֆեյսբուքն ունի հեռահարություն ու դրանով իսկ՝ իշխանություն: Քանի որ Ֆեյսբուքը մնում է մասնավոր տնտեսական ձեռնարկություն, մենք սիրում ենք խոսել «շուկայի իշխանության» մասին: Բայց իրականում դա ավելին է. Ֆեյսբուքին հաջողվել է հասարակական կյանքի մի էական հատված տեղավորել իր հարթակում: Այստեղից մարդիկ ստանում են իրենց տեղեկությունները, այստեղ արտահայտում են իրենց կարծիքը, այստեղ վիճում են և կազմակերպվում: «Ընկերության չափորոշիչներով», որոնք սահմանում և իրագործում է Ֆեյսբուքը, որոշվում է, թե ինչպես պետք է կարգավորվի հասարակական կյանքի այդ հատվածը: Դրանք ուղղակիորեն ազդում են Ֆեյսբուքում մարդկանց վարքագծի վրա և անուղղակիորեն՝ հասարակական կյանքի և համակեցության վրա անալոգ աշխարհում:

Եվ հենց այստեղ էլ դրսևորվում է հիմնական կոնֆլիկտը՝ հարցը ինքնիշխանությունն է, վերահսկողությունը: Հարցը «վերջին խոսքն» է համացանցի կարգում:

3-րդ փուլ՝ դեպի գրոհ

Մարկ Ցուկերբերգը ևս ընդունում է այդ հիմնական կոնֆլիկտը և անշուշտ նաև այն ռիսկը, որը թաքնված է դրանում: 2018թ. նոյեմբերի 15-ին նա Ֆեյսբուքի Newsroom-ի մի հոդվածում գրել է.

> *"As I've thought about these content issues, I've increasingly come to believe that Facebook should not make so many important decisions about free expression and safety on our own." («Բովանդակային խնդիրների մասին մտածելիս ես ավելի ու ավելի համոզվեցի, որ Ֆեյսբուքը չպետք է ինքնուրույն կայացնի կարծիքի ազատ արտահայտման և անվտանգության մասին այդքան կարևոր որոշումները»:)*

Այդ պատճառով էլ այդ հոդվածում հայտարարել է, որ հիմնում է մի «անկախ մարմին», որը պետք է թափանցիկ ընթացակարգով պարտադիր որոշումներ կայացնի այն մասին, թե Ֆեյսբուքում ինչպես պետք է վարվեն բովանդակության հետ: Շատերն այդ ժամանակվանից այդ մարմինն անվանում են Facebook Supreme Court՝ Ֆեյսբուքի գերագույն դատարան: Անգամ եթե այդ անվանումը որոշ չափով մոլորեցնող է, կուզենայի այստեղ այն օգտագործել՝ իր պարզության պատճառով:

Եթե ոչ ավելի շուտ, ապա այս առաջարկով մենք, թերևս, գտնվում ենք «անթույլատրելի բովանդակության» առնչությամբ կարգավորումներից խուսափելու Ֆեյսբուքի ռազմավարության երրորդ փուլում: Ֆեյսբուքն անցնում է գրոհի:

Սակայն ինչո՞ւ: Եվ ինչո՞ւ հիմա:

Ես ինքնըստինքյան չեմ կարող ուղղակի տեսնել, թե ինչ է կատարվում Ֆեյսբուքի կենտրոնական հրամանատարական կետում: Բայց միանգամայն համոզված եմ, որ այնտեղ հասկացել են, որ աշխարհը Ֆեյսբուքի շուրջը հիշյալ հիմնական կոնֆլիկտն ու համացանցի վերաբերյալ կանոնները շատ ավելի ինտենսիվ է քննարկում, քան երբևէ:

Դա կարելի է դիտել երկու մակարդակներում: Մի կողմից պետական մակարդակում գնալով մեծանում է կարգավորման խստությունը: Բավական է մի հայացք նետել Եվրոպական Միությանը դա տեսնելու համար: Բանն այն է, որ թեև Միությունն ասում է, որ գոհ է սոցիալական ցանցերի սեփական կառավարումից, նրա դիրեկտիվներում գնալով ավելանում են համացանցում այսպես կոչված ինտերմեդիարների (որոնման մեքենաներ, պորտալներ և այլն) կարգավորման տարրերը:

2018-ի նոյեմբերին, փոփոխություն կատարելով «Աուդիովիզուալ մեդիա ծառայությունների մասին դիրեկտիվում», Եվրոպական Միությունը պարտավորեցրել է անդամ պետություններին հոգ տանել այն բանի մասին, որ այսպես կոչված Video Sharing հարթակ առաջարկողները ձեռնարկեն համարժեք միջոցառումներ իրենց օգտատերերին անթույլատրելի բովանդակությունից պաշտպանելու համար:

Հեղինակային իրավունքների մասին նոր դիրեկտիվում, որն ընդունվել է 2019թ. ապրիլին, Եվրոպական Միությունը խստացրել է հեղինակային իրավունքով պաշտպանված երկրների առնչությամբ այսպես կոչված «առցանց բովանդակության բաժանման համար ծառայություններ առաջարկողներին» ներկայացվող պահանջները:

2019թ. հունիսին ընդունված Platform to Business (P2B) կանոնակարգում Եվրոպական Միությունն առաջին անգամ այսպես կոչված «առցանց միջնորդության ծառայություններ առաջարկողներին» և «առցանց որոնման գործիքներ առաջարկողներին» հստակ պահանջներ ներկայացրեց՝ նրանց կոմերցիոն օգտատերերին առաջարկների մատչելիության և դրանց ցանկը կազմելու վերաբերյալ:

Ներկայումս քննարկվող «Ահաբեկչական առցանց բովանդակության տարածման խափանման մասին կանոնակարգով» Ֆեյսբուքի նման այսպես կոչված «հոսթինգի ծառայություններ տրամադրողներին» որոշակի սահմանափակ առարկայական ոլորտում պետք է հանձնարարվի մանրամասն իրավական շրջանակ նրանց առաջարկի վերահսկողության համար:

Մյուս կողմից՝ կան նաև հզոր շարժումներ քաղաքացիական հասարակության մակարդակում: Այստեղ գնալով ավելի զգայուն են դառնում Internet Governance-ի ու Digital Constitutionalism-ի հանդեպ: Ընդամենը մի քանի շաբաթ առաջ Բեռլինում կայացած

Internet Governance-ի ֆորումում ներկայացվեց Contract for the Web-ը, որին, ի դեպ, օժանդակում է նաև Ֆեյսբուքը: Այս առաջարկը միայն համացանցի կարգավորման վերաբերյալ հասարակության միջից արված գաղափարների մի երկար շարքի վերջին օղակն է: Վերոնշյալ Facebook Supreme Court-ի գաղափարը նույնպես գերազանցապես կատարել է Նոահ Ֆելդմընը (Noah Feldman), որը Հարվարդի իրավաբանության ֆակուլտետի պրոֆեսոր է:

Կարճ ասած, աշխարհը Ֆեյսբուքի շուրջը չի մնում կանգնած: Կա գաղափարների մրցավազք, մրցույթ: Եվ թվում է, թե ընդամենը ժամանակի հարց է, մինչև որևէ հզոր դերակատար, ինչպես օրինակ Եվրոպական Միությունը, այնուամենայնիվ, գուցե վկայակոչելով քաղաքացիական հասարակությունից արվող գաղափարները, որոշակի կարգավորում ընդունելու վճիռ կայացնի: Ֆեյսբուքը դրանից չի կարող այլևս ամբողջությամբ խուսափել:

Բայց Ֆեյսբուքը կարող է մասնակցել քննարկումներին: Այն մասնավորապես կարող է պետություններին այնպիսի լուծումներ առաջարկել, որոնք ավելի գրավիչ կլինեն, քան այն, որ ստիպված կլինեն կամ որևէ հայեցակարգի շուրջ հարյուրավոր կառավարությունների միջև համաձայնության գալ, կամ մեն-մենակ 2,45 միլիոն օգտատեր ունեցող համաշխարհային կոնցեռնի դեմ միջոցներ ձեռնարկել: Հեռահարության շնորհիվ Ֆեյսբուքի գաղափարները նաև առանձնապես հետաքրքիր են, որովհետև կարող են արդյունաբերական չափորոշիչ սահմանել:

Այդ պատճառով արժե ուշադրությամբ նայել Մարկ Ցուկերբերգի ներկայիս առաջարկներին Facebook Supreme Court-ի վերաբերյալ: Քանի որ 2019թ. սեպտեմբերի կեսերից առկա է Oversight Board Charter-ի *(վերահսկողության մարմնի կանոնադրություն)* նախագիծ, մենք հիմա ունենք կոնկրետ պատկերացում այն բանի մասին, թե ինչպես է ուզում Ֆեյսբուքը ձևավորել այդ «գերագույն դատարանը»:

Ելակետը մնում է սեփական կարգավորումը հենց Ֆեյսբուքի կողմից: Եթե որևէ օգտատեր հաղորդում է անում, ապա Ֆեյսբուքի կողմից հանձնարարություն ստացած բովանդակության մոդերատորները Ֆեյսբուքի «ընկերության չափորոշիչների» հիման վրա որոշում են կայացնում այն մասին, թե արդյո՞ք այս կամ այն բովանդակությունը պետք է հեռացվի, թե՞ (անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշումներով լրացված) կարող է մնալ հարթակում: Բայց ավտոմատացված զտման տեխնիկաների կիրառմամբ Ֆեյսբուքը կարող է նաև առանց այլ մարդկանց ներգրավելու որոշումներ կայացնել բովանդակության ճակատագրի մասին: Դրանից բացի, ենթադրվում է, որ ապագայում Ֆեյսբուքի կողքին կլինեն երկու անկախ դերակատարներ՝ Oversight Board-ը և Trust-ը: Մենք կանդրադառնանք միայն Oversight Board-ին, այսինքն՝ Facebook Supreme Court-ին: Դրա առաջնային խնդիրը պետք է լինի դիմումի հիման վրա Ֆեյսբուքի որոշումների ստուգումը: Այդ ստուգումը պետք է իրականացվի կրկին Ֆեյսբուքի «ընկերության չափորոշիչների» հիման վրա: Պետք է հաշվի առնվեն մարդու

իրավունքները: Ազգային իրավունքը, ճիշտ է, չպետք է ստուգման չափանիշ լինի, բայց «Գերագույն դատարանի» որոշումները չպետք է նաև խախտեն այդ իրավունքը: Դրանից դուրս «Գերագույն դատարանը» պետք է նաև կարողանա սեփական նախաձեռնությամբ կամ Ֆեյսբուքի խնդրանքով անել ոչ պարտադիր առաջարկներ «ընկերության չափորոշիչների» փոփոխության վերաբերյալ: Այդ մարմնի կազմում պետք է լինեն առնվազն տասնմեկ, իսկ ընդհանրապես շուրջ 40 անդամ: Այդ անդամները պետք է «տարբեր բեքգրաունդ» ունենան և մասնավորապես լինեն աշխարհի բոլոր տարածաշրջաններից:

Հիմա կոնկրետ ի՞նչ կարող է անել այդ Facebook Supreme Court-ը: Կամ եթե հարցնենք այլ կերպ՝ արդյո՞ք հենց այդ գաղափարն է «անթույլատրելի բովանդակության» հետ վարվելակերպի կարգավորումից խուսափելու լավ ռազմավարությունը:

Ինչպես հաճախ, այստեղ էլ չկան հասարակ պատասխաններ: Եվ ինչպես հաճախ է պատահում, սատանան դետալների մեջ է: Բայց անգամ եթե մի կողմ թողնեմ Facebook Supreme Court-ի առանձին խնդիրները, ընդհանուր դիտարկման արդյունքում կգամ հետևյալ պատասխանի՝ ոչ, սա լավ ռազմավարություն չէ: Ֆեյսբուքը, ճիշտ է, հրապուրիչ առաջարկ է անում պետություններին, բայց չի կարող լուծել արդեն հիշատակված հիմնական կոնֆլիկտը:

Այդ հրապուրիչ առաջարկը Facebook Supreme Court-ի գաղափարն է: Այնպես չէ, որ Ֆեյսբուքը պարզապես

պատրաստակամություն է հայտնում հրաժարվելու իր վերահսկողության մի էական մասից: Նա այդ վերահսկողությունը հանձնում է մի մարմնի, որն այդ ձևով ներկայումս պետությունները չէին կարողանա ստեղծել: Միջազգային տրիբունա՞լ, որն ամբողջ աշխարհում վավերական որոշումներ կկայացնի համաշխարհային ոստայնում զետեղված բովանդակության մասին: Այսօր դա գործնականում հնարավոր չէ պատկերացնել: Իսկ Ֆեյսբուքը դա հնարավոր է դարձնում իր մեծ հեռահարություն ունեցող հարթակում: Նշված մարմնի անդամները պետք է կարողանան որոշումներ կայացնել բոլոր հնարավոր թեմաներին վերաբերող և ցանկացած ազգային բեթգրաունդ ունեցող դեպքերի վերաբերյալ: Եվ նրանք պետք է կարողանան լսել երկրագնդի բոլոր պետությունների ներկայացուցիչների կարծիքները: Նման բաց գլոբալ ֆորում դեռ երբեք գոյություն չի ունեցել: Իսկ Ֆեյսբուքն ամբողջ աշխարհում ուշադրության արժանանալու համար ունի կարևորությունը և հեռահարությունը: Այդ ներգործության շնորհիվ նման մարմինը մեծ օգնություն կլինի Ֆեյսբուքի համար, իր «ընկերության չափորոշիչներն» այնպես զարգացնելու գործում, որ դրանք ճանաչվեն աշխարհով մեկ նրա բոլոր օգտատերերի կողմից: Facebook Supreme Court-ը կլեգիտիմացնի Ֆեյսբուքի «ընկերության չափորոշիչները»:

Բայց հենց այստեղ է, որ հիմնական կոնֆլիկտը մնում է. դա Ֆեյսբուքի «ընկերության չափորոշիչներն» են: Եվ դա նաև կմնա: Facebook Supreme Court-ը կկարողանա ձեռնարկությանը

առաջարկներ անել այդ չափորոշիչների փոփոխության վերաբերյալ, բայց դրանք պարտադիր չեն կատարման համար: Ֆեյսբուքն ինքն է վերջում որոշելու, թե որ բովանդակությունն է թույլատրելի կամ անթույլատրելի: Սակայն Ֆեյսբուքին այդպես էլ չի հաջողվում համոզիչ կերպով բացատրել, թե ի՞նչ հարաբերություն ունեն «ընկերության չափորոշիչները» և «Գերագույն դատարանը» պետական իրավունքի հետ: Միջազգային մարդու իրավունքները, գուցե նույնիսկ ազգայինները, ճիշտ է, պետք է հաշվի առնվեն, բայց դրանց կոնկրետ ազդեցությունը որոշումների վրա մինչև հիմա ոչ մի տեղ հստակորեն ամրագրված չէ: Նմանապես բաց է մնում ազգային իրավունքի ներգործությունը: Facebook Supreme Court-ի որոշումները, ճիշտ է, չպետք է հանգեցնեն իրավունքի խախտումների, բայց միաժամանակ չպետք է ուղղակիորեն տպավորություն առաջանա, թե իրացվում է ազգային իրավունքը: Այսպիսով, խնդիրը այն է մնում, որ պետությունները և դրանց իրավունքը Ֆեյսբուքի մոդերացիայի հայեցակարգում հաստատուն տեղ չունեն: Թեև միջմարդկային հաղորդակցման հարցերը հասարակական համակեցության համար տարրական նշանակություն ունեն նաև Ֆեյսբուքից դուրս, ձեռնարկությունը կյանքի այդ ոլորտներն իրարից անջատ պահելու ջանքեր է թափում նաև դրանք կարգավորելիս:

Տպավորությունս այն է, որ այս ռազմավարության հիմնարար գաղափարը պետություններին այսօր այլևս չի համոզում: Եվ Մարկ Ցուկերբերգը ևս ակնհայտորեն դա զգում է: Մի

հոդվածում, որն այս տարվա մարտի 30-ին հրապարակել է աշխարհի մի քանի խոշոր թերթերում, նա պահանջել է.

> *«Մեզ հարկավոր է կառավարությունների և կարգավորիչ մարմինների ավելի ակտիվ դերակատարություն»:*

Անթույլատրելի բովանդակության առնչությամբ նա գրել է.

> *«Կարգավորմամբ կարելի է անթույլատրելի բովանդակության համար սահմանել հիմնական գծեր, իսկ ձեռնարկություններին պարտավորեցնել մշակել նման բովանդակությունը բացարձակ նվազագույնի հասցնող համակարգեր»:*

Այսպիսով, Ֆեյսբուքն այժմ կարգավորում է հայցում: Միայն թե մեծագույն զգուշավորությամբ: Միայն որպես շրջանակ սեփական վերահսկողության համար: Համոզված եմ, որ պետությունները եկող ամիսներին ու տարիներին լավ կմտածեն, թե արդյոք միայն դա բավական է:

<u>Հեռանկար</u>

Եզրափակելով՝ թույլ տվեք արտահայտել միայն երկու կարևոր նկատառում:

Առաջին. ես գիտակցաբար այս զեկույցում սահմանափակվել եմ այն հարցով, թե ինչպես է Ֆեյսբուքը վարվում «անթույլատրելի բովանդակության» հետ, որովհետև այս ոլորտում

պետությունների և Ֆեյսբուքի միջև մինչև հիմա տեղի է ունեցել չափազանց ինտենսիվ փոխանակում: Ֆեյսբուքն ինքը այդ ոլորտում հատկապես ակտիվ է, որովհետև «ատելության խոսքը», «ֆեյք լուրերը» և «քարոզչությունն» ուժեղ ազդեցություն են գործում օգտատերերի մտքերի և զգացմունքների վրա: Պարզ ասած, եթե օգտատերերն իրենց լավ չեն զգում Ֆեյսբուքում, դա վատ է բիզնեսի համար:

Բայց սա խնդիրների միայն մեկ ոլորտն է: Ֆեյսբուքի միջոցառումները չի կարելի դիտել առանձնացված: Ֆեյսբուքի ինտերակտիվ հարաբերություններն իր օգտատերերի հետ ծավալվում են վերահսկողության և ղեկավարման այնպիսի ծայրահեղ համալիր բնույթ ունեցող համակարգում, որը կարող է ազդեցություն գործել մարդկանց կյանքի և համակեցության վրա բոլոր մակարդակներում:

Այդ իսկ պատճառով, Ֆեյսբուքը վերջերս իրավամբ ենթարկվեց քննադատության այն բանի համար, թե ինչպես է վարվում «քաղաքական գովազդի» հետ: Այն բանից հետո, երբ Թվիթերն ու Գուգլը որոշեցին իրենց հարթակներում զգալիորեն սահմանափակել հենց այդ գովազդի հնարավորությունները, Ֆեյսբուքը տեղից գրեթե չշարժվեց: Ի վերջո, նա իրեն պատասխանատու չզգաց քաղաքական գովազդային հայտարարությունների բովանդակության ճշմարտացիությունն ստուգելու համար: Ճիշտ է, Ֆեյսբուքը հիմա մտածում է այդ որոշման իրավացիության մասին, բայց երևում է, որ ձեռնարկությունն այդ ոլորտում դեռևս շատ քիչ է պատրաստ

հաշվի առնելու պետությունների և դրանց հասարակությունների կարիքները:

Շատ ավելի կարևոր են Ֆեյսբուքի ալգորիթմը և դրա հետևում կանգնած բիզնեսի կաղապարը: Բանն այն է, որ այն հարցի նման, թե ի՞նչ են օգտատերերը տեսնում Ֆեյսբուքում, նույնքան կարևոր է և այն, թե ինչպե՞ս են դա տեսնում: Ֆեյսբուքը ո՞ւմ համար ո՞ր բովանդակությանն է նախապատվություն տալիս: Իսկ ո՞ր բովանդակությանը՝ ոչ: Եվ ինչո՞ւ: Ֆեյսբուքի կյանքը կախված է այն բանից, թե որքան ժամանակ են նրա հարթակում անցկացնում օգտատերերը: Եվ այն բանից, թե ինչ ակտիվություն են այնտեղ դրսևորում: Ֆեյսբուքը միշտ էլ ճանապարհներ կփնտրի չզրկվելու իր օգտատերերի ուշադրությունից: Իսկ մենք մինչև այսօր էլ լավ չենք հասկանում, թե՝ ինչպե՞ս և մեր կյանքի ու համակեցության վրա ի՞նչ ներգործությամբ: Մեր հասարակության համար բիզնեսի այդ կաղապարի հետ կապված սկզբունքային հետևանքների մասին վերջերս շեշտակի զգուշացրել է Շոշանա Զուբովը իր The Age of Surveillance Capitalism *(Վերահսկող կապիտալիզմի դարաշրջանը)* գրքում:

Հետևաբար մենք պարտավոր ենք գիտակցել սոցիալական ցանցերի իշխանությունը մեր ողջ կյանքի ու համակեցության վրա: Ու պարտավոր ենք շարունակել զգոն և ակտիվորեն քննարկել վերահսկողության հիմնական կոնֆլիկտը բոլոր մակարդակներում:

Կարող է պատահել, որ Եվրոպայում արդեն շատ շուտով նորից կոնկրետ առիթ ընձեռվի դրա համար: Եվ դրանով ես գալիս եմ իմ երկրորդ ու վերջին նկատառմանը:

Գուցե հիշում եք ասածս այն մասին, որ ընդամենը ժամանակի հարց է, մինչև որ մի հզոր դերակատար որոշում կկայացնի որոշակի կարգավորման մասին: Եվ իսկապես, 2019-ի հուլիսի կեսերին հայտնի դարձավ հին Եվրոպական հանձնաժողովում մշակված մի ռազմավարական փաստաթուղթ, որում հռչակվում էր առցանց հարթակների կարգավորման միանգամայն նոր մոտեցում: Ճիշտ է, մանրամասները մինչև հիմա դեռ գրեթե հայտնի չեն, բայց այդ փաստաթուղթը ցույց է տալիս, որ Հանձնաժողովը հենց նոր նշված ոլորտներում կարգավորման կարիք է տեսնում: Այդ իսկ պատճառով պլանավորված է մշակել մի նոր Digital Services Act (Օրենք թվային ծառայությունների մասին): Նոր Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարել է, որ այդ Digital Services Act-ի ընդունումը լինելու է իր գալիք պաշտոնավարման քաղաքական առաջնահերթություններից մեկը: Թե ի՞նչ ռազմավարություն ունի Ֆեյսբուքը դա խափանելու կամ էլ դրա վրա հաջող լոբբիստական աշխատանքով ազդելու համար, ինձ այս պահին դեռ հայտնի չէ:

Բորիս Նավասարդյան
Երևանի մամուլի ակումբի նախագահ

Ատելության խոսքի խնդիրը «ձեռքի թեթև շարժումով» չի լուծվի

Ատելության խոսքի և բռնության թեման Հայաստանում արդիականացվեց, որոշակի առումով, քաղաքական զարգացումների հետևանքով: 2018-ի «թավշյա» հեղափոխությունից հետո լրատվամիջոցների ոլորտում Հայաստանի համար ոչ ստանդարտ իրավիճակ ստեղծվեց. իշխանության եկավ քաղաքական մեկ ուժ, իսկ մասնավոր առաջատար լրատվամիջոցների մեծ մասը մնաց նախորդների վերահսկողության տակ: Ավելին, 2018թ. դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններից հետո, որոնց ժամանակ նախկին իշխող կուսակցությունը չկարողացավ հաղթահարել նույնիսկ 5%-ի շեմը և Ազգային ժողովում տեղեր ու ամբիոն ձեռք բերել, լրատվամիջոցները դարձան քաղաքական մարտերի հիմնական ասպարեզը: Եթե դրան գումարենք համացանցի մատչելիության և դերի բարձրացումը, ապա սոցիալական ցանցերում հակառակ քաղաքական հայացքներով և հակումներով քաղաքացիների ակտիվությունը, տեղեկատվական դաշտում խիստ լարված քննարկումները շատ բնական են թվում: Նույնքան բնական է այն խոսակցությունների աշխուժացումը, որ անհրաժեշտ է ինչ-որ չափով հանդարտեցնել բորբոքված կրքերը, քանի որ դրանք սպառնում են սրել քաղաքացիական

առճակատումները և մարդու իրավունքներին ուղղված անմիջական վտանգները:

Մասնավորապես, շրջանառության են դրվել ապատեղեկատվությունը, ատելության և բռնության լեզուն քրեականացնելու նախաձեռնությունները: Հայաստանի գործող օրենսդրությունը, ներառյալ երկրի Սահմանադրությունը, նախատեսում են քրեական պատասխանատվություն ռասայական, կրոնական, ազգային հիմքերով ատելություն հրահրելու համար: Ակնհայտ է, որ պետք է ընդլայնվի քրեական հետապնդման հիմքերի շրջանակը, բայց այն պետք է հիմնված լինի հավանական հանցագործություններ ենթադրող բովանդակության կոնկրետ հատկանիշների վրա: Մինչդեռ, ՀՀ արդարադատության նախարարության օրինագիծը, որը հրապարակվել է 2019թ. օգոստոսի 14-ին, բռնության լեզվի դրսևորման համար սահմանում է քրեական պատասխանատվություն՝ առանց բավարար չափով կոնկրետացնելու նշված հատկանիշները:

Երևանի մամուլի ակումբը և լրագրողական ու իրավապաշտպան վեց այլ կազմակերպություններ հանդես եկան տվյալ օրենսդրական նախաձեռնությունը քննադատող հայտարարությամբ: Հայտարարության մեջ, մասնավորապես, նշվում է, որ խոսքի ազատության սահմանափակումները, հատկապես ազատազրկում նախատեսող օրենքի դրույթների տեսքով, պետք է հնարավորինս պարզ և ճշգրիտ ձևակերպված

լինեն, տրամադրեն ատելության վրա հիմնված դրդապատճառների հստակ սահմանումներ և բացառեն մշուշոտ, ընտրովի կամ սուբյեկտիվ մեկնաբանությունները: Դժբախտաբար, Արդարադատության նախարարության օրինագիծը չի համապատասխանում այս սկզբունքներին:

Մեր կարծիքով, ատելության խոսքի վերաբերյալ օրենսդրության հետագա մշակումը պետք է ընթանա, նախևառաջ, հնարավորինս միանշանակ ձևակերպումների, կիրառման շրջանակների հստակ սահմանման ուղղությամբ: Վերջինս պետք է ավելի ընդարձակ լինի, քան գործող օրենսդրությունն է, սակայն միևնույն ժամանակ չպետք է դուրս գա այն սոցիալական խմբերի շրջանակներից, որոնք պոտենցիալ կերպով ենթակա են խտրականության և անհանդուրժողականության: Չափազանց ռիսկային է կիրառման շրջանակը ընդլայնել՝ ընդգրկելով ներքաղաքական մրցակցության դեպքերը: Ինչ վերաբերում է բռնության լեզվին, ապա դրա օրենսդրական կարգավորումը պետք է հաշվի առնի բռնության հրապարակային սպառնալիքների գործնական իրականացման հավանականության, այդ սպառնալիքների տարածման հարթակների և խողովակների գործոնները:

Ընդհանուր առմամբ, մենք համոզված ենք, որ Քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցում շտապողականությունը դժվար թե նպաստի այսօրվա մարտահրավերներին արդյունավետ արձագանքելուն,

փոխարենը կարող է ստեղծել նոր խնդիրներ՝ կապված խոսքի ազատության անհամաչափ սահմանափակումների հետ: Այս իմաստով, ՁԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի ամրապնդմանը և կատարելագործմանն ուղղված ջանքերը, քաղաքակիրթ բանավեճի մշակույթի զարգացումը և տարբեր տեսակի տեղեկատվական վեճեր քննող դատավորներին վերապատրաստելը ավելի հեռանկարային են թվում:

Աշխատանքային արդյունքների նյութեր

Աշխատանքային քննարկում
«ԶԼՄ-ների թափանցիկություն»

Վարող՝

Ֆրեդերիկ Ֆեռո, դոկտոր, Քյոլնի համալսարան
Թոմաս Վիերնի

Մասնակիցներ՝

Մելանյա Բարսեղյան
Արևհատ Գրիգորյան
Աղավնի Հարությունյան
Մեսրոպ Հարությունյան
Քրիստինե Քոչարյան
Դավիթ Մարգարյան
Աշոտ Մելիքյան
Բորիս Նավասարդյան
Հասմիկ Պետրոսյան
Դավիթ Սանդուխչյան
Նունե Սարգսյան
Վահագն Թևոսյան
Կարեն Թումանյան

Ներածություն

Թափանցիկությունը մեդիա ոլորտում մեծ նշանակություն ու առավել մեծ ներուժ ունի: Ֆինանսավորման հարցերից մինչև որոշում կայացնելու մեխանիզմներ, բաժնեմասեր և տեղեկություններ ձեռք բերելու ուղիներ՝ ժողովրդավարական իրավական պետություններում մեդիա հաղորդակցության այս բոլոր ասպեկտներն ի վերջո ազդում են լրատվամիջոցների խնդիրների կատարման վրա:

Բայց դրանց բացահայտումը մշտապես առաջացնում է որոշակի լարվածություն: Լրատվական գործունեություն իրականացնող մասնավոր ձեռնարկությունները տնտեսական ձեռնարկություններ են և այդ իսկ պատճառով իրենց առևտրային գաղտնիքների բավարար պաշտպանության կարիքն ունեն: Վտանգ կա նաև, որ դրանց սեփականատերերի ու ֆինանսավորման մասին տեղեկությունները պետությունն, օրինակ, կօգտագործի լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների դեմ:

Թափանցիկության կանոններից ստացվող օգուտները համապատասխան ռիսկերի հետ համեմատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այս հարցերը: Չէ՞ որ օրենսդրական դրույթները պետք է ուժեղացնեն մեդիայի գործունակությունը և ոչ թե թուլացնեն այն:

Հետևաբար, միաժամանակ անհրաժեշտ է մտածել անվտանգության միջոցառումների մասին (օրինակ, բայց ոչ միայն՝ լրագրողական աղբյուրների պաշտպանության) մեդիան պետության միջամտություններից պաշտպանելու համար: Չէ՞ որ առանձին հեռարձակողների համար առաջացած բացասական հետևանքներն ազդում են լրատվամիջոցների ամբողջ շուկայի վրա ու ի վերջո վնասում կարծիքի և կամքի ձևավորմանը:

Սակայն մեդիա ձեռնարկությունների մասին տեղեկությունների հրապարակումը դեռ բավական չէ: Տնտեսական կապերը և ֆինանսական վճարումները հաճախ հնարավոր չէ առանց այլևայլի հասկանալ: Դրանք վերամշակման, մեկնաբանման, դասակարգման և ընտրության կարիք ունեն: Սրանք այն դասական լրագրողական խնդիրներն են, որոնց համար Եվրոպայում առաջացել է այսպես կոչված մեդիա լրագրություն: Բայց ոչ կառավարական կազմակերպությունները ևս հաճախ ունենում են այդ խնդիրները կատարելու համար անհրաժեշտ տեխնոլոգիաներն ու շահագրգռվածությունը:

Այնքան մեծ մեդիագրագիտություն, որը պակաս անհրաժեշտ կդարձներ դասակարգման նման գործընթացները, որպես կանոն չի կարելի ակնկալել, և դրան հնարավոր չէ հասնել բնակչության լայն շրջաններում: Այդուհանդերձ, լրատվամիջոցների մասին հրապարակված տեղեկությունների վերամշակումը և մեկնաբանությունը որոշակի իշխող դիրք են ստեղծում: Որպեսզի

այդ դիրքը չչարաշահվի, անհրաժեշտ է խթանել և ուժեղացնել մեդիագրագիտությունը:

Բանն այն է, որ ամենավերջում կարևոր է մեդիագրագետ օգտատերերի գոյությունը, որոնք ի վիճակի են խելացիորեն գնահատելու և դասակարգելու տեղեկություններն ու աղբյուրները:

1. Մասնակցության թափանցիկություն

Թափանցիկությունն առանցքային դեր է խաղում ժամանակակից ժողովրդավարական հասարակությունների հայեցակարգում: Բանն այն է, որ դրանցում ենթադրվում է, որ ԶԼՄ-ների բազմազանությունը թափանցիկ հարաբերությունների դեպքում դրանցից օգտվողին հնարավորություն է տալիս սեփական կարծիքը կազմել բազմաթիվ և հաճախ՝ սուբյեկտիվ տեսանկյունների հիման վրա:

ա. Իրավիճակը Եվրոպական Միությունում / Գերմանիայում

Եվրոպական Միության իրավունքում չկան հատուկ կարգավորումներ զանգվածային լրատվամիջոցների բաժնետերերի մասին տեղեկությունների հրապարակային լինելու վերաբերյալ: Այդուհանդերձ անդամ պետությունները պարտավոր են իրագործել այսպես կոչված «փողերի լվացման մասին դիրեկտիվը» ((EU) 2015/849 դիրեկտիվը, վերջին

փոփոխությունները կատարվել են (ԵՍ) 2018/843 դիրեկտիվով): Ըստ այդմ, բոլոր իրավաբանական անձինք, այդ թվում և ԶԼՄ-ները, պարտավոր են հանրությանը մատչելի թափանցիկության ռեգիստրում հրապարակել իրենց սեփականության հարաբերությունները: Այդ պարտավորությունների խախտման դեպքում լրատվամիջոցի նկատմամբ կարող է սահմանվել տուգանք, ինչպես նաև այդ լրատվամիջոցը կարող է նշվել իրավասու գերատեսչության կայքում (wall of shame):

Դրա կողքին անդամ պետություններում ԶԼՄ-ների սեփականության հարաբերությունների հրապարակման տարբեր կերպ ձևավորված պարտավորություններ գոյություն ունեն: Հատկապես հեռուն է գնացել այս առումով ֆրանսիական իրավունքը (Loi n° 2016-1524 du 14 novembre 2016 visant à renforcer la liberté, l'indépendance et le pluralisme des médias): Այդ օրենքը ԶԼՄ-ներին պարտավորեցնում է օգտատերերին տեղեկացնել իրենց կապիտալի կազմի մասին. եթե որևէ լրատվամիջոց չկատարի իր թափանցիկության պարտավորությունները, ապա նրան կարող են ամբողջությամբ կամ մասամբ զրկել բոլոր ուղիղ և անուղղակի պետական սուբսիդիաներից: Գերմանիայում միայն հեռարձակող լրատվամիջոցներն են պարտավոր հրապարակել իրենց բաժնեմասային հարաբերությունները, բայց ոչ թե օգտատերերի կամ հասարակայնության, այլ միայն երկրամասային գերատեսչությունների համար: Իսկ վերջիններին օրենքը չի պարտավորեցնում հրապարակել այդ տեղեկությունները:

Սակայն եթե որևէ հեռարձակող դիմում է լիցենզիա ստանալու, երկրամասային գերատեսչությունները որպես կանոն հրապարակում են նաև տեղեկություններ այդ ձեռնարկության կապիտալի կազմի մասին:

բ. Իրավիճակը Հայաստանում

Բաժնետերերի հետ կապված հարաբերությունների թափանցիկությունը Հայաստանում աշխատանքային քննարկման կարևորագույն խնդիրներից է: Հայաստանում իրավական ու փաստացի իրադրության նկարագրությունից պարզ դարձավ, որ միայն այս ասպեկտի վրա կենտրոնանալը բավարար չէ: Անհրաժեշտ է խոսել ընդհանրապես ազդեցության թափանցիկության մասին, աշխատանքային խմբի համար կարևոր հարց է ԶԼՄ-ների բովանդակության վրա փաստացի ազդեցությունների բացահայտումը:

ՀՀ օրենսդրությունը կարգավորում է, թե հեռարձակման ոլորտում ով իրավունք չունի սեփականություն ունենալ: Այդ իրավունքը չունեն որոշակի քաղաքական դերակատարներ, ինչպես նաև կուսակցությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Բացի դրանից, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք չեն կարող ունենալ բաժնեմասերի 49,99%-ից ավելի:

Հայկական օրենսդրության մեջ չկան ԶԼՄ-ների փաստացի սեփականատերերի մասին տեղեկությունների հրապարակման համար բավարար մեխանիզմներ:

գ. Քննարկում

Որոշ մասնակիցներ մտահոգություն հայտնեցին, որ թափանցիկության ավելի խիստ պահանջները գուցեև նոր տեղեկություններ ստանալու հնարավորություն չտան, քանի որ համապատասխան նորմերը կարելի է շրջանցել: Այնուամենայնիվ, մեծ մասը գտնում է, որ իմաստ ունի խստացնել թափանցիկության վերաբերյալ նորմերը, դրանց շրջանցումը դժվարացնելու և իրական սեփականատերերի մասին տեղեկությունները լայն հասարակայնությանը մատչելի դարձնելու համար:

Թափանցիկության վերաբերյալ նոր պահանջներ սահմանելու առումով առաջարկվեց լրատվամիջոցների համար ընդունել նորմեր հանքարդյունաբերության ոլորտում բաժնետերերի թափանցիկության մասին օրենքի օրինակով: Սակայն մինչ այդ օրենքը պահանջում է անվանել այն բաժնետերերին, որոնց բաժինը 10 և ավելի տոկոս է կազմում, ճիշտ կլիներ ԶԼՄ-ների համար այդ պարտավորությունը նախատեսել արդեն 2%-ից սկսած:

Թաքնված մասնակցությունը բացահայտելու համար սկզբունքորեն ողջունվեց փողերի լվացման մասին ԵՄ դիրեկտիվի մոտեցումը: Ըստ այդմ, ԶԼՄ-ները պարտավորված կլինեն յուրաքանչյուր անձին մատչելի թափանցիկության ռեգիստրում նշել «շահառու սեփականատիրոջը»:

2. Ֆինանսական թափանցիկություն

ա. Իրավիճակը Եվրոպական Միությունում / Գերմանիայում

Գերմանիայում հեռարձակող ընկերությունները չունեն երրորդ կողմից ստացվող ֆինանսական միջոցների տեսակն ու չափը հրապարակելու պարտավորություն: Նրանք միայն պարտավոր են կատարել առևտրային հաշվետվությունների հրապարակման վերաբերյալ համապատասխան ընդհանուր իրավական դրույթները: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ պարզել, թե արդյո՞ք ինչ-որ պետական կամ մասնավոր մարմին նպաստում է հեռարձակող ընկերությունների ֆինանսավորմանը, և եթե այո, ապա՝ ո՞ր մարմինները և ի՞նչ չափով:

Լրատվամիջոցներին վերաբերող հարաբերությունները կարգավորող ԵՄ դրույթները նույնպես չեն պարունակում հեռարձակող ընկերությունների ֆինանսական թափանցիկությունը բարձրացնող կարգավորումներ: Սակայն առնվազն պետության կողմից այդ ընկերություններին արվող դրամական վճարումների հրապարակման կարգավորման

օրինակ առկա է ավստրիական իրավունքում: «Լրատվամիջոցների համագործակցության և օժանդակության թափացիկության օրենքի» համաձայն, Ավստրիայում պետական մարմինները պարտավոր են ԶԼՄ-ները կարգավորող մարմնին հաղորդում տալ հեռարձակող ընկերություններին արվող վճարների մասին. կարգավորող մարմինը յուրաքանչյուր եռամսյակի վերաբերյալ հրապարակում է կատարված վճարումների ցուցակը (համացանցում կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ https://www.rtr.at/de/m/veroeffentl_medkftg_daten).

բ. Իրավիճակը Հայաստանում

Լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների համար առանձին ֆինանսական աղբյուրների բացահայտման/հրապարակման պարտավորություն գոյություն չունի: Վերջիններս իրենց տարեկան հաշվետվության մեջ պետք է միայն ընդհանուր տեղեկություն ներկայացնեն իրենց եկամուտների չափի վերաբերյալ: Օրենքի այս պահանջն ընդունվել է 2003 թվականին: Դրանից հետո տվյալ օրենքում փոփոխություն չի կատարվել:

գ. Քննարկում

Խումբը սկզբում անհրաժեշտ չհամարեց լրատվական գործունեություն իրականացնող ձեռնարկություններին պետության կողմից հատկացվող ֆինանսական աջակցության

հրապարակումը, քանի որ պետական հատկացումները միայն չնչին ծավալ են կազմում: Խումբն ավելի անհրաժեշտ համարեց միջոցներ ձեռնարկել մասնավոր հատկացումների թափանցիկության առնչությամբ, օրինակ գովազդային պատվերների կամ նվիրատվությունների դեպքում: Այդուհանդերձ, նշվեց, որ թափանցիկության չափազանց հեռուն գնացող պարտավորությունը կարող է նշանակել անհամաչափ միջամտություն հիմնարար իրավունքներին: Սա վերաբերում է ինչպես համապատասխան լրատվամիջոցներին, այնպես էլ գովազդատու ընկերություններին:

Հետևաբար այստեղ միմյանց հակադրվում են թափանցիկության (օգտատեր) և գաղտնիության (ձեռնարկություն) շահերը: Դրանց հավասարակշռման նպատակով խումբն արտահայտվեց «բացահայտման մեղմացված պարտավորության» օգտին:

Ըստ այդմ, պետք է հրապարակման ենթակա լինեն ոչ բոլոր, այլ միայն այն հատկացումները, որոնք կարող են համեմատաբար մեծ ազդեցության հնարավորություն տալ: Այդպիսի կարգավորման համար նշվեցին հետևյալ հնարավոր մոտեցումները՝

ա. Տարբերակել՝ ըստ լրատվամիջոցի ամբողջ շրջանառության համար ֆինանսական ներհոսքի կարևորության,

բ. Սահմանափակվել միայն խոշորագույն գովազդատուների մասին տեղեկատվությամբ հրապարակմամբ (առանց դրանց թիվն այս պահին սահմանելու):

Քննարկվեց նաև այն, թե թափանցիկության այս պարտավորությունը որ լրատվամիջոցների համար պետք է գործի: Այստեղ ինտենսիվ քննարկում ծավալվեց երկու մոդելի շուրջ.

Մոդել 1. Թափանցիկության պարտավորությունը գործում է բոլոր լրատվամիջոցների համար («միասնական մոդել»),

Մոդել 2. Թափանցիկության այս պարտավորությունը պետք է գործի այն լրատվամիջոցների համար, որոնք ունեն որոշակի հեռահարություն («հեռահարության մոդել»):

Երկու մոդելներն էլ ունեն որոշ թերություններ. միասնական մոդելը կարող է անհամաչափ ծանրաբեռնել հատկապես համեմատաբար փոքր լրատվամիջոցներին, որոնք կախված են փոքր թվով մասնավոր ֆինանսավորողներից, բացի այդ, այս պարտավորության կատարման վերահսկողությունը մեծ ռեսուրսներ կպահանջի: Իսկ առանց այդ վերահսկողության հավանականություն կա, որ կտուժեն օրինապաշտ լրատվամիջոցները:

Հեռահարության մոդելը դրա փոխարեն կարող է առաջացնել այնպիսի իրավիճակ, երբ գովազդատուները իրենց պատվերները ծառայությունների խոշոր մատուցողներից կտեղափոխեն փոքրերի մոտ, բացի այդ, հեռահարության վրա կենտրոնանալը չի համապատասխանի նորմի ցանկալի նպատակին, այն է՝ տեղեկացնել օգտատերերին նրանց կողմից օգտագործվող լրատվամիջոցի հնարավոր ֆինանսական կախվածության մասին:

Այնուամենայնիվ, երկու մոդելների թերությունները կարելի է օրենսդրական միջոցառումների շնորհիվ նվազեցնել: Օրինակ, բոլոր լրատվամիջոցները սկզբունքորեն կարող են ենթարկվել թափանցիկության այս պարտավորությանը, սակայն կարելի է բացառություն անել տնտեսապես փոքր լրատվամիջոցների համար: Սա կարող է վերացնել համաչափության և վերահսկողության համար պահանջվող ռեսուրսների առնչությամբ առաջացող մտավախությունը և լրացուցիչ ապահովել այն, որ հնարավորինս շատ լրատվամիջոցներ մեծացնեն իրենց ֆինանսական թափանցիկությունը: Այնուամենայնիվ, ինտենսիվ քննարկումը ցույց տվեց, որ ֆինանսական թափանցիկության վերաբերյալ ընդլայնված պարտավորության նախատեսումն օրենքով պետք է հաշվի առնի ինչպես սահմանադրաիրավական պահանջները, այնպես էլ տնտեսական ներգործությունը գովազդի շուկայի վրա:

3. Կարգավորող հանձնաժողովի ընթացակարգերի թափանցիկության վերաբերյալ

ա. Իրավիճակը Եվրոպական Միությունում / Գերմանիայում

Եվրոպական Միությունում աուդիովիզուալ մեդիա ծառայությունների մասին դիրեկտիվը (AVMD-RL) պարտավորեցնում է անդամ պետություններին ապահովել կարգավորող մարմինների իրավասությունների թափանցիկ իրականացումը: Բայց քանի որ այդ կարգավորումը դիրեկտիվի մեջ ներառվել է ընդամենը 2018թ. վերջին, թափանցիկության հասկացությունը դեռ կոնկրետացման կարիք ունի:

Գերմանիայում, որտեղ հեռուստատեսության, ռադիոյի և առցանց ԶԼՄ-ների նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է երկրամասային 14 գերատեսչությունների կողմից, որոշում կայացնող մարմինների նիստերը սկզբունքորեն դռնբաց են անցկացվում: Բացառության կարգով այդ մարմինները կարող են ձայների մեծամասնությամբ կայացված որոշմամբ անցկացնել դռնփակ նիստ (տե՛ս, օրինակ, Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա երկրամասի ԶԼՄ-ների մասին օրենքի հոդված 98, մաս 2): Այդուհանդերձ, դրանց զուգահեռ գործում են նաև բոլոր երկրամասային գերատեսչությունների համատեղ հանձնաժողովները, որոնք կարգավորում են ամբողջ Գերմանիայում հեռարձակվող հեռուստատեսային և ռադիո

հաղորդումները (օրինակ, «Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով»՝ ZAK): Վերջինի նիստերը դռնբաց չեն: Գերատեսչությունները տեղեկացնում են հասարակայնությանը իրենց հանձնաժողովների որոշումների մասին և դրանից բացի, նախապես հրապարակում են նիստերի օրակարգերը (տես, օրինակ, Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա երկրամասի ԶԼՄ-ների մասին օրենքի հոդված 98, մաս 3):

Եթե երկրամասային գերատեսչություններն ընդունում են ենթաօրենսդրական նորմեր, ապա հանրային քննարկումների անցկացումը, ճիշտ է, ընդունված է, սակայն օրենքով նախատեսված չէ:

բ. Իրավիճակը Հայաստանում

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը մանրամասնորեն ներկայացրեց իր իրավասությունը և մտադրությունները թափանցիկության/ հասարակայնության հետ աշխատանքի ոլորտում: Այսպես, օրինակ, օրակարգի մասին հաղորդելուց հետո նիստերն անցկացվում են դռնբաց: Սա սահմանված է օրենքով, և այդպես էլ արվում է: Բացառություն են կազմում այն գործերով նիստերը, որոնցում կան օրենքով պաշտպանված գաղտնիքներ: Հանձնաժողովի բոլոր որոշումները նաև հրապարակվում են նրա նորացված կայքում:

գ. Առանձին տեսակետների քննարկում

աա, Ենթաօրենսդրական նորմերի ընդունման ընթացակարգ

Սկզբում քննադատվեց ենթաօրենսդրական նորմերի ընդունման ընթացակարգը Հանձնաժողովում: Ցանկություն հայտնվեց, որ դրանց ընդունմանը մասնակցի հանրությունը, դրանից առաջ լսումներ լինեն, և ստեղծվի հետադարձ կապ: Ցանկալի է մտածել այսպես կոչված բաց խորհրդատվության ճանապարհի մասին՝ խուսափելու համար Հանձնաժողովի կողմից ընտրյալների կարծիքը լսելուց, որպեսզի հենց սկզբից կանխվեն միակողմանի մոտեցման մեղադրանքները:

բբ. Նիստերի ուղիղ հեռարձակում

Քննարկվեց նաև Հանձնաժողովի նիստերի ուղիղ հեռարձակման (Live Stream) առաջարկը: Կար միասնական կարծիք, որ տեխնիկապես դա հնարավոր է: Մասնակիցների մեծ մասը ողջունեց ուղիղ հեռարձակման գաղափարը, Հանձնաժողովի ներկայացուցիչները սկզբունքորեն այս առաջարկին դեմ չէին:

գգ. Հանձնաժողովի աշխատանքը հասարակայնության հետ

Սկզբունքորեն մասնակիցները ցանկանում են, որ Հանձնաժողովն ավելի ակտիվորեն աշխատի

հասարակայնության հետ: Այս ուղղությամբ քայլեր արդեն արվում են, օրինակ, կայքի նորացմամբ:

Խումբը համաձայն էր կամավոր բաժանորդագրության ենթակա տեղեկագրի միջոցով մասնակիցներին ժամանակին և ակտիվորեն տեղեկացնելու գաղափարի հետ: Հնարավոր են հասարակայնության հետ աշխատանքի նաև այլ ձևեր:

4. Մեդիագրագիտություն

Մեդիայի թափանցիկությունը պետք է քաղաքացիներին ունակ դարձնի ստուգելու, թե արդյո՞ք տեղեկատվությունն անկախ է: Դրա համար նրանք պետք է քաջատեղյակ լինեն ինչպես թափանցիկության կանոններին, այնպես էլ մեդիայի վրա ազդեցություն գործելու հնարավորություններին: Դրանում է այս համատեքստում քաղաքացիների մեդիագրագիտության առանձնակի նշանակությունը:

ա. Իրավիճակը Գերմանիայում

Գերմանիայում մեդիագրագիտության հասնում են նախ դպրոցներում, սա Գերմանիայի բոլոր երկրամասերի ուսումնական ծրագրերի մշտական բաղադրիչն է: Երեխաներն ու պատանիները պետք է սովորեն վերլուծել լրատվության բովանդակությունը և քննադատաբար դրան մոտենալ, ինչի համար պահանջվում է նաև տեսնել լրատվամիջոցների և լրագրողների (հնարավոր) կախվածությունը:

Դրան զուգահեռ՝ մասնավորապես մեդիայի գործունեությունը կարգավորող երկրամասային հաստատություններն իրականացնում են մեդիագրագիտությունը խթանող բազմաթիվ ծրագրեր, որոնք ուղղվում են նաև մեծերին: Մեդիագրագիտության խթանումը մեդիա ոլորտի երկրամասային կարգավորող հաստատությունների՝ օրենքով սահմանված պարտավորություն է (հմմտ. օրինակ, Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա երկրամասի լրատվամիջոցների մասին օրենքի §88, մաս 5):

բ. Իրավիճակը Հայաստանում

Հայաստանում մեդիագրագիտության ոլորտում կարևոր դեր է իրականացնում «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն: Կենտրոնը վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում ուսուցիչների համար, մեդիագրագիտության ուսումնական ձեռնարկ է հրատարակել, որն օգտագործվում է որպես դասագիրք: Այլ տեղեկություններ կարելի գտնել կենտրոնի կայքում՝ www.media.am.

Աշակերտները պարտավոր են գրանցվել www.dasaran.am կայքում, որտեղ մեդիագրագիտության վերաբերյալ խաղեր են առաջարկվում: Կառավարությունը ձգտում է մեդիագրագիտությունը որպես պարտադիր առարկա ներմուծել դպրոցական ուսումնական ծրագրում:

Բացի այդ, կառավարությունը ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ պլանավորում է կազմակերպել «Մեդիագրագիտության տարի»:

գ. Քննարկում

Խումբը հայտնեց նաև, որ երեխաների և երիտասարդների շրջանում արդեն մեդիագրագիտության բավական առաջընթաց կա: Դրան հակառակ, չափահասների դեպքում ակնհայտ բարելավման անհրաժեշտություն կա:

Խումբն ակնկալում է, որ նախևառաջ «Մեդիագրագիտության տարի» միջոցառումը պետք է օգտագործել քաղաքացիներին թափանցիկության կանոններին ծանոթացնելու համար: Ծանոթանալով կանոններին՝ քաղաքացիները կկարողանան ավելի լավ գնահատել ԶԼՄ-ներին (ԶԼՄ-ների աշխատանքը) և փոխանցված տեղեկությունը ավելի լավ դասակարգել: Բացի այդ, համեմատելով իրավիճակը Գերմանիայում, կարգավորիչ մարմնին/գերատեսչությանը պետք է օրենքի շրջանակներում հանձնարարել, որպեսզի վերջինս մեդիագրագիտության տարածման/ուսուցանման համար ծրագրեր առաջարկի, այս առումով գերատեսչությունը պետք է ապահովված լինի անհրաժեշտ ֆինանսական միջոցներով:

5. Դիրքորոշումների ամփոփում

I. ԶԼՄ-երի բովանդակության վրա փաստացի ազդեցության թափանցիկությունը գործունակ ժողովրդավարական հասարակությունների հիմնական նախադրյալն է:

II. Հանքարդյունաբերության մեջ մասնաբաժինների թափանցիկության համար նախատեսված օրենքի օրինակով պետք է ԶԼՄ-ների համար ևս համապատասխան օրենքներ ընդունել և բարդացնել դրանք շրջանցելը:

III. Ընդ որում, անհրաժեշտ է սահմանել հրապարակման պարտավորություն լրատվամիջոցի ամբողջական կապիտալի՝ սկսած 2% մասնաբաժին ունենալու դեպքում:

IV. Անհրաժեշտ է փողերի լվացման եվրոպական դիրեկտիվի օրինակով ստեղծել յուրաքանչյուրին հասանելի թափանցիկության ռեգիստր:

V. Գովազդի պատվերների փոխանցման կամ նվիրատվությունների միջոցով ԶԼՄ-ների մասնավոր ֆինանսավորումը հրապարակելը մեծ նշանակություն կունենա: Սակայն դա պետք է այնպես համաչափ իրականացնել, որ չխախտվեն տվյալ ընկերության հիմանարար իրավունքները:

VI. Բարձր ազդեցության ներուժով ֆինանսական հատկացումների հրապարակման համար կարելի է տարբերակել ըստ լրատվամիջոցի ամբողջ շրջանառության համար ֆինանսական հոսքերի նշանակության կամ հրապարակման պարտավորությունը համաձայնեցնել համապատասխան ամենամեծ ֆինանսական հոսքերի համար որոշակի սահման դնելով:

VII. Ավելի փոքր լրատվամիջոցներին տնտեսապես պաշտպանելու համար այդ դրույթի կիրառման ոլորտը օրինակի համար կարելի է սահմանափակել: Հնարավոր է նաև հիմք ընդունել լրատվամիջոցի հրապարակային կարևորության հանգամանքը:

VIII. Ենթաօրենսդրական նորմերի ընդունման դեպքում ՀՀ ռադիոյի և հեռուստատեսության հանձնաժողովին պետք է պարտավորեցնել, որ վերջինս հանրային լսումներ կամ հանրության մասնակցությամբ բաց խորհրդատվություններ կազմակերպի:

IX. Ճիշտ մոտեցում կլինի նաև վերոհիշյալ հանձնաժողովի նիստերի ուղիղ հեռարձակման միջոցով բարձրացնել հանձնաժողովի աշխատանքի թափանցիկությունը:

X. Սկզբունքորեն ցանկալի է հանձնաժողովի ավելի ակտիվ աշխատանքը հանրության հետ:

XI. Հայաստանում չափահասների մեդիագրագիտության աստիճանը ակնհայտորեն բարելավման կարիք ունի: Սրա համար պետք է օգտագործել արդեն պլանավորված «Մեդիագրագիտության տարի» միջոցառումը:

XII. Անհրաժեշտ է օրենքով նախատեսել, որ Ռադիոյի և հեռուստատեսության հանձնաժողովը ապահովվի համապատասխան ֆինանսական ռեսուրսով, և հանձնարարել վերջինիս, որ մեդիագրագիտության վերաբերյալ ծրագրեր առաջարկի:

Աշխատանքային քննարկում
«Առցանց մեդիա՝ լավ առցանց կառավարում»

Վարող՝

Բերնդ Հոլցնագել, դոկտոր պրոֆեսոր
Թոմաս Վիերնի

Մասնակիցներ՝

Հեղինե Ասրյան
Սուրեն Դեհերյան
Արա Ղազարյան
Արևհատ Գրիգորյան
Մեսրոպ Հարությունյան
Դավիթ Խումարյան
Դավիթ Մարգարյան
Սամվել Մարտիրոսյան
Արեն Մելիքյան
Արմեն Մկրտչյան
Բորիս Նավասարդյան
Արթուր Պապյան
Հասմիկ Պետրոսյան
Դավիթ Սանդուխչյան

1. Լրագրողների իրավունքը նաև առցա՞նց

ա. Իրավիճակը Գերմանիայում

Գերմանիայում «լրագրող» հասկացությունը հենվում է մամուլում աշխատողի մասնագիտության ավանդական նկարագրի վրա: Հետագայում այն տարածվել է նաև հեռուստատեսության ոլորտի վրա: Առցանց ոլորտի առնչությամբ դրա հիմքում դրվում է բովանդակությունը: Տեքստը լրագրողական է համարվում այն ժամանակ, երբ ծառայում է տեղեկացմանը կամ հանրային կարծիքի ձևավորմանը և արտադրվել է մասնագիտական գործունեության շրջանակներում:

Լրագրողները Գերմանիայում ունեն տարբեր արտոնություններ, ինչպես օրինակ, խմբագրական գաղտնիքը, աղբյուրների պաշտպանությունը, ինչպես նաև որոշ արտոնություններ տեղեկատվության մատչելիության տեսանկյունից:

բ. Իրավիճակը Հայաստանում և քննարկում

Քննարկման մասնակիցներն ասում են, որ Հայաստանում այլևս գոյություն չունի լրագրողի մասնագիտության հստակ նկարագիր: Ի սկզբանե մամուլի ոլորտում առաջացած այս հասկացությունը կարծիքի ձևավորման համար մամուլի, հեռուստատեսության և առցանց լրատվամիջոցների ունեցած գրեթե նույն նշանակության պայմաններում գնալով ավելի անորոշ է դառնում:

Հայաստանում լրագրողների առաջնային արտոնություններն են՝ աղբյուրների պաշտպանությունը և լրագրողական աշխատանքին խոչընդոտելու արգելքը (Քրեական օրենսգրքի հոդվ. 164, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք): Տեղեկություններ ստանալու առնչությամբ լրագրողները հատուկ իրավունքներ չունեն: Սկզբունքորեն տեղեկություններ ստանալու իրավունք ունեն բոլոր քաղաքացիները («Տեղեկատվության ազատության մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքներ): ԶԼՄ-ների համար աշխատող լրագրողներին արտոնություններ տալու հարցը (օրինակ, ձեռնարկությունների պետական ռեգիստրից անվճար օգտվելը), ճիշտ է, քննարկվել է քաղաքական շրջանակներում, բայց հաջողությամբ չի պսակվել:

Աշխատանքային հանդիպման ժամանակ քննարկվեց նաև այն անձանց որպես լրագրող ճանաչելու հարցը, որոնք իրենց աշխատանքում շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում, բայց կարևոր ավանդ ունեն հանրային կարծիքի ձևավորման հարցում: Սակայն խմբում սրա վերաբերյալ կոնսենսուս չառաջացավ, քանի որ մտավախություն կա, որ անհստակ սահմանման պատճառով հասկացությունը կկորցնի իր հստակ ուրվագիծը, ու դրանով հնարավոր չի լինի պնդել, որ նրանք պետք է պաշտպանված լինեն:

Քննարկվեց օրենքով կամ լրագրողների միավորման կողմից սահմանված չափանիշների հիման վրա լրագրողի վկայական

տալու գաղափարը, բայց ի վերջո այն քննադատության արժանացավ:

Ապա քննարկումն անդրադարձավ խորհրդարանում գտնվող «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի նախագծին և դրանում տրված «լրագրող» հասկացության սահմանմանը: Նախագծում առաջարկվում է հետևյալ սահմանումը. «լրագրող՝ լրատվական գործունեություն իրականացնող անձ կամ լրատվական գործունեություն իրականացնողի հետ կնքած աշխատանքային կամ այլ պայմանագրի հիման վրա տեղեկատվություն փնտրող, ստացող, պատրաստող, տարածող անձ»:

Ըստ այդմ լրագրող են այն անձինք, ովքեր լուրեր են արտադրում և տարածում: Բացի այդ, պահանջվում է, որ առկա լինի լրատվամիջոցի հետ աշխատանքային պայմանագիր:

Հիմնականում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- արդյո՞ք սահմանման մեջ «լուրեր» հասկացության համար պետք է որոշվեն բովանդակային չափանիշներ և

- ի՞նչ կարգավիճակ պետք է ունենան ապագայում անկախ լրագրողները:

Գերմանական կողմը մտահոգություն հայտնեց, որ չափից լայն սահմանումը, որը չի հենվի «լուրի» ավելի մանրամասնեցված հասկացության վրա, գուցեև հնարավորություն ստեղծի որակի հատկանիշների (օրինակ, ճշմարիտ կամ կեղծ տեղեկություններ) հիման վրա կատարվող մեկնաբանության միջոցով որոշակի սահմանազատումներ կատարելու համար: Սակայն օրենքի նախագծի մշակմանը մասնակցածները վստահություն ունեն, որ դատարաններն իրենց դատական պրակտիկայում այդ հասկացությունը կմեկնաբանեն ՀՀ Սահմանադրության լույսի ներքո:

2. (Նյութական) պատասխանատվությունն առցանց ոլորտում

ա. Իրավիճակը Գերմանիայում և Եվրոպական Միությունում

Եվրոպական տարածքում (նյութական) պատասխանատվության հարցերը հիմնականում կարելի է բաժանել երեք կատեգորիայի, որոնք արտացոլվում են նաև հայ փորձագետների քննարկման մեջ: Խոսքը հետևյալի մասին է.

- ֆիզիկական անձանց (նյութական) պատասխանատվությունը, օրինակ, բռնության կոչ անելիս կամ, ասենք, անձին վիրավորանք հասցնելու դեպքում,

- այն Host-Provider-ների (նյութական) պատասխանատվությունը, որոնք բովանդակություն տեղավորելու հնարավորություն են ստեղծում,

- հեռահաղորդակցության այն ձեռնարկությունների (Access Provider) (նյութական) պատասխանատվությունը, որոնք, ապահովելով հաղորդակցության ցանցերի մատչելիությունը, հնարավոր են դարձնում պաշտպանված անձնական կամ հանրային բարիքների նկատմամբ խախտումներ:

Հայաստանում նման ձևով են գործում:

բ. Անանունության վերացում/անունը նշելու պարտավորություն

աա. Իրավիճակը Գերմանիայում

Գերմանիայում արդեն տարիներ շարունակ տարբեր կարծիքներ են արտահայտվում հեղինակի անունը նշելու պարտավորություն ներմուծելու վերաբերյալ: Մի կողմից որպես փաստարկ բերվում է offline հաղորդակցմանը նմանվող online հաղորդակցում ունենալու սկզբունքային շահագրգռվածությունը (այսինքն, երբ դիմացինդ քեզ հայտնի է կամ նրա անձը կարող ես պարզել), իսկ մյուս կողմից կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման մտավախություն կա, որը կարող է նույնիսկ հանգեցնել գրաքննության:

բբ. Իրավիճակը Հայաստանում

Հայաստանում նույնպես այս քննարկումներն արդեն որոշ ժամանակ է, ինչ ընթանում են: Շատ նման են նաև բերվող փաստարկները:

Սկզբում խոսվեց այն մասին, որ հեղինակի անունը նշելու պարտավորության ներմուծմամբ հնարավոր չի լինի կանխել հանցագործությունները: Դրա պատճառը հիմնականում այն է, որ քրեական հանցագործություն կատարելու մտադրության և առկայության դեպքում կան նման պարտավորությունը շրջանցելու տեխնիկական հնարավորություններ, այնպես որ հետագայում էլ հնարավոր չի լինի հետապնդել ինչպես այդ պարտավորությունը խախտողներին, այնպես էլ՝ իրավունքը անանուն եղանակով խախտողներին:

Մասնակիցներից ոմանք այն կարծիքին են, որ անանունության վերացումը կնպաստեր ժողովրդավարության համար էական նշանակություն ունեցող հասարակական ու քաղաքական քննարկումներին: Բանն այն է, որ գուցե հնարավոր լինի դրանով դադարեցնել ատելության խոսքի տարածումը: Մյուս մասնակիցները դրան հակադրում են այն, որ կարող է և առաջանալ կարծիքի արտահայտման ազատության ու բազմակարծության անհամաչափ սահմանափակման վտանգ: Բացի դրանից, մասնակիցները համակարծիք են, որ անպայման պետք է խուսափել անհատական և զանգվածային

հաղորդակցության նկատմամբ պետության վերահսկողությունից:

գ. Ատելության խոսք

աա. Իրավիճակը Գերմանիայում

Սոցիալական ցանցերում իրավունքի կենսագործման բարելավման մասին օրենքը (Netzwerkdurchsetzungsgesetz – NetzDG, անգլերեն տարբերակը կարելի է գտնել համացանցում հետևյալ հղումով՝ https://www.bmjv.de/SharedDocs/Gesetzgebungsverfahren/Dokumente/NetzDG_engl.pdf?__blob=publicationFile&v=2) հետապնդում է notice & takedown ընթացակարգի գործնական իրականացման բարելավման նպատակ: Օրենքը կարգավորում է, այսպես կոչված, սոցիալական ցանցերի, ինչպես օրինակ, Յություբի, Ֆեյսբուքի և Թվիթերի պատասխանատվությունը:

Նշված օրենքի §2-ը պարտավորեցնում է սոցցանցերում հարթակներով զբաղվողներին կես տարին մեկ հրապարակել մանրամասն հաշվետվություն այն մասին, թե իրենք ինչպես են վարվում հակահիրավական բովանդակության վերաբերյալ բողոքների հետ: Հաշվետվության մեջ նրանք այդ թվում պարտավոր են ներկայացնել, թե ինչ քայլերի են դիմում իրենց առաջարկի շրջանակում քրեորեն պատժելի գործողությունները խափանելու համար, թե ինչպես են գործում բողոք բերելու կառուցակարգերը, և թե որ չափանիշների հիման վրա են

արգելափակում և հեռացնում բովանդակությունը: Հաշվետվությունը պետք է տեղեկություններ պարունակի նաև համապատասխան աշխատանքային միավորների կառուցվածքի և անձնակազմի, ինչպես նաև ստացված և քննարկված բողոքների քանակի մասին:

Բացի դրանից, ծառայություն մատուցողները պարտավոր են հակահիրավական բովանդակությունը որոշակի ժամկետներում արգելափակել կամ հեռացնել և հեռացման դեպքում բովանդակությունը պահել ապացուցման նպատակներով (§3 NetzDG): Պետք է նաև նշանակել բողոքներ ընդունող լիազորված անձ (§5 NetzDG): Բացի այդ, նշված պարտավորությունները չկատարելու դեպքում սույն օրենքը պարունակում է ֆինանսական տուգանքի դրույթներ: Ներկայումս Գերմանիայի դաշնային կառավարությունը պլանավորում է պարտավորեցնել սոցիալական ցանցերին, որպեսզի վերջիններս հակահիրավական բովանդակության մասին տեղեկացնեն դատախազություններին:

բբ. Իրավիճակը Հայաստանում և քննարկում

Հայաստանում ևս Ֆեյսբուքն արդեն առանց օրենքով սահմանված կարգի արգելափակում է ատելության խոսք տարածող օգտատերերի հաշիվները և նրանց բովանդակությունը: Սա կարելի է մասնավորապես ցույց տալ այն օրինակներով, որոնք վերաբերում են ատելության խոսքին հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններում: ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը եկել է այն եզրահանգմանը,

որ դա հավանաբար իրականացվում է որոշակի բանալի-բառերի հիման վրա, ինչը ենթադրաբար տեղի է ունենում ավտոմատացված եղանակով:

Պարզվել է նաև, որ արգելափակվում է նաև ակնհայտորեն ոչ հակահիրավական բովանդակությունը: Յուրաքանչյուր դեպքում ծառայություն մատուցողն է որոշում կայացնում՝ ինչպես վարվել ատելության խոսքի հետ՝ առանց պետական մարմինների հետ խորհրդակցելու:

ՀՀ արդարադատության նախարարության՝ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծում փորձ է արվել սահմանել «ատելության խոսք» հասկացությունը՝ դրա հիման վրա համապատասխան քրեաիրավական միջոցներ ձեռնարկելու համար:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները քննադատել են այս նախաձեռնությունը, քանի որ դատարանների համար այն նախատեսում էր գնահատման չափից լայն ազատություն: Այդ իսկ պատճառով կառավարությունը հրաժարվեց այդ մտադրությունից:

Մասնակիցները համակարծիք են, որ Հայաստանում գերմանական իրավիճակի հետ համեմատելի կարգավորում հազիվ թե հնարավոր լինի: Դա կապված է նաև ու հատկապես հայկական գովազդի շուկայի համեմատաբար փոքր նշանակության հետ:

Խոսվեց նաև այն մասին, որ որոշ հեռարձակողներ փորձում են առցանց տիրույթում առաջացող այն կոնֆլիկտները, որոնք ատելության խոսքի են հանգեցնում, հրապարակայնորեն հարթել: Դրա հետ մեկտեղ հեռարձակողները փորձում են հրավիրել գլխավոր դերակատարներին՝ կոնֆլիկտի կարգավորմանը նկարահանման միջոցով նպաստելու համար:

Մեկնաբանություններում հայտնվող ատելության խոսքի վերաբերյալ ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հրապարակել է կարճ ուղեցույց, որի հիմքում դրված է Delfi AS-ն ընդդեմ Էստոնիայի (բողոք թիվ 64569/09) ՄԻԵԴ-ի վճիռը: Ուղեցույցը տեղադրված է Երևանի մամուլի ակումբի կայքում:

Հայ մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին տեղեկություն գերմանական հասարակական HateAid (hateaid.de) կազմակերպության մասին, որը համացանցում ատելության խոսքից տուժածներին անվճար էմոցիոնալ, տեխնիկական և իրավական օգնություն է առաջարկում:

3. Քաղաքական դերակատարների առցանց հաղորդակցություն

ա. Իրավիճակը Գերմանիայում / Եվրոպական միությունում

Պետությունն իրավունք չունի իրականացնել ռադիո և հեռուստահեռարձակում և զբաղվել մամուլին առնչվող

գործունեությամբ (պետության համապատասխան գործառույթային ազդեցությունից հեռու գտնվելու սկզբունք, համեմատիր ՄԻԵԴ-ի, Գերմանիայի դաշնային Սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի հետ) կամ փայատեր լինել այդ ընկերություններում՝ պետական ազդեցությունը խոչընդոտելու համար: Բացառություն է կազմում, օրինակ, խորհրդարանական հեռուստատեսությունը: Քաղաքական կուսակցությունները ևս կարող են որոշակի չափով մասնաբաժին ունենալ լրատվամիջոցներում:

Կառավարության կողմից հանրության հետ աշխատանքը ոչ միայն թույլատրելի է, այլ սահմանադրավաիրական տեսանկյունից՝ նաև անհրաժեշտ ժողովրդավարական հանրության շրջանում պետության հետ քաղաքացիների նույնականացումը աշխույժ պահելու համար: Թույլատրելի հանրային աշխատանքի շրջանակում կառավարությունը կարող է ներկայացնել իր քաղաքականությունը և միջոցառումները: Անհրաժեշտ է սահմանազատել այնտեղ, որտեղ պետության չեզոքության պարտավորությունը քաղաքական մրցակցության ժամանակ խախտված է: Քանի որ կամքի ձևավորումը պետք է տեղի ունենա ընտրող ժողովրդից դեպի պետական մարմիններ, այլ ոչ՝ հակառակը: Այս պահանջները հատկապես խիստ են ընտրապայքարի ժամանակ: Կառավարության կողմից հանրության հետ աշխատանքն այստեղ ունի որոշակի սահման, այն է, թե որտեղից է սկսվում ընտրական գովազդը:

Վիճելի է պետության ազդեցությունից հեռու գտնվելու սկզբունքի կիրառումը, երբ կառավարությունն ու վարչական ապարատը համացանցն օգտագործում են իրենց գործունեությունը ներկայացնելու համար: Կներկայացվեն և կքննարկվեն մի քանի վիճելի դեպքեր դաշնային և համայնքային հարթության վրա:

բ. Իրավիճակը Հայաստանում

Հայաստանում պետության կողմից ռադիո և հեռուստահեռարձակման կազմակերպումը և պետական մարմինների կողմից ռադիո և հեռուստաընկերություններում մասնաբաժին ունենալն արգելված է: Նույնը վերաբերում է կուսակցություններին:

Ռադիո և հեռուստահեռարձակման վերաբերյալ շատ սուղ քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ այս կարգավորումները, հակադրելով եվրոպական կարգավորմանը, գործում են բացառապես ավանդական հեռարձակողների համար: Բոլոր առցանց հեռարձակողները (այդ թվում՝ նաև մամուլը) այստեղ ներառված չեն:

Հայաստանի վարչապետը երկրի քաղաքացիների հետ հաղորդակցվում է ուղղակիորեն որոշ հարթակների միջոցով: Նախարարներն ու նախարարությունները ևս օգտվում են հաղորդակցման նույն հարթակներից:

գ. Քննարկում

Քննարկման ընթացքում հարցի վերաբերյալ տարբեր տեսակետներ հնչեցին, թե արդյո՞ք անհրաժեշտ է կարգավորել այդ գործելակերպը:

- Մասնակիցներն առցանց ոլորտում այդ գործելակերպի կարգավորումը վտանգավոր համարեցին: Հայաստանում անցյալում եղել է մի իրավիճակ, երբ որոշ քաղաքական և հանրային գործիչների համար գրեթե անհնար է եղել հանդես գալ հեռարձակվող լրատվամիջոցների եթերում: Հանրությունն իր դժգոհությունն արտահայտել է այդ երևույթի նկատմամբ, որի դեպքում վտանգվում էր կարծիքի արտահայտման ազատությունը:

- Քննարկման ընթացքում պարզ դարձավ նաև, որ կառավարության ղեկավարին Սահմանադրությամբ վերապահված չեն լիազորություններ ուղիղ հեռարձակումներով հաղորդակցվելու համար:

- Ուղիղ հեռարձակումների միջոցով կառավարության հաղորդակցությունը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում տեղեկություն ստանալ առաջին ձեռքից: Մասնակիցները սկզբունքորեն սա դիտարկեցին որպես ցանկալի երևույթ, ընդ որում ցանկություն հայտնեցին նաև որոշակի կարգավորման միջոցով տարանջատել

ծառայողական հաղորդակցությունը մասնավորից: Միաժամանակ անհրաժեշտ է նաև ուշադիր լինել, որ այդ կարգավորումները խիստ չսահմանափակեն այդ գործունեությունը:

• Աշխատանքային խմբից որոշ լրագրողներ ուշադրություն հրավիրեցին այն հանգամանքի վրա, որ պետական գործիչների առցանց ելույթներն ու գործունեությունը ԶԼՄ-ների համար մրցակիցներ են դառնում: Սակայն մյուս կողմից այդ ամենը հնարավորություն է տալիս ոչ բարդ և բոլորի համար հավասար պայմանով տիրապետել այդ տեղեկություններին:

• Այս կապակցությամբ նշվեց նաև, որ անհրաժեշտ է օրենսդրորեն կանոնակարգել կառավարության ճեպազրույցները, քանի որ տարբեր լրագրողների նկատմամբ առկա է անհավասար վերաբերմունքի վտանգ:

• Անհրաժեշտ է նաև հստակ սահմանել կառավարության կազմում գործող տարբեր մամուլի ծառայությունների աշխատակիցների գործառույթներն ու իրավասությունները:

Հավելված

Մեկնարկային միջոցառման ներկայացում

Արդյո՞ք հնարավոր է կարծիքի ազատ ձևավորում ԶԼՄ-ների թափանցիկության միջոցով

I. Թափանցիկություն՝ ԶԼՄ-ներում բաժնեմաս ունենալու փաստը հրապարակելու միջոցով

1. Կարգավորումներ Եվրախորհրդում և Եվրոպական Միության իրավունքում

2. Թափանցիկության կանոնները եվրոպական պետություններում՝ չափված Media Pluralism Monitor-ի միջոցով

3. ԶԼՄ-ներում պետական մարմինների բաժնետեր լինելու հարցը

   ա) ԶԼՄ-ներում քաղաքական կուսակցությունների մասնաբաժին ունենալը

   բ) Պետության ազդեցությունը հանրային հեռուստատեսության և ռադիոյի վրա

II. Թափանցիկություն՝ ԶԼՄ-ների վրա այլ ազդեցությունների հրապարակայնացման միջոցով

1. Լրագրողական գործունեության պահանջները մամուլի կանոնակարգերում

2. Թափանցիկության պետական կանոնները՝ ֆինանսական հատկացումները բացահայտելու համար

   ա) Թափանցիկությունը՝ որպես պետության ազդեցությունից պաշտպանվելու միջոց

   բ) Սոցիալական ցանցերում վճարովի բովանդակության թափանցիկությունը

III. ԶԼՄ-ների թափանցիկության վերաբերյալ յոթ թեզ

Մեդիա և հաղորդակցության իրավունքի ինստիտուտ, իրավագիտության ֆակուլտետ, դոկտոր Ֆրեդերիկ Ֆեռռ

WWU MÜNSTER

Լավ առցանց կառավարում. իրավական բարիքների պաշտպանությունն առցանց ոլորտում

Վերջին թարմացումը՝ 2 հունիսի, 2019թ.
Դոկտոր պրոֆ. Բերնդ Հոլցնագել, LL.M.



wissen.leben

itm

WWU MÜNSTER

Բովանդակություն

1. Սահմանադրություն՝ ԶԼՄ-ների ազատությունը
2. ԶԼՄ-ների իրավունքները
3. ԶԼՄ-ների ազատության սահմանները
4. Պատասխանատվություն Haftung für Intermediäre և պլատֆորմների համար
   a) NetzDG կարգավորման մոտեցումը
   b) NetzDG բովանդակությունը
   c) Գնահատում
5. Գերմանիայում վերջին դեբատներն ու հեռանկարները

WWU MÜNSTER

1. ԶԼՄ-ների ազատությունը հիմնական օրենքում

Հիմնական օրենք, հոդվ. 5, մաս 1

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր կարծիքը բառով, գրով և պատկերով ազատորեն արտահայտելու և տարածելու և առանց խոչընդոտների տեղեկանալու բոլորին մատչելի աղբյուրներից: Մամուլի ազատությունը և հեռուստատեսության և ռադիոյի ու կինոնկարի միջոցով տեղեկատվության ազատությունը երաշխավորվում են: Գրաքննություն տեղի չի ունենում:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդվ. 10, մաս 1

Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

- **ԶԼՄ-ների լիազորությունը՝** հանրային պահապան շան, հնարավոր է դարձնում վերահսկել կառավարության և տնտեսական ուժերի գործունեությունը

WWU MÜNSTER

2. ԶԼՄ-ների իրավունքները

- Բռնագրավման արգելք ոստիկանության և դատախազության համար
- Դատարանում ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք
- Պաշտպանություն խուզարկություններից
- Վարչական մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունք

WWU MÜNSTER

2. Մասնագիտական գաղտնիք կրողների ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք

Քրեական դատավարության օրենսգրքի §53

(1) Ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք ունեն նաև [...]

5. Այն անձինք, ովքեր մասնագիտության բերումով մասնակցում կամ մասնակցել են տպագիր գործերի, ռադիո և հեռուստատեսային հաղորդումների ... տարածմանը կամ կարծիքի ձևավորմանը ծառայող տեղեկատվական և կոմունիկացիոն ծառայությունների մատուցմանը:

Կետ 5-ում նշված անձինք իրավունք ունեն հրաժարվել ցուցմունք տալուց նյութերի հեղինակի, ինչպես նաև այլ տեղեկատու անձի, ինչպես նաև իրենց գործունեության կապակցությամբ իրենց տրված հաղորդումների, դրանց բովանդակության և իրենց կողմից մշակված նյութերի բովանդակության մասին: Սա տարածվում է միայն այն նյութերի, հաղորդումների վրա, որոնք օգտագործվում կամ մշակվել են խմբագրության համար: [...]

5

WWU MÜNSTER

2. Տեղեկություններ ստանալու իրավունք

4 Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա դաշնային հողի մամուլի մասին օրենք (մամուլի տեղեկատվական իրավունքը)

(1) Գերատեսչությունները պարտավոր են **մամուլի ներկայացուցիչներին տրամադրել իրենց հանրային լիազորությունների կատարմանը ծառայող տեղեկություններ**

- Վերաբերում է նաև բլոգերներին, եթե նրանք լրագրողական գործունեություն են ծավալում (Մանհայմի վարչական վերաքննիչ դատարան)

6

WWU MÜNSTER

2. Ինքնակարգավորում՝ Վարքագծի կոդեքս

presserat

Բարեխղճության պարտականություններ	Կետ 1: Ճշմարտացիություն և հարգանք մարդու արժանապատվության նկատմամբ Կետ 2: Բարեխղճություն Կետ 3: Շտկում Կետ 4: Հետազոտության սահմաններ
Անձի իրավունքներ	Կետ 8: Անձի իրավունքներ Կետ 9:Պատվի պաշտպանություն Կետ 13:Անմեղության կանխավարկած
Տարանջատման պահանջ և արտոնություններ	Կետ 7: Գովազդի և խմբագրականի տարանջատում Կետ 15: Արտոնություններ
Ոչ պատշաճ ներկայացում	Կետ 11: Սենսացիոն հաղորդագրություններ, անչափահասների պաշտպանություն Կետ 14: Բժշկությանը վերաբերող տեղեկատվություն
Խտրականություն և բարոյական մոտեցում	Կետ 10: Կրոն, աշխարհայացք, բարոյականություն Կետ 12: Խտրականություն

- **«Մամուլի կոդեքս»**
- Մամուլի և առցանց ԶԼՄ-ների ինքնապարտավորեցում
- Գերմանական Մամուլի խորհրդի կողմից վերահսկողություն ինքնապարտավորեցման դեպքերում
- Օրենքով սահմանված կիրառում մասնավոր ռադիոյի և հեռուստատեսության նկատմամբ *«ճանաչված լրագրողական սկզբունքներ»*

7

WWU MÜNSTER

3. ԶԼՄ-ների ազատության սահմանները

Հիմնական օրենք, հոդվ 5, մաս 2

Այս իրավունքները սահմանափակվում են ընդհանուր օրենքների դրույթներով (*օր. Անվտանգության և հասարակական կարգ ու կանոնի մասին օրենքներ)*, անչափահասների պաշտպանությանը ծառայող օրենքների դրույթներով և անձի պատվի պաշտպանությունը կարգավորող օրենքներով (*մասնավորապես ընդհանուր անձնական իրավունքների պաշտպանություն)*:

- **Ընդհանուր օրենքներ, օր.՝** Անվտանգության և հասարակական կարգ ու կանոնի մասին օրենք
- **Անձի պատիվ պաշտպանող օրենքներ՝** հատկապես ընդհանուր անձնական իրավունքի պաշտպանություն

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդվ. 10, մաս 2 Europäische Menschenrechtskonvention

Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու (…):

8

WWU MÜNSTER

4. Համացանցում ֆեյք նյուզի դեմ պայքարի մասին օրենք՝ միջնորդների և հարթակների պատասխանատվությունը

WWU MÜNSTER

4. ա) Համացանցում ֆեյք նյուզի դեմ պայքարի մասին օրենքի «աստառը»

- Սովորական դեպք՝ միջնորդների արածը պատճառ է երրորդ անձանց հակաիրավական բովանդակության համար (օժանդակություն): Բացառություն էլ. գործառնական շրջանառության մասին դիրեկտիվով՝ իմանալու դեպքում պետք է հեռացվի, բայց չկա ex-ante վերահսկողության պարտականություն Notice and Take down կանոն:
- Բայց անգամ այս՝ նորմալ ստանդատը նվազեցնող կանոնն իր ժամանակին պրակտիկայում թերի իրագործվեց:
  - Քրեորեն պատժելի բովանդակությունների հեռացում (*Օրենքի հիմնավորմամբ*)՝
    - 1 % Twitter
    - 36 % Facebook
    - մոտ 90 % Google
- **Լիազորություն**
  - Notice-and-Take-Down մոտեցման ավելի լավ իրականացում
  - Չթույլատրել, որ որոշակի խմբեր (օր.՝ կանայք) հանրային հաղորդակցման տարածքից դուրս մղվեն

WWU MÜNSTER

4. բ) Համացանցում ֆեյք նյուզի դեմ պայքարի մասին օրենքի բովանդակությունը՝ կիրառման ոլորտը

- Օրենքը գործում է հեռարձակման ծառայություններ մատուցողների համար, ովքեր շահույթ ստանալու նպատակով համացանցում գործարկում են հարթակներ, որոնք կոչված են նպաստելու այն բանին, որ օգտատերերը ցանկացած բովանդակություն կիսեն այլ օգտատերերի հետ կամ դրանք մատչելի դարձնեն հասարակայնությանը (սոցիալական ցանցեր):
- *Չի վերաբերում՝* լրագրողական եղանակով ձևավորված առաջարկներին, առցանց խաղերին, վաճառքի հարթակներին,
- *Չի վերաբերում՝* Գերմանիայում համացանցում գրանցված երկու միլիոնից պակաս օգտատերեր ունեցող սոցիալական ցանցերին:
  - Նպատակը՝ տևական մեծ ներգործություն ունեցող սոցիալական ցանցեր
  - Դուրս են մնում որևէ կայք պարզապես այցելած անձինք

11

WWU MÜNSTER

4. գ) Համացանցում ֆեյք նյուզի դեմ պայքարի մասին օրենքի բովանդակությունը՝ հակաիրավական բովանդակության հեռացում

- **Պաշտպանության երեք ուղղություններ.**
  - Ժողովրդավարական իրավական պետության պահպանումը (նացիստական խորհրդանիշների օգտագործումը՝ ՔրԴատՕ §86a)
  - Հասարակական կարգ ու կանոնի պահպանումը (օր. Ահաբեկչական միավորումների արգելք՝ ՔրԴատՕ §129 StGB և ժողովրդի մի մասի գրգռումը մյուս մասի դեմ՝ ՔրԴատՕ §130)
  - Անձի պատվի պաշտպանությունը (վիրավորանք՝ ՔրԴատՕ §185)
- Անհապաղ տեղեկանալ ակնհայտ հակաիրավական բովանդակության մասին և հեռացնել **24 ժամվա ընթացքում**
- Որպես կանոն անհապաղ հեռացում **7 օրվա ընթացքում** (սովորական) հակաիրավականության դեպքում
- Հեռացված բովանդակության պահպանում 10 շաբաթվա ընթացքում (ծառայում է քրեական հետապնդմանը)
- **Մասնակիցներին տեղեկացնել** որոշման կամ բողոքի մասին

12

WWU MÜNSTER

4. գ) Համացանցում ֆեյք նյուզի դեմ պայքարի մասին օրենքի բովանդակությունը՝ ինքնահսկողության խթանում

- Կարգավորված ինքնակարգավորման համակարգին մասնակցելու խթանում.

  Եթե **կարգավորված ինքնակարգավորման համակարգը** գալիս է այն եզրահանգման, որ բովանդակությունը հակաիրավական չէ, ապա սոցիալական ցանցը կարող է այն չհեռացնել: Այդ դեպքերում տուգանք սահմանող մարմինը չի կարող տուգանքի որոշումը հիմնավորել այն բանով, որ համապատասխան բովանդակությունը եղել է իրականում հակաիրավական և պետք է հեռացվեր:

  (Compliance –ի պահանջները կատարված են)

13

WWU MÜNSTER

4. գ) Համացանցում ֆեյք նյուզի դեմ պայքարի մասին օրենքի բովանդակությունը՝ երկրում հանձնման համար լիազորված անձը

- Իրավունքի իրացման գլխավոր խնդիրը՝ տեղում գործընկերոջ բացակայությունն էր
- Լիազորված անձին պետք է հնարավոր լինի հեշտ ճանաչել, անմիջապես հասնել, նա պետք է միշտ հասանելի լինի
- Անկախ այն բանից, թե որտեղ է նստավայրը՝ երկրում, թե արտասահմանում
- Քրեական հետապնդման ազգային մարմինների հարցումներին արձագանքել 48 ժամվա ընթացքում

14

WWU MÜNSTER

4. դ) Գնահատում

- **Compliance** կաղապարի ընտրություն տնտեսական իրավունքից, չընդլայնել քրեական իրավունքը
- **Overblocking-**ի վտանգ բարձր դրամական տուգանքների պատճառով (50 միլիոն եվրո)
- Հակաիրավականության մասին նախնական որոշումը սպառնում է Բոննի Բաժնետիրական ընկերության համար գերծառնաբեռնվածություն առաջացնել
- **De lege ferenda**.
  - **Put-Back** ընթացակարգի ներմուծման անհրաժեշտություն՝ շահերի հավասարակշռումը բարելավելու համար

15

WWU MÜNSTER

4. դ) Ցանցերի կիսամյակային հաշվետվություններ (2018/1 և 2)

- **Համբուրգ և Շլեզվիգ-Հոլշթայն երկրամասերի ԶԼՄ-ների հարցերով գերատեսչության եզրահանգումները**
  - Մեծացել է հեռացման արագացումը, ստացված բողոքների մոտ 30%-ը լուծվում է
  - Հեռացումներ՝ հիմնականում վիրավորանքի և ժողովրդի մի մասին մյուսի դեմ գրգռելու պատճառով
  - Այդպես էլ չի իրականացվում Put-Back ընթացակարգը
- **Արդարադատության հարցերով դաշնային գերատեսչությանն ուղղված բողոքներ**
  - 714 (2018թ.)
  - Կանխատեսվում էին 25 000 դեպքեր տարվա ընթացքում
  - Սա խոսում է, ի թիվս այլ բաների, այն մասին, որ ցանցերն արագ են անդրադառնում բողոքներին
- **Արդարադատության հարցերով դաշնային գերատեսչությունը պահանջում է 2 միլիոն եվրոյի տուգանք Facebook-ի դեմ** (վճիռը ուժի մեջ չի մտել)
  - Մեղադրանքը՝ բողոքների մասին տվյալներն ամբողջական չեն, դիմելու ձևաթերթը միանգամից չի երևում

16

WWU MÜNSTER

5. Հեռանկարներ

- Ատելության հաղորդակցություն (Լյուբքեի գործը)
- Ազդեցիկ անձանց դերը
- Հասարակայնության հատվածների ինտեգրում
- Ապատեղեկատվություն
- Social Bots (սոցիալական ռոբոտներ)
- Մեծ հնգյակի (Big Five) իշխող դիրքը շուկայում



- Ռեզոյի «ՔԴՄ քայքայումը» տեսագրությունը YouTube բեռնվել է Եվրոպական խորհրդարանի ընտրություններից կարճ ժամանակ առաջ
- 15 միլիոն դիտում
- Դեբատներ ազդեցիկ անձանց դերի մասին

www.youtube.com/watch?v=4Y1lZQsyuSQ

17

WWU MÜNSTER

Շնորհակալություն ուշադրության համար

Institut für
Informations-, Telekommunikations- und
Medienrecht (ITM)
an der Westfälischen Wilhelms-Universität
Münster

Abteilung II
Prof. Dr. Bernd Holznagel, LL.M.

Leonardo-Campus 9
D-48149 Münster

Tel: +49 251 83 9038640
Fax: +49 251 90 38644

E-Mail: holznagel@uni-muenster.de

18

Hochschule
Bonn-Rhein-Sieg

Լրագրողական էթիկա, մեդիա էթիկա, տեղեկատվական էթիկա

Նորմատիվ հիմունքները և դրանց իրականացման հնարավորությունը (անհնարինությունը)

Prof. Dr. Hektor Haarkötter

Hochschule
Bonn-Rhein-Sieg

Այսօրվա ծրագիրը

1. Լրագրողական, տեղեկատվական, մեդիա էթիկա՝ դասակարգում
2. Էթիկայի նորմեր լրագրողների համար
3. Մեդիայի էթիկան որպես էթիկա բոլորի համար
4. Հատուկ մարտահրավերներ տեղեկատվական դարաշրջանում

Hochschule Bonn-Rhein-Sieg

1. Լրագրողական, տեղեկատվական, մեդիա էթիկա՝ դասակարգում

Hochschule Bonn-Rhein-Sieg

2. Լրագրողական էթիկա

- Ինքնահսկողություն՝ Գերմանական մամուլի խորհուրդ
  - Պարիտետային կազմ
  - Մամուլի կոդեքս
  - Նկատողություններ

presserat

- Նորմերի վերահսկողություն օրենքով
  - Հանրային հեռուստառադիոյի մասին օրենքներ
    Հեռուստառադիոյի խորհուրդներ
  - Մասնավոր հեռուստառադիո՝ մեդիայի մասին օրենքներ
    Մեդիայի հարցերով հանձնաժողովներ
- Նորմերի վերահսկողություն քաղհասարակության կողմից
  - ՀԿ-ներ
  - Watch-Blog-ներ

«Հրապարակախոսական սկզբունքներ» (Մամուլի կոդեքս)

<u>Վեճեր</u>

- Կետ 3: «Հետազոտության սահմանները»
  «Անձնական տվյալներ, լուրեր, տեղեկատվական նյութեր և նկարներ ձեռք բերելիս չի կարելի կիրառել անազնիվ մեթոդներ»:

- Կետ 12: «Խտրականություն»
  «Որևէ էթնիկական խմբին պատկանելը, որպես կանոն, չպետք է հիշատակվի, եթե առկա չէ հանրային շահ»:

- Կետ 15: «Արտոնություններ»
  «Չի կարելի նվերներով, հրավերներով կամ զեղչերով ազդեցություն գործել հետաքննությունների և հաղորդագրությունների վրա, խոչընդոտել կամ անգամ խափանել դրանք»:

1. Լրագրողական էթիկա

A Մասնագիտական էթիկայի ոլորտում այլ ինքնակարգավորման մարմիններ՝

- PR գերմանական խորհուրդ (DRPR)
  PR վարքագծի կոդեքս՝ *Code de Lisbonne*

- Գովազդի գերմանական խորհուրդ
  Խորհուրդի հիմնարար կանոններ

Բացեր

- Առցանց լրագրողներ
- Բլոգների ոլորտը
- YouTube-ի մասնակիցները

YouTuber Rezo: „Zerstörung der CDU“

Hochschule
Bonn-Rhein-Sieg

3. Օգտատերերի էթիկա՝ էթիկա բոլորի՞ համար

Օգտատերը որպես բարոյականության դաշտի դերակատար՝

- Ակնկալում է կարևորություն = գործողությունների կարևորություն
- Գնելու որոշումն ազդում է մասնագիտական վարքագծի վրա
- Օգտատերը որպես արտադրող = prosumer կամ produser
  - ո՞ր կանոններն են գործում նրա համար

Hochschule
Bonn-Rhein-Sieg

4. Հատուկ մարտահրավերներ տեղեկատվական դարաշրջանում

- Մեդիա ոլորտի նոր դերակատարներ՝ intermediar-ներ
- Նոր մեդիա մասնագիտություններ՝ app ստեղծողներ, թվային ծառայություններ մատուցողներ
- Դերերի փոփոխություն՝ դեզինտերմեդիացիա
- Քաղաքական գործողությունների կարիք՝ «խմբագրող հասարակություն» (Pörksen)
- Սոցիալական մեդիան որպես մարտահրավեր՝ կոմենտարներ, shitstorm, ֆեյքեր
- Մանկավարժական խնդիր՝ netiquette, անչափահասների պաշտպանություն, լրատվական ձեռնահասություն

Hochschule
Bonn-Rhein-Sieg

Շնորհակալություն ուշադրության համար

Կոնտակտային տվյալներ՝
Prof. Dr. Hektor Haarkötter
Hochschule Bonn-Rhein-Sieg
Rathausallee 10
53757 Sankt Augustin
Germany
hektor.haarkoetter@h-brs.de
facebook.com/hektor.haarkoetter
@medienhektor